


ԷՋՄԻԱԾԻՆ



1967

DA. 8483.

ՌԵԺ
ԻԳ ՏԱՐԻ


Յոնիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Զ


1967





Ր Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	էջ
ՎԵՂՔԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԻ—«Յիշատակն արդարոց»	3
ԽՄՔԱՆԻՐԱԿԱՆ—Պատմական այցելություն	4
Բարձրագույն ուսուցչական տնային տնային Ս. Կիրիլ պատրիարքի Մայր Աթոռում	8
Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տունը	22
Սահակապետների ձեռնարկություն	24
Տաճար Կիրիլիայի զանգակալի եկեղեցու պատմություն	26
ՄԱՅՐ ԱԹՐՈՒՄ	30
Արևմտյան եկեղեցային հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ դեր	
ա. Սեբեդյան առաջնորդական Մանուկյանի Մայր Աթոռում	32
ՈՓՑՈՒՄԱՆԻՔ ԿՅԱՆՔ	
2. Բ. Ը. Միսրյան հիմնադրամի ժողովը	34
«Գեղարդ» կրթական-ագրարային ճյուղի ամսագիր	35
ԵՂԻՐԱՐԻ ԳՈՂԱՆՃՅԱՆ—Ռուսաբայի զատապարտությունը	37
2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին ճեպ	39
ՍՔՈՂԱՆՋՅԱՆ—Մեր ձեռագրական կուրսուսուցիչները	50
ՍԵՐՈՒՄ ԲԱՐՍԵՆԻՐԱՅԱՆ—Նորանայտ առձեռնագրություն Հաղորդականություն	58
ԼՈՒՐԻՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	62



ԽՄՔԱՆԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ
«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒ ԽՄՔԱՆԻՐՈՒԹՅԱՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.
 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.

ՀՐԱՄԱՆԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍԺԸ

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԳԱՐՈՑ»

Սայր Աթոռ Ս. Էջմիածին հոգեկան ջերմութեամբ կ'ողջունէ պայծառ յիշատակը Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Տ. Բարգէն Կիլիկեան Կաթողիկոսի, անոր ծննդեան հարիւրամեակի առիթով:

Հոգեւորայ Կաթողիկոսը մեր դայաշրջանի Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ քարծուցք մը հանդիսացաւ, ոգեկան իմացական փարոս մը, որ իր գործունէութեան ընթացքին լոյս և մխիթարութիւն տալու իր շուրջ, իրեն ներշնչեալ և զիտուն հոգևորական, իբրև Հայ Եկեղեցիի վառասկաւոր մշակ ու հզոր նկարագիր, իբրև ժողովուրդի դատարար և հմուտ հրապարակագիր, իբրև Կիլիկեան Աթոռի լաւագոյն աւանդներուն նախամնախնդիր պահապան և իբրև հաւատարիմ և նուիրեալ զաւակը Սուրբ Էջմիածնի:

Այսպէս է, որ Տանն Կիլիկիոյ Աթոռին հաւգուցեալ Գահակալը ամուր կանգնած կը մնայ մեր երանաշնորհ Հայրապետներու շարքին:

Այս օրերուն մահաւանդ, ի տես սկիւղի հայ եկեղեցական կեանքի պառակտեալ վիճակին, առանձն պայծառութեամբ կը շողայ հաւգուցեալի անճատութիւնը, անոր օրինաւոր և ուխտաւոր արի հոգին:

Արդարև, Բարգէն Կաթողիկոս եղաւ և մնաց մինչև իր կեանքի վերջը, առաքեալը մեր եկեղեցւոյ միութեան և մէկութեան նուիրական սկզբունքին, Սուրբ Էջմիածնի Աստուածային օրհնութեան ներքև: Ինչքան յուզիչ է և ինչքան թելադրական յիշել, թէ Անթիլիասի միտոնօրհնութեան սուրբ պահուն, իր մաքուր ձեռքով, Սուրբ Էջմիածնէն քերտած միտոնը խառնեց օրհնող միտոնին, ի նշան անքակտելի միութեան ու եղբայրութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

Լոյս և օրհնութիւն և խաղաղութիւն Բարգէն Կաթողիկոսի արդար հոգիին: Թող անթառամ մնայ անոր բարի յիշատակը մեր եկեղեցւոյ և մեր սրտերուն մէջ:

«Նստատուան եղբորս յիշատակի սրբութեան նորա» (Սաղմ. ԳԶ.):

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին. զի գործք իրեանց չոգան զհետ նոցա» (Յայտնթ. ԺԴ. 13): Ամէն:

Վահագն Ս.

26 մայիս 1967

Սայր Աթոռ Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

* Հառաջիկա տարի լրանում է Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկահիշատակ Ս. Տ. Բարգեն Կաթողիկոսի ծննդեան հարիւրամեակը:

Այս առթիւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ջերմորեն ոգեկոչելով մեծանուն եկեղեցականի բարի յիշատակը, գրի է առել օրհնութեան սույն խոսքը:



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Յ Ց Ե Լ ՈՒ Թ Ց ՈՒ Ն

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական, սիրալիր հրավերով, 1967 թվականի հունիսի 2-ին՝ սրբաթ օրը, Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Նոյին Արքու-թյուն Տ. Կիրիլ սրբազան պատրիարքը՝ իր շքախմբի անդամներով:

1958 թվականի հունիսի առաջին այցելությունից հետո, Նոյին Արքություն այս երկրորդ այցելությունն էր Մայր Աթոռ ս. Էջմիածին, երկու տարի անց այն պատմա-կան այցելությունից, որը Հայոց Հայրապե-տը կատարել էր Բուլղարիա, 1965 թվակա-նի հուլիսին՝ սիրալիր հրավերով Տ. Կիրիլ պատրիարքի:

Մայր Աթոռում պատմական օրեր եղան հունիսի 2—6 օրերը, երբ երկու հայրապետ-ները հջման սուրբ սեղանի առաջ, եղբայրա-կան սիրով, ողջագործեցին և իրենց ա-ղոթքներով առավել ևս ամրապնդեցին բա-զում դարերի հղյուխություն միմյանց դրած Հայց. առաքելական և բուլղար օրթոդոքս եկեղեցիների և եղբայրական երկու ժողո-վուրդների բարեկամական կապերը՝ քրիս-տոնական միության ոգով հետագա առա-վել ևս սերտ համագործակցության ցանկու-թյամբ:

Այս իմաստով, արդարև, հուզիչ ու պատ-մական եղան բուլղար և հայ հոգևոր պետե-րի ուղջագործումները: Նրանց եղբայրական համբույրը մի անգամ ևս միմյանց դրած եր-կու եկեղեցիների և ժողովուրդների սիրո և բարեկամության հոգեկան կապերը:

Պաշտոնական առիթներով եկեղեցիներ-ում, սեղանների շուրջ, այցելությունների և

ուխտագնացությունների ժամանակ արտա-սանված ելույթները խանդավառ ու ջերմ մթնոլորտում, վերածվեցին քրիստոնեական եղբայրության սրբազան սու-ի և հոգևոր դաշինքի:

«Երկու պատրիարքները,—ասվում է հու-նիսի 6-ին, առավոտյան ժամը 10-ին վեհա-րանում համատեղ առորագրված պաշտոնա-կան հաղորդագրության մեջ,—ջերմ սիրով աղոթեցին առ Աստված, որ իրենց գլխավո-րած երկու քույր եկեղեցիները անսասան ու ծաղկյալ մնան ու իրենց հոգևոր սուրբ առա-քելությունը շարունակեն իրենց ժողովուրդ-ների ծնունդ, ժողովուրդներ, որոնք մեր օրե-րին աճում ու զարգանում են խաղաղ ու մե-ծառնեց մվաճումներով՝ իրենց վերածնված ու մոր կյանքի կոչված հայրենիքների պայծառ երկնքի ներքև»:

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պետի ս. Էջ-միածին կատարած այցելությունը մեր օրե-րին, մեծ ճիգերի այս շրջանին, նշանակալից է, երբ աշխարհի թուր ժողովուրդների միջև ստեղծվել է մերձեցման, փոխադարձ գնա-հատումի, հասկացողության բարեկամաստ մթնոլորտ, և երբ քրիստոնյա եկեղեցիները ևս, արդի կյանքի մեծ հրամայականի առաջ, դուրս են եկել իրենց դարավոր մեկուսա-ցումից, մտնում են միմյանց, փորձում են լեզու գտնել, բեղմնավոր հարաբերություն-ների մոր ուղիներ որոնել, միասին աղոթել և աշխատել հավաքական ճիգերով, էկումե-նիկ ոգով՝ հաճում ժողովուրդների ի Բրիս-տոն եղբայրության և աշխարհի խաղաղու-թյան:

Այս մտածումների լուսսի տակ, մեր օրերում և ժամանակակից եկեղեցական կյանքի պայմաններում, միջեկեղեցական նման հանդիպումներ և շփումներ օգտակար են և անհրաժեշտ:

Ահա թե ինչու բուլղար օրթոդոքս եկեղեցու սրբազան պատրիարքի այցելությունը Հայք. առաքելական եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին սրտագին առիթ էր ստեղծում մի նոր և ավելի բարձր աստիճանի բարձրացնելու երկու եկեղեցիների, ժողովուրդների և մշակույթների եղբայրական բարեկամությունը:

«Երկու հայրապետները մի անգամ ևս հայտնեցին իրենց համոզումը, թե քրիստոնյա բոլոր եկեղեցիների մեկտեղումը, փոխադարձ ճանաչումը և համագործակցությունը պետք է առավել խորանան և հետզհետե առավել զորավոր գործոն հանդիսանան աշխարհում և ժողովուրդների կյանքում, սուրբ Ավետարանի ճշմարտությունների և պատգամների լուսսի տակ: Հատկապես աշխարհի խաղաղությունը պահպանելու գործում անհրաժեշտ պետք է նկատել բոլոր եկեղեցիների և հավատացյալների միական ու անվերապահ աշխատանքը, իրեն մեր օրերի աստվածահաճո առաջնահերթ գործ» (Հաղորդագրություն):

Մեր պատմության մեջ առաջինը Մովսես Խորենացին է, որ վկայում է բուլղար ժողովրդի մասին (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 70): Հայ ժողովուրդը սիրել է բուլղար հողն ու ժողովրդին և կապվել նրանց հետ ջերմ սիրով ու հավատքով:

Անցյալում բուլղար և հայ ժողովուրդների դարավոր համատեղ կեցությունը, նրանց պատմական ճակատագրի հանգիստությունն ու ընդհանրությունը, հանուն ազատության և պայծառ գալիքի նրանց միաձագործական, հերոսական պայքարները և մեր օրերում երկու ժողովուրդների հավաքական ջանքերն ու տքնությունները՝ իրենց նոր հայրենիքի բարգավաճման, բարօրության համար, ստիպում էին երկու հայրենանվեր և խաղաղասեր հայրապետներին, մտահոգված Վիետնամի և աշխարհի սղ մասերում սպառնացող պատերազմի վտանգից, միասին աշտնելու և կոչ անելու «բոլոր եկեղեցիներին և բոլոր բարի կամքի տեր մարդկանց, որպեսզի նրանք միանան՝ պաշտպանելու համար խաղաղության սրբազան դատը, ընդդեմ պատերազմ սանձազերծող չար ուժերի, որոնք այնքան ոճիրներ ու ավերներ են գործում Վիետնամում ամեն օր, ամեն ժամ՝ բնաջինջ անելով մի անմեղ ժողովուրդ,

և որոնք այս օրերին իսկ նոր փորձեր են կատարում պատերազմի կրակը տարածելու Մերավոր Արևելքի երկրների վրա:

Ամեն պատեյազմ մատումն իսկ է Զրիստոսի Ավետարանի» (Հաղորդագրություն):

Բուլղար պատրիարքի այցելությունը Մայր Աթոռ և Սուլետական Հայաստան հանդիսացավ գեղեցիկ առիթը հայ եկեղեցու, ս. Էջմիածնի, նրա Կահակալի ու մեր վերածնված մայր հայրենիքի հոգևոր, մշակութային, տնտեսական նվաճումների մասին անվերապահ հարգանքի և սիրտ արտահայտություններին:

«Առաջին անգամ չէ, որ գտնվում են Հայաստանի մեջ, և առաջին անգամ չէ, որ ս. Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի լուսավոր շողերն իմ հայացքը լուսավորում են:

Ամենայն Հայոց կաթողիկոսությունը միշտ մեծ հեղինակություն է վայելել: Դրա պատճառները շատ պարզ են: Այսօր էլ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, իր իմաստությամբ և սիրով, ստեղծում է հոգևոր միասնություն իր ժողովրդի ծոցում ինչպես արևաշող Հայաստանում, այնպես էլ աշխարհում ցրված հայության միջև»,—ասաց Տ. Կիրիլ սրբազան պատրիարքը հունիսի 4-ին, գահասարհում արտասանած իր ճառի մեջ:

Նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքը իր ելույթների և արտահայտությունների մեջ վկայում է նաև իր հարգանքի և սիրտ մասին դեպի հայ ժողովուրդը և նրա վերածնված հայրենիքը:

«1958 թվականին գեղազվարթ մայիս ամսըվա մեջ ես հնարավորություն ունեցա տեսնելու շատ բան: Ասկայն ինչ որ ինձ վրա անպատմելի տույժություն գործեց այն ժամանակ և այժմ. դա հայ ժողովրդի ստեղծագործական և մշակութային եռանդն է ինչպես կյոնական, այնպես էլ մշակութային և տնտեսական բնագավառում:

Կեցցեն հայ ժողովուրդը, նրա կառավարությունն ու Հայաստանի ստեղծագործական ուժերի, բազմակողմանի վերելքի աշխատավորները»,—եզրակացնում էր Տ. Կիրիլ պատրիարքը հրաժեշտի սեղանին:

Արդարև, տոնական խանդավառությամբ օրեր ավրեց Մայր Աթոռը՝ բուլղար օրթոդոքս եկեղեցու պես, Ն. Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքի պատմական այցելությունը:

1967 թվականի հունիսի 2—6 օրերը մի անգամ ևս նվիրագործեցին հայ և բուլղար եկեղեցիների և ժողովուրդների մեր ապրած ժամանակաշրջաններում քրիստոնեական եղբայրությունն ու դարավոր բարեկամությունը:



ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ,
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԶԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ժամանում

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով հունիսի 2-ին՝ ուրբաթ օրը, Մայր Աթոռ է ժամանում րուզար օրթոդոքս եկեղեցու պետ, նորին Սրբութիւն Տ. Կիրիլ պատրիարք՝ փոխադարձելով Հայոց Հայրապետի 1965 թվականի հունիսին Բուլղարիա կատարած այցելութիւնը:

Նորին Սրբութիւն շքախմբի կազմում էին Ալիվենի միտրոպոլիտ տ. Նիկսդիմ աբեղապետ, տ. Իոան վարդապետը և դուկտ. Վասիլի Վիրիանով սարկավագ-քարտուղարը:

Բուլղար եկեղեցու պետին ուղեկցում էին Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի հայոց թեմի առաջնորդ ա. Պարզե եպս. Դեմրովանը, Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ Օճեիկ Ասլանյանը:

Երեկոյան ժամը 18-ին ինքնաթիւր երկար և հանգիստ թռիչքից հետո իջնում է Երևանի օդանավակայան:

Քույր եկեղեցու հոգևոր պետին անձամբ դիմավորում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված իր շքախմբով, որի կազմում են լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, ուխտավորաբար Մայր Աթոռում գրտնըմող տ. Սեբովրե արքեպիսկոպոսը, տ. Հովսիկ, ա. Վահան, տ. Մաշտոց եպիսկոպոսներ:

րը, տ. Ներսես Ժ. վարդապետը, ա. Մուշեղ, տ. Նարեկ, տ. Դեմրզ վարդապետները, երեւիւնի թեմի քահանայից դասը, Դեմրզայնց նազեւր խորհրդի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, մայրավանքի պաշտոնեւթիւնը և հաւատացյալների բաղմութիւնը:

Բուլղարիայի սրբազան պատրիարքի ժամանումը ողջունում են նաեւ Հայկ. ՍՍՀ Միւնիստրների սովետին աղընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դաւլաւյանը, տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամութիւն և մշակութային կապի հայկական ընկերութիւն նախագահ Ռ. Պաւստմյանը, սովետաբուլղարական բարեկամութիւն ընկերութիւն հայկական բաժանմունքի նախագահ, գրող Դ. Աւետեցը և այլ պաշտոնական անձինք:

Ինքնաթիւի կամրջակի վրա Ն. Սրբութիւն Տ. Կիրիլ պատրիարքի հայտնվելը դիմավորվում է ջերմ ծափահարութիւններով:

Հայոց աշխարհը բարի գալուստ է մաղթում եղբայրական րուզար ժողովրդի հոգեւոր պետին:

Հուզիլ է ողջագործման պահը, երբ երկու բուլղ եկեղեցիների պետերը՝ Տ. Կիրիլ պատրիարքը և Հայոց Հայրապետը գրկախառն ողջագործվում են, և նրանց ի Քրիստոս սիրո և միութիւն համըլրի մեջ մի անգամ ևս նրվիրագործվում են հայ և րուզար եկեղեցի:



Ն. Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

ների և ժողովուրդների բարեկամությունն ու հողերը, սնահույժային կապերը:

Այնուհետև մեքենաների շարասյունը ուղղվում է դեպի ս. Էջմիածին:

Մայր տաճարում

Մայր տաճարի զանգերը զողանջում են հանգիսավոր ու տոնաշախ:

Երկու հայրապետները ամպհովանու տակ, եկեղեցական թափոցով ու «Հրաշափառ»-ով առաջնորդվում են Մայր տաճար, ուր մուտք են գործում «Ուրախ չեր ս. եկեղեցի» շարականի հնչյուններով և արքայ:

Իջման ս. սեղանի առաջ երկու հայրապետները իրենց երջյապագությունն ու աղոթքն են մատուցում և ապա առաջնորդվում ատյան: Չախակողմյան դասում բուզար եկեղեցու պատի համար պատրաստվել է մասնավոր դահլ:

Տոնականորեն զարդարված և լույսերի մեջ կրկնակի պայծառացած Մայր տաճարի կամարների տակ թնդում է Փառք քեզ, Տէր Աստուած՝ քարոզ-մաղթանքը:

Հայոց Հայրապետը իր զահի վրայից ողջունի ու բարիգալստյան եղբայրական իր խոսքն է ուղղում բուզար օրթոգոքս եկեղեցու սրբազան պետին:

«ՈՒՂԻՂ ՆՂԻՑԻՆ ԱՂՈՔԲ ՄԵՐ, ՈՐՊԷՍ
ԽՈՒՆԿ ԱՌԱՋԻ ՔՈ ՏԷՐ

(Սաղմ. Դե 2)

Ձերդ Սրբություն կիրիլ, պատրիարք Բուլղարիո, հաբաբաժան և սիրեցյալ եղբայր մեր ի Քրիստոս:

Այս լուսավոր պահուն կցնծա սուրբ էջմիածինը, կցնծան մեր բոլորիս հոգիները, երբ Ձերդ Սրբությունը մտնի կգործե մեր այս պատմական հնագույն տաճարին մեջ, ի գլուխ բուլղար օրթոգոքս Բուլղ եկեղեցվո պատկանելի պատվիրակության:

Ողջուն Ձեզ, քանկագին եղբայր, ողջուն Ձեզ, պատվական և բարձրաստիճան հոգևոր հայրեր, որ կրկնեակցին նորին Սրբության՝ Ձեր մեծանուն պատրիարքին:

Իրապես, մեր կյանքի ամենաուրախ օրերեն մեկը կապրենք այսօր ոչ միայն, որովհետև մեզի հյուր կուգա Բուլղ եկեղեցվո մը Հովվապետը, այլ նաև, որովհետև մեր հյուրը ճշմարտապես մեր հույժ հարգելի և հույժ սիրելի եղբայրն է: Մենք իբրև հայ եկեղեցվո Պետր և առաջին սպասավորը, երջանիկ ենք վայելելով եղբայրական և սրտագին բարեկամությունը կիրիլ Սրբազան պատրիարքին:

Մեր բարեկամությունը, մեր եղբայրությունը անկեղծ է, չեմ է, սուրբ է, որովհետև

խառնված է մեր Բրիտանական հավատ-փի վեմին վրա և դարբնված ու նվիրագործված՝ մեր երկու ժողովուրդներու պատմությունը:

Հարգելի եղբայր մեր կիրիլ, մեր երկուսի բարեկամությունը հին է, շատ հին: Մենք Ձեզ կհանձնենք, կցնծանենք ու կսիրենք երկար դարեր է Վեր, այն օրերեն, երբ բուլղարներ և հայեր իրարու հանդիպեցան իրենց վտարակահույժ պատմության մանապարհի վրա:

Նվառ, Աստծո ողորմությամբ, խաղաղ ու երջանիկ պայմաններու մեջ Ձերդ Սրբությունը և Մենք, երկու հին բարեկամներ ու հաբաբա եղբայրներ, կողջագուրվենք հայ ժողովուրդի հավատփի կեդրոն Միածնաէջ այս սուրբ տաճարին մեջ՝ միասին աղոթելու մեր կրոնական հավատփի անասաւորության, մեր եկեղեցիներու սերտ գործակցության, մեր ժողովուրդներու բարօրության և աշխարհի խաղաղության համար, այնպես, ինչպես Մենք միասին աղոթեցինք երկու տարիներ առաջ Սոփիայի և Պալդիվի ձեր տաճարներուն մեջ, երբ Ձեր եղբայրական հրավերով հյուր եղանք Ձերդ Սրբության, ձեր սխանչելի երկրին, լույս ու ծաղիկ Բուլղարիո մեջ:

Թող Տերը ֆաղցրությամբ ընդունե մեր աղոթքները և ուղիղ, օրպես խունկ:

Թող տերը օգնե և ներշնչե գմեզ, օրպեսզի մեր օրերուն կարողանանք առավել եռանդով չեմացնել եղբայրությունը և գործակցությունը մեր եկեղեցիներու միջև և բարեկամությունը՝ մեր հավատացյալ ժողովուրդներուն միջև:

Թող Տերը հավետ անշարժ պահե բուլղար օրթոգոքս սուրբ եկեղեցին և միշտ խաղաղ ու բարգավաճ՝ բուլղար ազնվասիրտ ազգը:

Թող Տերը կենաց երկար տարիներ պարգևե Ձերդ Սրբության՝ շարունակելու համար Ձեր հովվապետական սուրբ առաքելությունը, Ձեր հատկանշող մտքի պայծառությամբ և հայրական բարությունը:

Ձեր առեշատությունը, Ձեր ֆաղառողջությունը, Ձեր գործունեությունը բուլղար եկեղեցվո պատրիարքական Աթոռին վրա, նաև Մեր և համայն եկեղեցվո ու ժողովուրդի միաբարությունն է:

Ձերդ Սրբություն, բարի եկա՛մ ս. էջմիածին և երկիրը մեր Հայաստան: Ձեզի Մեր եղբայրական ողջունը, Մեր սերը, Մեր հարգանքը և Մեր սիրտը ամբողջ:

Ուղիղ եղիցին աղօթք՝ մեր, օրպես խունկ առաջի ֆո Տէր:

Հայոց Հայրապետի խոսքի բուլղարներեն թարգմանությունը ընթերցում է արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Գր. Անարոնյանը:

Նորին Սրբութիւն Տ. Կիրիլ պատրիարքը Հայոց Հայրապետի ողջունի խոսքին պատասխանում է հետևյալ ճառով:

Ձեռք Սրբութիւն, սիրելի Քահանայապետ,

Աս և ուղեկիցներս երջանիկ ենք, որ ռաբի ռինք Աստուծոյ օրհնված հայկական հողի վրա՝ Ձեզի մատուցելու համար բաւղար օրբոգոս Եկեղեցու ռդայուններն ու բաւլար սրբութիւնների օրհնությունը:

Երջանիկ ենք, որ շնորհիվ Ձեր գերազնիվ հյուրընկալության պիտի տեսնենք Հայաստանի գեղեցկութիւններն ու հայ ժողովրդի ստեղծագործական բարձր ոգին, հիանալու հավատացյալ ժողովրդի բարեպաշտութեան վրա ու դարձյալ զգալու հայ սուրբ Եկեղեցու նվիրականությունը:

Մտանք շնորհակալ ենք Ձեզանից, Սրբազան Հայրապետ, եղբայրական հրավերի և ջերմ ընդունելության համար, որ մեզ ջոյց տրվեց հայկական հողի վրա ռոք դնելու տալիք իսկ պահից: Սույն հյուրընկալությունը մեզ համար խիստ քանակազին է, ռոքհետե համոզված ենք, որ այն բխում է Ձեր բրիտոսանվեր մտեմության ակունքներից:

Ս. էջմիածնի կաթողիկոսական Աթոռի լուսավոր աւուր հայտնի է ռդջ բրիտոսեական աշխարհի մեջ ռոքհետե այն ընդհանրական բրիտոսեության հնագոյն Եկեղեցիներից մեկն է, որ բազում դարերի ընթացքում սրբութիւն հաւագայքներ է տարածել:

Սեր այցելությունը ի քրիստոս սիրելի եղբայրներին, սովորական մի հանդիպում է: Ըստ իմիջան անսովոր սշինչ չկա դրա մեջ, ռոքհետե գիտեմք, քե եղբայրները պետք է միասին ապրեն: Սակայն սույն դարաշրջանը, երբ բրիտոսեական Եկեղեցին աշխարհի մեջ ամենուրեք պետք է քրիստոսի հանդեպ իր հավատարմության ապացոյցը աա, մեր Երկու Եկեղեցիների՝ Հայց. ս. Եկեղեցու և բաւղար ս. Եկեղեցու ղեկավարների, սպասավորների և հավատացյալների վրա մեծ պարտավորություններ և պատասխանատվություններ է դնում: Սույն պարտավորությունները նախ և առաջ վերաբերվում են բրիտոսեական Եկեղեցիների ներքին կյանքին, ռոքհետե բոլոր պետք է ամենաեռուդուն ճիգեր քալեն Եկեղեցիների մերձեցման համար ինչպես կոնասիրութեան, նույնպես և բրիտոսեական սիրտ գործի տեսակետից: Սակայն տագնապը, ռի առջև կանգնած է աշխարհը, Վիետնամի տնդոք պատերազմի պատեմոքով և աշխարհի գանազան ակյուններն սոկայծոք եղբայրասպան կոիվների օջախները բոլոր Եկեղեցիների վրա ուղակի պարտք են դնում բազմասլատկելու իրենց ճիգերը հանուն խաղաղության պանպանման: Այս երկու պարտավորությունների կատարումով, մեր հանդիպումն էլ՝ խաղաղության, բրիտոսեական համատեքության և մարդկանց հանության ուղիգ վկայության համար ավելի բարձր իմաստ է ստանում:

Ես և իմ հարգաւման ուղեկիցներս ուրախ ենք, որ Ձեր սիրելագոյն Սրբութիւնն էլ այսպես է ըմբռնում Եկեղեցական պատասխանատու ղեկավարների յարաւանչյուր հանդիպումը: Հետեաբար մեր այցելությունը, ինչպես և Ձեր հիանալի հյուրընկալությունը, աշխարհի խաղաղության և մարդկանց եղբայրության գործին ռոք նպաստ են ներկայացնում:

Ի Տեր եղբայրական սիրով՝ ձեր հողի վրա ստագինս ռդջումում եմ Ձեզ, Սրբազան Հայրապետ, ու խոր անկեզծությամբ արտահայտում մեր Եկեղեցու լավագոյն և լուսավոր զգացումները Ձեր Սրբության և Հայաստանայաց սուրբ Եկեղեցուն, ռի արժանավոր գանակալն եք Դոք:

Բուղարաւալ թեմական խորհրդի առեհապետ Օննիկ Ասանյանը ընթերցում է Տ. Կիրիլ պատրիարքի ճառի հայերեն թարգմանությունը:

Եկեղեցական արարողության ավարտին Ն. Ս. Կիրիլ պատրիարքն ու Հայոց Հայրապետը նույն հանդիսութեամբ առաջնորդվում են վեհարան, ուր առեհին կահավորված մի հարկարածին է հատկացվում Մայր Աթոռի թանկագին հյուրին, ինչպես նաև նրա շքախրքի անգամներին:


Հունիսի 2-ը որպես անմոռանալի մի նոր էջ, այսուհետև կկարդարի բուղար և հայ Եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների դարավոր պատմութիւնը, շնորհաբեր երկրորդ այցելութեամբ ամենապատիվ Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի:

Ձի՛ բարի, դի՛ գեղեցիկ և վայելուչ, ղի բնակեցեն եղբայրք ի միասին:

Այցելություն Գառնիի ավերակները և ուխտագնացություն Գեղարդա վանք

Հունիսի 3-ին՝ շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Երկու հայրապետներ իրենց շքախմբերի ընկերակցութեամբ նախ ուխտի են գնում Գեղարդա վանք և ապա այցելում Գառնիի ավերակները:

Պատմական վանքի դանդերի ուրախ ղողանջի ներքո, երկու հայրապետները խնկով ու շարականով դիմավորվում են վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանի, միաբան քահանա հայրերի կողմից և ժրաշափառաւով առաջնորդվում Եկեղեցի՝ իրենց աղոթքը կատարելու: Վանահայր վարդապետը Տ. Կիրիլ պատրիարքին և նրա շքախմբի անգամներին տեղեկութիւններ է հաղորդում Գեղարդա



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԿ

հոշակավոր վանքի շինության պատմության, ճարտարապետության, Գեղարդի հողերը բարձրագույն տիպի դպրոցի, վանական տղ շինությունների և բարենպաստ Պոռչյան հայ իշխանների մասին, որոնց նյութական ու բարոյական բարերարությամբ, միջին դարերում, և հատկապես ԺԳ—ԺԴ դարերում Գեղարդի վանքը հանդիսացել է հայ հողերը մշակույթի, գրչության արվեստի վառ օջախներից մեկը:

Հյուրերը հանգամանորեն ծանոթանում են վանքի պատմական, եկեղեցական հուշարձաններին, խաչքարերին:

Այնուհետև մեքենաներն ուղղվում են դեպի Գառնիի ավերակները:

Տ. Կիրիլ պատրիարքը և իր շքախմբի անդամները ծանոթանում են Գառնիի ամրոցի, հեթանոսական տաճարի, քրիստոնեական եկեղեցու և հարակից շինությունների պատմության, կառուցողական արվեստի և ճարտարապետության հետ:

Ի պատիվ Տ. Կիրիլ պատրիարքի՝ Ռամերգ վեհաքառի դահլիճում

Հունիսի 3-ին՝ շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 18-ին, երկու հայրապետներ Մայր տաճարում ներկա են լինում երեկոյան ժամերգության:

Ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, վեհորանի հանդիսության դահլիճում, ի պատիվ Տ. Կիրիլ սրբալույս պատրիարքի, տրվում է համերգ, որին իրենց մասնակցությունն էին րեկը՝

Հոգևոր մեմարանի երգչախումբը՝ «Որք դարդարեցին», «Մամանալ Մովսիս», «Անձինք նուիրեալք շարականներով: Ախարա՛նի ուսանող Հովհ. Գրվերգյանը՝ «Այսօր ցնծա՛մ մենեք-շարականով:

Հայտնի դաշնակահար Վահե Անսուրյանը, որը կատարում է դաշնամուրի վրա երեք երաժշտական գործեր, Չայկովսկի՝ «Բարկարոլա», Կոմիտաս վաղդապետ՝ «Կարավիկ», Լիստ՝ «Տարանտելա»:

Մարգարիտ Մանվելյանը բուլղարերեն լեզվով արտասանում է բուլղար նշանավոր բանաստեղծ Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը, իսկ Իրիգոր սարկավազը՝ նույն բանաստեղծության հայերենը՝ ի սրգամանությամբ Սիրվա Կապուտիկյանի:

Վաստակավոր երաժիշտ Անահիտ Յիլյիկյանը ջութակի վրա կատարում է, Նուրա Ստեփանյանի դաշնամուրի բնկերակցությամբ, Զլատե-Չեռնիկի «Սևտանա»-ն (բուլղարական), Բաղդասարյանի «Նոկոտյուրն»-ը և Կոմիտաս վաղդապետի «Կոունկա»-ը:

Վաստակավոր երաժիշտ Լիլյալիլա Այլիմյանը, Էլեոնորա Ստեփանյանի՝ դաշնամուրի բնկերակցությամբ, կատարում է Հարո Ստեփանյանի «Հեյ», Արազաժ»-ը, Լուկուիցկու «Մոմի» բուլղարական երգը և Կոմիտաս վաղդապետի «Չինար հա»:

Համերգը եզրափակվում է Մայր տաճարի երգեցիկ խմբի ելույթով. Կոմիտաս վաղդապետ՝ «Գարուն ա», Չայկովսկի՝ «Տէր ոգորմեա», Մ. Եկմայան՝ «Սուրբ, սուրբ»:

Սիրված երգչուհի Մարիա Գեղունիս ապրումով և հուզումով կատարում է, դաշնակահարուհի Սիրվա Սվանյանի նվագակցությամբ, Կոմիտաս վաղդապետի «Հաուն», «Խնկի ծառի նման հա» շարական-մեղեդիները:

Երգեցիկ խումբը առանձին խանդավառությամբ կատարում է «Կիրիլ և Մեֆոդիոս»-ին նվիրված բուլղարական մաղթերգի ու հայրապետական կոմիտասյան մաղթերգը՝ «Ամեն հայի սրտից թխած»:

Համերգն անցնում է ջերմագին մթնոլորտում, փայլուն հաջողությամբ:

Վերջում Տ. Կիրիլ պատրիարքը իր ջերմ գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում համերգի մասնակիցներին՝ իր օրհնությունը բաշխելով բոլորին:

Հայրապետական ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում

Հունիսի 3-ին՝ Կիրակի: Գարնանային ջերմ ու ոսկյա արևը ոսկեզօծել է Արարատյան գաշտը ու բոլորի սրտերը:

Հայրենի բնությունը՝ ես իր ուրախությունն ու հրճվածքը միտխառնել էր Մայր Աթոռի հանդիսությանը:

Ժամը 11-ն է, Մայր տաճարի դանդաղ զոռանջում են հանդիսավոր ու տոնական:

Հայոց Հայրապետը վեհաքառում, հայրապետական լրիվ զոռանջումով մեղ, բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի հետ, ամպստվանու տակ, եկեղեցական թափոթով, խնկով ու աղոթքով առաջնորդվում է Մայր տաճար՝ հավատացյալ հոծ բազմության ուրախության, բարեմաղթությանը արտահայտությունների ներքո:

Տաճարը ես լցվել է աղոթավոր բազմությամբ: Գասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք, ուխտավորներ:

Ձախակողմյան դասում, իր գահի վրա է Կիրիլ սրբազան պատրիարքը՝ իր շքախմբի անդամներով շրջապատված:

Սկսվում է հայրապետական ս. պատարագը:

«Հայր մեր»-ի ժամունակ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ուղիղ եղիցին աղօթի»:



Տ. Կիրիլ պատրիարքը Մայր տաճարում՝ ս. պատարագի ընթացքում (Քուճիս 4)

մեր, որպէս խունկ առաջի քո Տէր» բնաբանով:

Ն. Ս. Օծութիւնը իր քարոզի վերջում ողջունում է բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբութիւն Տ. Կիրիլ պատրիարքի ներկայութիւնը՝ շնչտելով, որ այս օրը պատմական է, որովհետեւ Մայր Աթոռ ս. Էջմիածին հյուր է եկել քույր եկեղեցու հովիւայետը, և հայ և բուլղար եկեղեցիների եղբայրութիւնը սուրբ է, չեքմ և անկեղծ, որովհետեւ խարըսխւած է մեր քրիստոնեական հովատքի վեմի վրա: Այնուհետեւ Հայոց Հայրապետը սրտագին բարեմազթութիւններ է անում բուլղար և հայ եկեղեցիների և երկու եղբայր ժողովուրդների պայծառ ապագայի, բարօրութեան և աշխարհի խաղաղութեան համար:

Հավարտ ս. պատարագի, երկու հայրապետների ներկայութեան, Մայր տաճարում կատարվում են բուլղարներն լեզվով մաղթերգ, ինչպես նաև հայրապետական մաղթերգը, որից հետո սրբազան քահանայապետները եկեղեցական թափորով առաջնորդվում են վեհարանի գահաստան:

Համդիսությունը գահաստանում

Եկեղեցական թափորը «Որ զշնորհս» շարականի երգեցողութիւնը բարձրանում է վեհարանի հանդիսութեան մեծ դահլիճը և կանգ առնում գահաստանում:

Երկու հայրապետները բաղմում են իրենց գահերի վրա:

Հայոց Հայրապետը հոգեպես ուրախ, մի անգամ ևս ողջունելով Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի ներկայութիւնն ու այցելութիւնը Մայր Աթոռ, ասում է.

Ձերդ Սրբութիւն, թանկագին և սիրելի եղբայր մեր ի Քրիստոս,

Անավասիկ մենք բոլորս կրկին համախմբված ենք այստեղ՝ արտահայտելու համար Ձեզի մեր եկեղեցիի և մեր ժողովուրդի անսահման սերը, խօր գեահատամեր և հարգանքը:

Ձերդ Սրբութիւն, մեզի համար Դուք կրեւելայացեմք ոչ միայն Բուլղար եկեղեցի մը, այլ նաև եղբայրական ժողովուրդ մը և բաւելիսմամ, հյուրընկալ երկիր մը: Մենք Ձեր անձին մեջ կտեսնենք բուլղար օրթոդոքս սուրբ եկեղեցին սուրբ ներշնչումներով, իր



Երկու շաբաթափեսները Վեչարաի գաղափարաւոր (Հովհան 4)

հոգիի բոլոր զեղեցկություններով ու արժեքներով, կտեսնենք բուլղար հավատավոր ու մարդասեր ժողովուրդը՝ իր հսկական առաջինություններով, իր հերոսական անցյալով և իր ներկա հոյսերն իրագործումներով, ու կտեսնենք հաև ձեր հպարտ երկիրը, շէնդ ու վարքամ, արեւով ու ծաղիկներով լեցուն, ձեր մեծահոգի հայրենիքը, որ անցյալ դարուն իր գիրկը լայն բացավ, առանց սովորելու հայ ժողովուրդի հալածական, բազմաշարժար գավակներու առաջ, որոնք խոնապանար կրփախշին օսմանյան արշունհարու սուլթաններու յարադանեն՝ ինձաւելու համար կյանքի ապահովություն և ազատություն: Ի՞նչ հայերը գտան Բուլղարիո մէջ ոչ միայն կյանքի ապահովություն և ազատություն, այլ շատ ավելին, անոնք գտան նշմարիտ հարազատ հայրենիք մը, որ ոչ մէկ խտրություն դրով անոնց և բնիկ իր գավակներուն միջև՝ ընծայելով անոնց ամեն հնարավորություն, որ ապրին ու աճին իրենց հայրենի հավատով, իրենց ավանդություններով, մշակույթով ու մայրենի լեզվով:

Իսկ, Ձերդ Սրբություն, խորհրդանշանք և այս բոլոր խորություններուն, այս բոլոր բարիքներուն: Ձեր լուսավոր, բարի դմբը նշմարիտ դմբն է բուլղար ժողովուրդին ու բուլղար հայրենիքին:

Հետեալքար բայլ տվեք, որ հանուն հայ Եկեղեցւոյ և հայ ժողովուրդի ու մանավանդ հանուն բոլոր այն հայերուն, որոնք զարեւր շարունակ վայելցին բարիքները բուլղարներու հոգիին ու հոդին, շնորհակալություն հայտնենք Ձերդ Սրբության Երախտապարտ սրտով:

Պատմական անցյալի և հոգեկան հարազատության այս ամառ հիմերու վրա կգարգանս մեր այսօրվան Եղբայրությունը և գործակցությունը Եկեղեցական կյանքին մէջ: Մեր օրերուն Դուք և Մենք և մեր Եկեղեցիները կաշված են էկոմենիկ օգիտով գաղափարով, միացյալ ուժերով աշխատելու, որպէսզի սուղով ամրապնդվի Բրիտանական հավատքի և սիրտ միությունը աշխարհի մէջ, որպէսզի Եկեղեցիներու միջոցով ժողովուրդները ավելի զիրար հաւնչան, զիրար հասկընան ու գնահատեն, և որպէսզի մեր Երկրագունդը դառնա խաղաղ ու բարօր կյանքի աշխարհ մը, աշխարհ մը, որ ժողովուրդները ապրին արդար ու ազատ իրենց կյանքի՝ առանց մէկ մյուսին վրա սուր բարձրացնելու: Մեր Բրիտանական հավատքը Մենք կըրկաւենենք մեր ամենահոգ բարոյական զենքը րեղելով պատերազմին: Եվ, անկասկած, Աստված պիտի օրհնէ մեր գործը և օգնական պիտի մնա միշտ մեզի՝ մեր խաղաղարար առաքելության հանապարհին վրա, վասնզի

մեր Աստվածը մարդասեր Աստված է և խաղաղության Աստված է:

Ավելի լայս, ավելի սեր և ավելի խաղաղություն մարդոց և աշխարհին համայն:

Այս զաղափարներու և զգոցումներու շողակաթումին ներքին ինչքան պայծառ ու վճիռ կնառագայթէ մեր՝ Երկու պատրիարքներուս բարեկամությունը և միատեղ աշխատանքը:

Թող ողորմածն Աստված Բաղդադի քաղաքի մեր ձայնը և Ձեզի պարգև, սիրեցյալ պատրիարք Նորայր, ամուր ու կայուն առողջություն, ծրպեսզի տակավին Երկու տարիներ հովվապետական գավազանը Ձեր ձեռքին շարունակէ առաջնորդել ձեր Եկեղեցին և ժողովուրդը և ծառայել Եկեղեցիներու և ազգերու Եղբայրության ու աշխարհի խաղաղության սրբազան դատին:

Կեցցէ նորին Սրբություն Կիրիլ պատրիարքը:

Կեցցէ և հավետ փառավոր մնա բուլղար օրոշմես Եկեղեցին:

Կեցցէ և միշտ խաղաղ ու ծաղկալ գարգանա մարդասեր Բուլղարիոն:

Ապա Վեհափառ Հայրապետը, ի նշան եղբայրական սիրտ, Տ. Կիրիլ պատրիարքին նվիրում է Հայրապետական ոսկալ առա, որի վրա փորագրված են ս. էջմիածնի և Սոֆիայի Սայր տաճարները:

Նորին Սրբություն Տ. Կիրիլ սրբազան պատրիարքը պատասխան սղջոյնի իր խոսքում ասում է.

Մենք, ծրպես բուլղարական պատրիարքության առաջնական, Եկեղեցին Ձեր Սրբության և Ձեր ղեկավարած դարավոր կաթողիկոսական Աթոռին մատուցելու նրա սրտագին սղջոյնները և սուրբերի օրհնությունը, սուրբեր, որոնք ձեզվ և բուլղարական Բրիտանական բարեպաշտության ծոցից: Ձեզ մատուցելով սրբության և սիրտ սոյն ողջոյնը, մենք հավատում ենք, որ հետզհետեւ առավել ևս կամրապնդվի ի Տեր Հիսուս Բրիտանոս մեր միասնականությունը:

Մասնավորապէս շուրախ ևմ, որ Աստված հանեցավ, որպէսզի Ձեր սիրելագոյն Սրբության հրավերով դարձյալ ուրբ դենք արեւաշող Հայաստանի հոգին վրա՝ ջերմացած բազմադարյան էջմիածնի հոգևոր լույսից, հիմնված Բրիտանական հավատքի մեծ լուսավորիչ սուրբ Դրիգորից, որի գործը շուրաշող դարի սկիզբը կատարեց հայ ժողովրդի վերածնունդը ինչպէս հոգևոր, նայնպէս և լուսավորության ու հասարակական-պետական տեսակետից:

Առաջին անգամ չէ, որ գտնվում ևմ Հայաստանի մէջ, և առաջին անգամ չէ, որ ս. էջմիածնի կաթողիկոսական Աթոռի լուսավոր շողերը իմ հայացքս լուսավորում են՝ օրհնաբեր մի անհարկ զգելու ձեր ժողովրդի

Բրիտանոնեական հեռավոր անցյալի վրա և օգնչնչված ակնարկով բախանցելու սուրբ էջմիածնի ապագա հոգևոր նակատագրին մեջ, այն ֆաղափին մեջ, ուր Աստված իջավ, և սուրբ Գրիգոր Լուսավորիչ Տրդատ Յ-րդ թագավորը Բրիտանյա դարձրեց՝ հայ ժողովրդի պատմական հոր կյանքի սկիզբը դնելու համար:

Հեռուց ի վեր ձեր երկրի մեջ կատարվում է վերելքի ճիգ ու աշխատանք, սակայն հայ ժողովուրդը ապրել է նաև բազում տառապանքներ՝ միշտ ձգտելով դեպի երջանիկ ապագա: Իսկ հայ սուրբ եկեղեցին չէ դադարած ժողովրդի լուսավորության փարոս հանդիսանալուց, երբ մուր ամպեր ծածկած են նրա նակատագիրը: Ձեր նախահայրերը դարեր շարունակ հոգևոր հարստություններ են կուտակել, որոնց ժառանգորդներն եմ դուք: Մենք հավատում ենք, որ սույն ժառանգությունը հետզհետե պիտի ավելանա՝ ամբողջ հայ ժողովրդի աշխատանքով և եռանդով՝ կյանքի բոլոր բնագավառներում երջանիկ ապագա ստեղծելու համար:

Երբ 1958-ի գեղազվաբեկ մայիս ամսվան մեջ պատիվ ունեցա նորին Արքայություն Վազգեն Ա-ից առաջին անգամ հրավեր ստանալու՝ Իրեն ճյուղ ըլլալու, միաժամանակ և Հայաստանյայց ս. եկեղեցիին, հնարավորություն ունեցա տեսնել շատ բաներ, սակայն այն, ինչ որ ինձ վրա անպատմելի տպավորություն գործեց, ձեր ժողովրդի ստեղծագործական և մշակութային եռանդն էր, եկեղեցական և կրոնական շինարարության մեջ՝ Արքազան կաթողիկոսի և Իր օգնականների ջանքերով: Այն ժամանակ ես ավելի սիրեցի իմ Արքազան ներայիս՝ սուրբ էջմիածնի կաթողիկոսական Աթոռի Գահակալին: Ես ծանոթ էի նորին Արքայության նախապես էլ, երբ նա եպիսկոպոսն էր Ռուսմանիա և Բաղդադի նայիրին: Սակայն ավելի մտերիկց հաճաչեցի նրան՝ աշխարհի խաղաղության պահպանման համար մեր կատարած նամատեղ աշխատանքին մեջ: Իսկ 1965-ին ես բաղդադ Եպիսկոպոսական, Բանանյական դասի և հավատացյալ ժողովրդի հետ, ինչպես նաև մեր հայրենասեր բոլոր ֆաղափացիներին հետ, Սոֆիայի մեջ, բախտը ունեցանք սիրա և բարձր հարգանքի եղբայրական բաց գրավ բերումներու ն. Արքայություն Վազգեն Ա-ը և Իրեն անգաժման ուղեկիցները՝ որպես ճյուղ բուլղար պատրիարքարանի: Սույն այցելությունը եղբայրության և հավատքի տուն էր, երբ հայ եկեղեցու Արքազան Գահակալը Իր անձնավորության բարձր հմայքով հիացմունքի ապրումներ պարգևեց մեզ և խոր հիշատակներ թողուց բուլղարական եկեղեցական պատմության մեջ: Այդ այցելությունը նոր

առիթ եղավ մեր սերը արտահայտելու հանդեպ հայ ժողովրդին, ինչպես և վերհիշելու հին դեպքեր՝ 50 տարիներ առաջ, երբ Արքայություն Վազգեն Ա-ը Վաղարշապատի մեջ հայ ժողովուրդը շարդի ենթարկվեց: Այն օրերին բուլղար ժողովուրդը ընդունեց հայ զաղրականներին, թշվառ հայ բեկորներին իր երկրի մեջ՝ աշխատանքով և պատվով իրենց հացը շահելու պայմաններ ստեղծելով նրանց: Դրանցից շատերը այսօր էլ ապրում են բուլղարական հողին վրա և իրենց հայկական ծագումին և հայրենիքին հավատարիմ մնալով հանդերձ, իրենք իրենց գգում են որպես իրենց երկրորդ հայրենիքի մեջ:

Ամենայն Հայոց կաթողիկոսությունը միշտ մեծ հեղինակություն է վայելել: Դրա պատճառները շատ պարզ են: Այսօր էլ սուրբ էջմիածնի ներկայիս Գահակալ, նորին Արքայություն Վազգեն Ա-ը իր իմաստությամբ և սիրով ստեղծում է հոգևոր միասնությունը հայ ժողովրդի ծոցում ինչպես արևաշող Հայաստանում, նույնպես էլ աշխարհում ցրված հայության միջև:


Նվազ կարևոր չէ նույնպես ն. Արքայություն Վազգեն Ա-ի էկոմենիկ և խաղաղասեր գործունեությունը:

Քրիստոնեական էկոմենիզմը սրբազան գործ է, որն իրագործվում է համաօրիստոնեական լայն հիմունքի վրա: Աստուծո եկեղեցիները իրար պետք է մերձենան կրոնասիրական-օրիստոնեական մոտիկության ուժով:

Հայաստանյայց սուրբ եկեղեցու հեղինակությունը հետզհետե աճում է նույնպես ն. Արքայություն Վազգեն Ա-ի խաղաղության դատի գործուն մասնակցության շնորհիվ:

Մենք գիտենք, թե բոլոր մարդիկ խաղաղության են ձգտում, սակայն գիտենք նաև, որ խաղաղության համար աշխատելու պատվերը ստացել ենք մեր Փրկիչ, խաղաղության իշխան Տեր Հիսուս Բրիստոսից: Նա աշխարհ եկավ որպես խաղաղության ավետարեք և կատարող: Նա իր աշակերտներին կոտակեց, ինչպես և եկեղեցիներին կոտակեց, խաղաղությունը, որպես աստվածային պատվեր և գերագույն բարիք: Այս պատճառով կուժեղացնենք մեր խաղաղասիրական աշխատանքը՝ այսպիսի արտահայտիչը հանդիսանալով ամբողջ մարդկության ամենաթանկագին իղձերին:

Ն. Արքայություն Վազգեն Ա-ի միջազգային շափանդով խաղաղության դատին մոժած լուծման մեծ է, ինչ որ ավելացնում է նրա անձնական և Հայաստանյայց սուրբ եկեղեցու հեղինակությունը: Այս ավելացում է նաև մեր սերը հանդեպ Աղբազան կաթողիկոսին, որի անձին մեջ տեսնում ենք մտերիմ,



Տ. ԿԻՐԷՆԻ ՊԱՏՏՈՒՄԱՐԷ ԻՆ ՕԲՆԱԽԱՐԷՈՎ ԵՒ ԽՍԻՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎԵՐԱԽԱՆԵՐԸ ԵՏՅԱԿԻՄՈՍԿԻՆԻ ՎԱՅՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

անկեղծ եղբայրը և աստվածային վարդապետության սպասավորը:

Արտագին կազմում երկնային Հոս' իր բարեգործ Աջով միշտ օրհնելու Հայաստանյայց սուրբ եկեղեցին, որպեսզի նա հաստատման փրկաբար նշմարտության, բարի հայ ժողովուրդը առաջադիմի հազար, նշուրային և հանրային հաջողության մեջ: Իսկ Ն. Ս. կարողությունը պատրիարք Վազգեն Ա-ի սիրտը լցվի բազմապատիկ օրախոսությամբ և աստվածային զորամուրթյուններով, որոնք պիտի իջնեն իր սիրելի ժողովուրդին վրա:

Թող Աստուծու ողորմությունը իջնի բոլոր հայերին վրա և միգ համար էլ բանկազին ձեր հայրենիքին վրա:

Նորին Արքեպիսկոպոս իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետին նվիրում է բուզարական մի զեղեցիկ, ոսկեզօծ սրբանկար:

Գահասրահում հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Պաշտոնական ընդունելությունը վեհարանում

Ժամը 3-ին վեհարանի սեղանատանը պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպվում ի պատիվ Մայր Աթոռի թանկուզին հյուրի՝ Ս. Կիրիլ պատրիարքի:

Ընդունելության ներկա են բուզար պատվիրակության անդամները՝ տ. Նիկոլայ միտրոպոլիտը, տ. Իոան վարդապետը, Վասիլի սարկավազը:

ճաշկերույթին մասնակցում են նաև Մայր Աթոռի և թեմերի բոլոր եպիսկոպոսները՝ տ. Հայկազուն, տ. Սերոփք արքեպիսկոպոսները, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Մաշտոց, տ. Վահան, տ. Պարզե, տ. Տիրայր եպիսկոպոսները, տ. Մուշեղ, տ. Ներսես, տ. Նարեկ, տ. Գեորգ վարդապետները, Գերագույն հոգևվոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, օչջմիածին ամսագրի խմբագրական կազմը, բուզարահայ թեմական խորհրդի ատենապետ Օննիկ Ասլանյանը, երաժշտադես Մ. Թոմաճանը, քանդակագործ Գր. Ահարոնյանը, պրոֆ. Գ. Մեղնիկյանը:

Հյուրերի թվում են ՀՍՍՀ Մինիստրների սովետին առնթին հայ եկեղեցու զործերի խորհրդի նախագահ Կ. Դավթբաշյանը, տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Բ. Պարսամյանը, էջմիածնի շրջանի զործագիր կոմիտեի նախագահ Հ. Սեդրակյանը, Սփյուռքի հետ մշակութային կապի ընկերության ներկայացուցիչ Գր. Բեքմեղյանը և ուրիշներ:

Սեղանը օրհնում է Վահագն Հայրապետը, Մայր Աթոռի բարեքներով զարդարված սե-

ղաների շուրջ ստեղծվում է բրիստոնեական եղբայրության ջերմիկ մթնոլորտ:

Ընդունելության ժամանակ փոխանակվում են սրտագին ողջույնի և բարեգալստյան խոսքեր: Բաժանենք՝ ևս առաջարկվում Հայոց Հայրապետի, Ս. Կիրիլ սրբազան պատրիարքի և ուսական պրավոսլավ եկեղեցու պետ, Ս. Ալեքսի պատրիարքի կենաց, հայ, ռուս և բուզար եկեղեցիների և եղբայրայան ժողովուրդների անբակտելի եղբայրության, բարեկեցության և պայծառ ապագայի կենաց:

Քրիստոնեական եկեղեցիների ի Քրիստոս համագործակցության, ժողովուրդների բարեկամության, աշխարհի խաղաղության նպիշված հայրենասիրական, խանդավառ ելույթներով հանդես են գալիս՝ Վահագն Հայրապետը, Ս. Կիրիլ պատրիարքը, տ. Հայկազուն, տ. Սերոփք արքեպիսկոպոսները:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առնթին հայ եկեղեցու զործերի խորհրդի նախագահ Կ. Դավթբաշյանը, հանուն Հայաստանի կառավարության և ի դիմաց հայ եկեղեցու զործերի խորհրդի, ողջունում է Ս. Կիրիլ պատրիարքի ներկայությունը ս. էջմիածնի կամարների տակ և հայկական ս. զրական հողի վրա:

Ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի դճարանական աղոթքով:

Այց հոգևոր ճեմարան

Ներկայան ժամը 7.30-ին Ս. Կիրիլ սրբազան պատրիարքը, իր շքախմբով և տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ու տ. Ներսես ծ. վարդապետի առաջնորդությամբ, այցելում է հոգևոր ճեմարան:

Թանկագին հյուրի մուտքը ճեմարանի հանդիսությանը սրահը ողջունվում է դասախոսական կազմի, ուսանողության սրտագին ծափահարություններով:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը բարեգալստյան խոսքերով ողջունում է բուզար եկեղեցու պետի շնորհաբեր այցելությունը ճեմարանի հարկից ներս:

Այնուհետև տեսուչ վարդապետը մի համոռոտ ակնարկի մեջ ներկայացնում է հոգևոր ճեմարանի պատմությունն ու նրա դերը դարերի ընթացքում հայ եկեղեցու համար հոգևոր սպասավորներ պատրաստելու և հայ հոգևոր մշակույթի զարգացման շնորհակալ աշխատանքներում: Հայր սուրբ տեղեկություններ է հաղորդում նաև Ս. Կիրիլ պատրիարքին հոգևոր ճեմարանի ներկա ուսանողության թվի, դասախոսական կազմի և ուսումնական ծրագրի մասին:



Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում.
Սրբազան պատրիարքից քաջատրություն՝ Է տալիս տնօրեն Լևոն Խաչիկյանը:

Տ. Կիրիլ պատրիարքը խոսք առնելով իր գոհունակությունն ու ուրախությունն է հայտնում, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնչի տակ կենդանի ու պայծառ է կրթական այս հաստատությունը՝ կանգնած իր կոչման և առաքելության բարձրության վրա, և օրհնելով ուսանողությանը, դասախոսական կազմին, թեւադրում է լինել որքան հավատքի, նույնքան և հայրենասիրության մարդը, դառնալու համար տիպար, նվիրյալ պաշտոնյաները Աստծու և ժողովրդի:

Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի խոսքը ընդունվում է բոլոր ներկաների կողմից ջերմորեն:

Այնուհետև սրբազան պատրիարքը տ. Հակազուն արքեպիսկոպոսի և տեսուչ հայր սուրբի առաջնորդությամբ այցելում է դասարանները և հրաժեշտ առնում լավագույն տպավորություններով:

Նրեկոյան ժամը 21-ին վեհարանի մեծ դահլիճում ցուցադրվում է 1962 թվականի մեծոթնօրհնության կինոնկարը:


Այցելություններ Օշական և Մատենադարան

Հունիսի 5-ին՝ երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, երկու նալրապետներ իրենց շքախմբով այցելում են Օշական՝ ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարան-եկեղեցին:

Եկեղեցու մուտքի առաջ երկու հայրապետները «Հրաշափառ»-ով մուտք են գործում եկեղեցի, ապա իջնում ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը իրենց աղոթքն ու ուխտը կատարելու:

Հյուրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ հանգամանորեն ծանոթանում են՝ եկեղեցում վերջին երեք տարիների ռեֆացիում կատարված որմնակարգական (ֆրեզկո) աշխատանքների հետ՝ հայտնելով իրենց հիացմունքը:

Այնուհետև երկու հայրապետները, իրենց ուղեկիցներով, Օշականի, Աշտարակի զեղեցիկ և հովասուն ալգիների միջով մեկնում են Նրեան՝ այցելելու ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԴԱԾՔԱՎԱԾ ԵՐԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԶԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԶԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժամեր 11.30-ին Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լ. Խաչիկյանը ջերմորեն դիմավորում է Ս. Կիրիլ պատրիարքին և Հայոց Հայրապետին ու նրանց ընկերակցող անձնավորությանը:

Մենծահարգ տնօրեն գիտնականը հյուրերին տեղեկություններ է հաղորդում Մատենադարանի ստեղծման, ձևագրերի հավաքման և ուսումնասիրման աշխատանքների մասին, ապա հրավիրում նրանց գիտելու Մատենադարանի ցուցասրահում միջնադարյան ձևագրերն ու մանրանկարները:

Քարձրապատիվ հյուրերը դիտում են նաև ցուցասրահի նախագույթում բացված ցուցահանդեսը, որը նվիրված էր հայ և բուլղար ժողովուրդների դարավոր եղբայրության և մշակութային կապերի պատմությանը:

Հյուրերը հրաժեշտ են առնում Մատենադարանի տնօրենից, դիտական աշխատանքների կատարող անխոնջ կոլեկտիվից և մեկնում անմոռանալի տպավորություններով:

Ժամեր 13-ին երկու հայրապետները այցելում են բուլղար մեծ բանաստեղծ Յավդոմիր անվան գրդոցը և ծաղկեպսակ դեմում «Հայեր» հռչակապ բանաստեղծության հեղինակի րձանի վրա (գործ՝ արվեստի վաստակավոր գործիչ, նախկին բուլղարահայ Գր. Ա. հարոնյանի):

Դպրոցի դռան առաջ երկու հայրապետներին դիմավորում են տնօրենը, ուսուցչական կազմն ու աշակերտությունը: Տնօրեն Իսաիրյանը ողջունում է երկու հայրապետներին երկայնությունը բարեկայստյան ուղեծրով:

Տ. Կիրիլ սրբադան պատրիարքը ողջունի և օրհնության խոսք է ասում՝ շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար:

Այցելություն Գերագույն սովետի Գախագա- նություն Գախագահի տեղակալ Հր. Մարգարյանին

Հունիսի 5-ին՝ երկուշաբթի օրը, հետ միջօրէի ժամեր 14-ին, բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքը և վեհալիառ Հայրապետը, իրենց շքախմբերով, այցելություն են տալիս Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հր. Մարգարյանին, նախագահական պալատում:

Այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Վաղգեն Ա կաթողիկոսը բուլղար օրթոդոքս եկեղեցու պետին ներկայացնում է Հր. Մարգարյանին:

Այցելությանը ներկա էին նաև Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Դալստյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստր-

ների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալստյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի ընկերության նախագահ Ռ. Պարսումյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը և նախագահության գործերի կառավարիչ Գ. Սահակյանը:

Այցելության ընթացքում, որն անցնում է ջերմ մթնոլորտում, ճառեր են փոխանակում Հայոց Հայրապետը, Տ. Կիրիլ պատրիարքը և Հր. Մարգարյանը:

Պաշտոնական ընդունելություն

Հունիսի 5-ին՝ երկուշաբթի օրը, հետ միջօրէի ժամեր 15-ին, Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, ի պատիվ Տ. Կիրիլ պատրիարքի, պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպում Հաղթանակի այգու «Արադիլ» ռեստորանում:

Ընդունելության մասնակցում են բուլղար օրթոդոքս եկեղեցու պետի շքախմբի անդամներ տ. Նիկողիմ միտրոպոլիար, տ. Իոան վարդապետը, Վասիլի Վիլիեմով Լատուղար-սուրկավարը:

Ճաշկերույթին ներկա են նաև Ամենայն Հայոց Վեհալիառ Հայրապետը՝ շրջապատված իր շքախմբի անդամներով, որոնց թվում՝ տ. Հայկազուն և տ. Սեբեդեյե արևելապետները, տ. Կոմիտաս, տ. Պարզե, տ. Վահան, տ. Մաշտոց, տ. Տիրայր Լախկապետները, ա. Ներսես Ժ. վարդապետը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Սեիկ Ասլանյանը, «Շքեմածին» ամսագրի խմբագրական կազմը և այլ անձինք:

Հրավիրյալների թվում էին Նրեանի քաղսովետի գործկոմի նախագահ Գր. Հասարյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսումյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Սովետա-բուլղարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ Գ. Սևուցը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ Ս. Դասպարյանը, հաղադության պաշտպանության հանրապետական կոմիտեի ներկայացուցիչ Հ. Խաչատրյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ս. Դասպարյանը, Մատենադարանի տնօրեն, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը, ՀՍՍՀ Մինիս-



Էրևան. Յաղոթովի արձանի մոտ

տորների սովետին տալիս իրենց հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, նույն խորհրդի անդամներ Բ. Առաքելյանը, Գր. Բալասանյանը, Մ. Բարյոյանը, բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, քանդակագործ Գ. Անտոնյանը և այլ պաշտոնական անձինք:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին տալիս իրենց հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Գալլաքյանը, առաջինը խոսք առնելով, նշում է, որ այդօրվա ընդունելությունը կադմակերպվել է Ամենայն Հայոց Վեհապետ Հայրապետի հյուր Ս. Կիրիլ պատրիարքի պատվին, սեղանակիցներին ներկայացնում է օրվա պաշտոնական հյուրերին և առաջարկում առաջին բաժակը խմել բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ս. Կիրիլ պատրիարքի կենսաց՝ ցանկանալով նրան քաջառողջություն, կորով և երկար կյանք, ինչպես նաև բուլղար ազնիվ ժողովրդին՝ բարություն և աշխարհին՝ խաղաղություն:

Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահը շնչոտում է իր խոսքի մեջ Ս. Կիրիլ պատրիարքի կատարած մեծ աշխատանքը հանուն խաղաղության:

Հաշկերույթի ժամանակ բաժակաճառեր են արտասանում Վեհապետ Հայրապետը, Սովետա-բուլղարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ Գ. Սևունցը, ներգաղթ կոմիտեի նախագահ Ս. Գալպարյանը, բանաստեղծուհի Մարո Մարգարյանը:

Ընդունելության վերջում Ս. Կիրիլ պատրիարքը հանգես է դալիս հետևյալ ճառով.

Հարգելի նախագահ եկեղեցական գործերի խորհրդի,

Ձերդ Սրբություն,

Հարգելի սեղանակիցներ,

Ուրախությամբ ընդունեցի Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս-պատրիարք Վազգեն Ա-ի հրավերը՝ այցելելու ս. էջմիածնի Մայր Աթոռ, ուրեմն և այցելելու ձեր գեղեցիկ մայր հողը: Ուրախացա, որովհետև գիտեի, որ դարձյալ պիտի տեսնեմ ձեր հայրենիք և նրա գեղեցիկ համայնապատկերը, որ պարզվում է սփանշելի Արարատի ֆոնի վրա: Ուրախացա, որ քեզ էիք ժամանակի համար պիտի տեսնեմ ձեր ժողովուրդը, որը մեզ մոտ՝ Բուլղարիայում, վայելում է


բարձր հարգանք և անկեղծ սեր: Հանելի էր ինձ, որ պիտի կարենամ դարձյալ տեսնել ձեր կենդանիս, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի վերելքը:

Իսկ այս վերջինը ինձ և իմ ուղեկիցներին համար մեծ հետաբերություն է ներկայացնում: Նս երջանկություն էմ ունեցել ձեր երկիրը այցելելու 1958-ին՝ կառարյալ զարհան մեջ: Տեսա կերպարանք ձեր հայրենիքին և անմոռանալի տպավորություններ կրեցի երևանի կրոնական, մշակութային և շինարարական վերելից: Տրված իննելով որ այն մասնակ զալիս էի Մոսկվայից, Սովետական Միության մայրաքաղաքում մի քանի օր մնալուց հետո, ինձ համար հստակ դարձավ, որ ձեր առաջադիմության և վերելքի քալիքը ընդհանուր է սովետական մեծ երկրի հետ, ու այս մասին դուք խթան կստանաք պայծառ և փառասպանձ մոսկվայից:

Իմ այդ առաջին այցելության ընթացքում ինձ և իմ հարկելի ուղեկիցների վրա զորավոր տպավորություն գործեցին ձեր կառավարության և հասարակայնության ջանքերը պահպանելու հայ ժողովրդի պատմական, հոգեկան և մշակութային անցյալի հուշարձանները: Իսկ այդ անցյալը հարուստ է: Հայերը ժողովուրդների մշակութային կյանքին մեջ մտաք հե գործել շատ վաղուց և իրենց զգալի լուսան մուծել համամարդկային մշակութային զանծարանին մեջ:

Հայ ժողովրդի օղբերգական անցյալը բազմաբիվ հայերի ցրել է աշխարհով մեկ: Նրանք ամենուրեք պահպանում են իրենց ազգային դիտակցությունը, ու նրանց մեծ մասը չի դադարել մտնով և սրտով կապվելուց իր գեղեցիկ հայրենիքին հետ: Աշխարհի բոլոր ծայրերում նրանք՝ սիյուրֆի հայերը, պահպանում են Հայաստանի տնունը և կապված են նրա անցյալի ու ներկայի հետ:

Հայ ժողովուրդը ունի բարձր հատկություններ և առաքինություններ, որանք նրան երջանիկ կյանք ստեղծելու կարող են դարձնում: Այս է և այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը Սովետական մեծ Միության ժողովուրդների հետ միասնաբար ապրում է և մեզ համոզում, թե Սովետական Հայաստանը հետըգհետե ավելի պիտի առաջադիմի: Հայ ժողովրդին անկեղծօրեն ջանկանում հմ առաջադիմություն և վերելք՝ կյանքի բոլոր մարգերի մեջ: Կոսկածից վեր է, որ ժողովուրդների գերագույն բարիքն է խաղաղությունը, ու մեր մադքանքների կարգին առաջին տեղը սյետք է գրավի ամբողջ աշխարհին դարձյալ խաղաղություն մաղքելը, որսյեսգի խաղաղ սյայամանների մեջ սովետական ժողովուրդները իրենց տնտեսական, մշակութային և հանրային բարեկեցության գործը շարունակեն:



Ոսկեծույլ հայրապետական աստ. Վեհափառ Հայրապետի նվերը Տ. Կիրիլ պատրիարքին



Բուլղարական սրբանկար. Գվեր Մայր Աթոռին, Տ. Կիրիլ պատրիարքից

Կեցցե հայ ժողովուրդը, նրա կառավարությունը և Հայաստանի ստեղծագործական ուժերի բազմակողմանի վերելքի աշխատավորները:

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պետի պատվին տրված ճաշկերույթն անցնում է ջերմ, սրտազին մթնոլորտում:

Տ. Կիրիլ պատրիարքը հրաժեշտ է առնում Մայր Աթոռից

Հունիսի 6-ին՝ երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու ճայրապետներն ի-

րենց շքախմբերով հավաքվել են վեհարանի ընդունելության սրահը:

Երկու ճայրապետները հանդիսավոր իրադրության մեջ ստորագրում են հետևյալ հաղորդագրությունը, որպես վճայություն Հայց. առաքելական եկեղեցու պատմական կենտրոն ս. էջմիածնի կամարների առկ իրենց ողջագործման և ի Զրիստոս սիրո իրենց եղբայրության:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ողորմածությամբն Աստուծո Ամենակալին, Նորին Արքություն **Տ. Տ. Կիրիլ** պատրիարք բուլղար օրթոդոքս եկեղեցվո, եղբայրական հրավերովը Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Արքություն **Տ. Տ. Վազգեն Ա-ի**, հունիսի 2-ից մինչև հունիսի 6, այցելեց Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ ուղեկցությամբ Սլիվենցի միտրոպոլիտ գեր. տ. Նիկողիմ արքեպիսկոպոսի, հոգ. տ. Իրան վարդապետի և քարեջն. ավագ սարկավագ դուկտ. Վասիլի Վիլիամովի:

Սոփիայից մինչև Երևան պատվիրակությամբ շնչերակցում էին նաև Բուլղարիո և Ռումինի թեմերի հայոց առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկ-

Բուդդարիո օրթոդոքս եկեղեցիների միջև՝ քրիստոնեական միության ոգիով և հետագա առավել սերտ գործակցության կամեցողությամբ:

Երկու պատրիարքները ջերմ սիրով աղոթեցին առ Աստված, որ իրենց գլխավորած երկու քույր եկեղեցիները անասան և ծաղկյալ մնան ու իրենց հոգևոր սուրբ առաքելությունը շարունակեն իրենց ժողովուրդների ծոցում, ժողովուրդներ, ուրոք մեր օրերին աճում ու զարգանում են խալալ և մեծամեծ նվաճումներով, իրենց վերածնված ու նոր կյանքի կոչված հայրենիքների պայծառ երկնքի ներքև:

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հր. Մարգարյան, ի ներկայությամբ ՀՍՍՀ Միմիստրների խորհրդի անդամներ հայ եկեղեցու գործերի խորհրդի Շախազադ Կ. Գալլաքյանի, հունիսի 5-ին ընդունեց Նորին Սրբություն Տ. Տ. Կիրիլ պատրիարքին և Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին՝ իրենց շքախմբի անդամներով: Տեսակցությունն անցավ բարեկամական շատ ջերմ մթնոլորտում:

Նորին Սրբություն Կիրիլ պատրիարք իր շքախմբի անդամներով այցելեց և Հոփլսինի, և Գալանի, և Գեղարդի և Օշականի եկեղեցիները, Գառնիի տաճարի ավերակները, ինչպես նաև Երևանի և Մեսրոպի անվան Մատենադարանը և բուրյալ մեծ բանաստեղծ Յավորովի արձանը, ուր զետեղվեցին ծաղկեպսակներ:

Վեհափառ Վազգեն Առաջին Հայրապետը հունիսի 4-ին հանդիսավոր և պատարագ մատուցեց սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, որին ներկա եղավ բուդդար եկեղեցու պատվիրակությունը՝ ի գլուխ ունենալով Նորին Սրբություն Կիրիլ և պատրիարքին:

Հայ և բուդդար եկեղեցիներու երկու հայրապետների այս հանդիպումը և նրանց զրույցները ընթացան անկեղծ և սրտագին բարեկամության ոգով և ճշմարիտ սիրով ի Քրիստոս՝ հաստատելով հայացքների լիակատար նույնություն մեր օրերի քրիստոնեությունը և մարդկությունը հուզող կարևոր հարցերի վերաբերյալ:

Երկու հայրապետները մի անգամ ևս հայտնեցին իրենց համոզումը, թե քրիստոնյա բոլոր եկեղեցիների մեկտեղումը, փոխադարձ ճանաչումը և համագործակցությունը պետք է առավել խորանան և հետզհետե առավել զորավոր գործոն հանդիսանան աշխարհում և ժողովուրդների կյանքում, սուրբ Ավետարանի ճշմարտությունների և պատգամների լույսին տալ: Հատկապես աշխարհի խաղաղությունը պահպանելու գործում անհրաժեշտ պետք է նկատել բոլոր եկեղեցիների և հավատացյալների միակամ և անվերապահ աշխատանքը, իբրև մեր օրերի աստվածահաճո առաջնահերթ գործ:

Ամեն պատերազմ ժխտումն իսկ է Քրիստոսի Ավետարանի:

Երկու հայրապետները իրենց եկեղեցիների և հավատացյալ ժողովուրդների անուրից կոչ են անում բոլոր եկեղեցիներին և բոլոր բարի կամքի տեր մարդկանց, որպեսզի նրանք միանան՝ պաշտպանելու համար խաղաղության սրբազան դատը, ընդդեմ պատերազմ սանձազերծող չար ուժերի, որոնք այնքան ուժիղներ ու ավերիներ են գործում Վիետնամում ամեն օր, ամեն ժամ՝ բնաջինջ անելով մի ամենը ժողովուրդ, և որոնք այս օրերին իսկ նոր փորձեր են կատարում պատերազմի կրակը տարածելու Մերձավոր Արևելքի երկրների վրա:



Պատրիարքարանգեղոս Բարսեղյանը (ձախումբ) և Եպիսկոպոս Գրիգորյանը (աջումբ)։

Նորին Սրբություն **Տ. Տ. Վազգեն Ա** կաթողիկոս և Նորին Սրբություն **Տ. Տ. Կիրիլ** պատրիարք հրաժեշտ տվին միմյանց եղբայրական ճամբույրով՝ վերստին հանդիպելու և միատեղ աղոթելու ջերմ ու մխիթարիչ մաղթանքներով:

3 հունիս 1968

Գալլի Աթոռ

Այնուհետև երկու հայրապետներին, սուրբագրության համար, ներկայացվեց բուլղար պատրիարքի և էջմիածին կատարած պատմական այցելությունը նվիրագործող հետևյալ հուշագրությունը՝ բուլղարերեն և հայերեն լեզուներով.

Աստուծո հղորմությամբ Մենք՝ Վազյեն Ա, պատրիարհ-կաթողիկոս Ամենայն Հայոց, և Կիրիլ՝ պատրիարհ բուլղար օրթոդոքս եկեղեցվա, այսօր՝ Կիրակի, 4 հունիս 1967-ին, ողջագուրվեցինք սուրբ էջմիածնի կամառներին տակ՝ ի վկայություն ի Քրիստոս սիրո և ևզբայրության մեջ եկեղեցիների մեջ:

«Նդիցի լոյս Տևառն Աստուծոյ ի վերայ մեր: Ամեն:

Սուրբ էջմիածին

4 հունիս 1967

Ժամը 10.30-ին երկու հայրապետներն իրենց շքախմբի և Մայր Աթոռի միարանտիթյան անդամներով լուսանկարվելուց հետո, առաջնորդվեցին Մայր տաճար՝ Իշմա:ն ս. սեղանի առաջ մի անգամ ևս իրենց քրիստո-

նեական եղբայրությունը ուխտը ամրապնդելու և ազդեցելու: Այնուհետև ս. Գույանեի վանք այցելությունից հետո, ժամը 11-ին, մեքենաների շարասյունը ուղղվում է զեպի նրեանի օդանավակայան:

Տ. Կիրիլ սրբազան պատրիարհին անձամբ ճանապարհում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, Մայր Աթոռի և Գերագույն հոգևւոր խորհրդի անդամներով:

Տ. Կիրիլ պատրիարքին ճանապարհում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին ադրնթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանը և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 11.45 ռուսերին ինքնաթիռը ողջերթի բարեմաղթությունների և ծափերի ներքո բարձրանում է եթեր՝ ուղղություն վերցնելով զեպի Մոսկվա:

Բարի ճանապարհ բույր եկեղեցու հույներ պետ, հայ եկեղեցու և հայ ժողովրդի ազնիվ բարեկամ, Նորին Սրբություն **Տ. Կիրիլ** սրբազան պատրիարքին և նրա շքախմբի անդամներին:





ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ

Մայիսի 28-ին՝ կիրակի. «Տօն Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի»՝ ըստ եկեղեցական սրացույցի:

Համանկեղեցական մեծ տոներ Մայր Աթոռում նշվում է ավանդական հանդիսութեամբ:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, Արեւմտյան Նվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար:

Տաճարը լիքն է ուխտավորներով ու հավատացյալների հոծ բաղմութեամբ:

«Հայր մեր»-ի ժամանակ կատարվում է հոգեհանգիստ՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, լիւնահայ եկեղեցական խորհրդի ատենապետ Կարայիս Քրնգրտրյանի ծնողաց հիշատակին:

Հավարտ ս. պատարագի իջման ս. սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, Մայր Աթոռի տոնի առթիվ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Պատարագի սրբազանը իր քովանդակուից քարոզի մեջ անդրադառնում է Հայրապետական Աթոռի հաստատման, Հայաստանում առաջին և մայր եկեղեցու՝ ս. Էջմիածնի շինության

նության պատմական դրվագներին, յստ Լուսավորչի տեսիլքի, «տեղիս այս եկեղեցի տուն աղոթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» քնարանով, և սրբազան բարեմաղթութիւններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, նրա Գահակալի կենաց արեւատության, Հայց. առաքելական եկեղեցու պայծառության և հայրենիաց բարօրութեան և բարգաւաճման համար:

Հայրապետական մաղթանքի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափուրով առաջնորդվում է գահասրահ, ուր շնորհավորութիւններ է ընդունում Մայր Աթոռի համագլխային տոնի առիթով:

Լուսարարապետ գեր. տ. Հայկապետ տրքեպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին՝ հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և քուլոր ներկա հավատացյալների:

Արեւմտյան Նվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը, սփյուռքի քովանդակ հայության որդիական սերն ու երախտագիտութիւնը բերելով Հայրապետական Աթոռին և նրա Գահակալին Մայր Աթոռի տոնի առիթով, միջնորդելով խնդրում է, որ այս-ուրախ առիթով Հայոց Հայրապետը իր բարձր ուշադրության և գնահատանքին արժանացնի սփյուռքի

իր հարազատ զավակներից մեկի՝ լիոնահայ եկեղեցական խորհրդի ատենապետ Կարպիս Ճրնգրտրյանի եկեղեցանվեր աշխատանքի, լիոնի հայոց եկեղեցու շինության գործում:

Վեհափառ Հայրապետը խորապես հուզված Մայր Աթոռի տոնի առթիվ արտահայտված շնորհավորական խոսքերից և ստացված շնորհավորական րազում հեռագրերից և գրություններից, օրհնում է ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով պայծառություն եկեղեցիներին, անսառնակություն՝ Մայր Աթոռ ս. էջմիածնին, բարօրություն՝ հայրենի հողին, խաղաղություն՝ աշխարհին:

Ն. Ա. Յոթնությունը ընդառաջելով տ. Սերուբեյն արքեպիսկոպոսի միջնորդությունը, բարեհաճում է րնդանուր խանդավառության մեջ Կ. Ճրնգրտրյանի կուրծքը պարզարել ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով՝ որպես հայրապետական բարձր գնահատություն, նրա եկեղեցանվեր ծառայության:

Ժամը 3-ին վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իրեն սեղանակից դարձնել միաբանության, Կերպույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «էջմիածին» տմսագրի խմբագրական կազմի անդամներին և այլ հրավիրյալներին:

Ճաշկերույթի ժամանակ Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի տոնը շնորհավորում են տ. Հայկազուն, տ. Սերուբեյն արքեպիսկոպոսները, տ. Ներսես Ժ. վարդապետը, «էջմիածին» տմսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ուրիշներ:

Որդիական երախտագիտության ջերմ խոսք է ասում նաև Կ. Ճրնգրտրյանը՝ հայրապետական




Վեհափառ Հայրապետը գանասրահում ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով զարդալում է Կարպիս Ճրնգրտրյանի կուրծքը (մայիս 28)

տական բարձր շքանշանով պարգևատրվելու առիթով:

Ճաշկերույթը, որն անցնում է ջերմ միևնույնությամբ, ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «էջմիածինն ի հօրէն» շարականով:





ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 14-ին՝ կիրակի օրը, հոգեգալստյան տոնին, Մայր տաճարում կատարվեց հոգևոր ճամարանի երկրորդ լսարանի չորս ուսանողների սարկավագական ձեռնադրությունը:

Մայիսի 13-ին՝ շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվել էր նորընծաների կիսասարկավագական աստիճանի տվյալությունը:

Հոգեգալստյան տոնի առիթով Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց լուսարարայեւ գեր. տ. Հայկազուն արքեպ. Արքահամյանը և կատարեց սարկավագական շնորհաբաշխությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգևոր ճամարանի տեսուչ հոգ. ս. Ներսես Ժ. վրդ. Պողպատյանը:

Ս. պատարագին ու ձեռնադրության խորհրդին ներկա էր Վհագիառ Հայրապետը:

Հոգեգալստյան տոնը հոգևոր ուրախության կրկնակի բերկրանք էր պատճառել հոգևոր ճամարանի տեսչությանը և Մայր Աթոռի միաբանությանը:

Օրվա տոնի նշանակության և ձեռնադրության հուզիչ, սրտագրավ խորհուրդը համակել էր բոլորին:

Ձեռնադրության սրբազան պահին բոլորը հուզումով հիշում էին այն օրը, երբ այսօրվա նորընծաները, անկազմակերպ մտքով ու հոգով, երկյուղածությամբ ու վարանումով բախում էին ճամարանի դռները, իսկ այսօր, իրենց ազատ կամքով, համարձակորեն առնում էին առարկան, վստահ, գիտակից քայլով՝

հոգեպես, իմացապես աճած, ֆիզիկապես մեծացած, և ծնրադրում՝ իշման ս. սեղանի առաջ և ուխտում՝ աննահանջ սիրով և բոլորանվեր ոգով ծառայելու Մայր Աթոռ ս. էջմիածնին, հայ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Ուրախ էին բոլորը:

Ուրախ էր ամենից առաջ Հայաց Հայրապետը, որպես նորընծաների Հայրն ու Խնամակալը, որ միշտ հայրական գորովով և ուշադրությամբ էր շրջապատել իր հոգևոր պավակներին, միաբանությունը, որ իր զիրկն էր ընդունում խոստումնալից նոր եղբայրների, ճամարանի տեսչության ու դասախոսական կազմը, որոնք արդար հունձք էին ներկայացնում Աստծուն և ազգին, և վերջապես ուրախ էին նաև նորընծաները, որ ոտք էին դնում իրենց երիտասարդ հոգիների ամբողջ նվիրումով և խանդավառությամբ եկեղեցու և ժողովրդի ծառայության առաջին աստիճանի վրա:

Արդարև, միշտ հնչել է Մայր Աթոռի կամարների ներքո ռաստումածային և հրկնային շնորհա-ը, որ ամիշտ լնու զայէտս սրբոյ սպանատրութեան առաքելական եկեղեցւոյս, որովհետև երբեք չի պակասել Մայր Աթոռի միաբանության մեջ ծառայության և նվիրման ոգին:

Հանդիսավոր ս. պատարագը շտրունակվում է մինչև սողջոյնս:

Ձեռնադրիչ սրբազանը աստիճանավոր շնորհում է սարկավագական իշխանությունը խորհրդանշող սրբություններով՝ առ' ողմաքութ և սուրբ ուրարս ի ձեռաց Տնաւոն մերոյ:

Յիսուսի Քրիստոսի... Կեանք քո և վարք քո լիցին օրինակ ժողովրդեանս»:

«Ա՛ռ իշխանութիւն ընթեռնու՛յ՝ զօտոր Աւետարանս յեկեղեցիս Աստուծո՛յ՝ յունկն կենդանեաց և յիշատակ մեռելոց»:

Հավատացյալները լուռ ու խոհուն հետևւում են խորհրդի կատարմանը:

Սրբազանը արարողութեան ավարտին խոսում է բովանդակալից մի խրատական՝ նորընծաներին ուղղելով, որ նրանք ղինված ս. Ստեփաննոսի հավատքով ու ոգով, լինեն իրենց քարոզչական, առաքելական ծառայութեան դաշտում ժշակք առանց ամօթոյ»:

Հավարտ ս. պատարագի շորս սարկավագները տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և տ. Ներսես Ժ. վարդապետի առաջնորդութեամբ բարձրանում են վեհարան, իրենց Հոգեոր Հոր՝ Հայոց Հայրապետի օրհնութիւնը ստանալու:

Մայիսի 15-ին՝ երկուշաբթի օրը, ճեմարանի սեղանատանը, ի պատիվ սարկավագների, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում է նաև ճեմարանի դասախոսական կազմը:

Նորընծա սարկավագներին առաջինը շնորհավորում է տեսուչ տ. Ներսես Ժ. վարդապետը:

Հանուն Մայր Աթոռի միաբանութեան խրատական է խոսում տ. Հայկազուն արքեպիսկոպոսը:

Սարկավագներին ուղղելով շնորհավորութեան սրտագին խոսքեր են ասում դասախոսներ Ա. Հատիտյանը, Գր. Գյուլյանը, Ս. Անթոսյանը, ճեմարանի վերակացու Ս. Հովիվյանը:

Ընդունելութեան վերջում, նորընծա սարկավագների անունից շնորհակալութիւն ք երախտագիտութեան սրտագին խոսք է ասում բարեշնորհ Արզար արկ. Մարտիրոսյանը:

Սեղանը փակվում է խմբովին երգված ուրուական ազոթքով:

Սարկավագութեան կոշման արժանացած ուսանողներն են՝

Բարեշնորհ Սասուն Սարկավագ Վարդանյանը, ծնվել է Հրազդանի շրջանի Սուլակ գյուղում՝ 1942 թվականին, Ավարտել է միջնակարգ դպրոցը և 1966 թվականի փետրվարին ընդունվել Հոգեոր ճեմարան:

Բարեշնորհ Հովսեփ սարկավագ Հակոբյանը, ծնվել է Էջմիածնում՝ 1950 թվականին, ճեմարան է ընդունվել 1962 թվականին:

Բարեշնորհ Արզար սարկավագ Մարտիրոսյանը, ծնվել է Սեբաստիայում (Թուրքիա)՝ 1946 թվականին, 1965 թվականին ընդունվել է Հոգեոր ճեմարան:

Բարեշնորհ Վրեժ սարկավագ Ներսիսյանը, ծնվել է Թեհրանում՝ 1948 թվականին, 1965 թվականին ընդունվել է Հոգեոր ճեմարան:





ՏԱՆՆ ԿԻՒԿԻԱՅԻ ԳԱՀԱԿԱԼԻ ԵՎՐՈՊԱ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Էջմիածին» ամսագրի 1987 թվականի մայիսի համարում (էջ 17) հրատարակվել են՝ ա) Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մայիս 2 թվակիր պատասխանը՝ մամուլի գործակալության թղթակցի հարցին՝ մայիս ամսվա ընթացքում Ս. Տ. Խորեն կաթողիկոսի Վատիկան, ԺՆԱ և Քենտրբերի եկեղեցական կենտրոններին տրվելիք այցելության կապակցությամբ և բ) Մայր Աթոռի դիվանի ապրիլ 14 թվակիր հայտարարությունը՝ ի պատասխան սփյուռքից եղած մի շարք հարցումների, ի մասին Անթիլիասի Գահակալի ս. Էջմիածնի իրավասության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին տրվող այցելությանը:

Այժմ խմբագրությունն հրատարակում է Ս. Տ. Խորեն կաթողիկոսի անուցից տ. Գարեգին եպս. Սարգսյանի՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղղած ապրիլ 26 թվակիր նամակը՝ որպես պատասխան Մայր Աթոռի դիվանի ապրիլ 14 թվակիր հայտարարության:

Անթիլիաս, 26 ապրիլ 1987

Ն. Ս. Օծություն Վեհափառ Ս. Տ. Վ ա գ գ ե ն Ա կաթողիկոսին
Ամենայն հայոց

Ս. Էջմիածին

Վեհափառ Հայր:

Այս նամակը կգրեմ հանձնարարությամբը Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետին՝ նորին Ս. Օծություն Ս. Տ. Խորեն Ա կաթողիկոսին:

Ամսույս 21-ին Բեյրութի հայ թերթերեն ումանց մեջ կարդացի՞ք «Հայտարարություն» մը Մայր Աթոռո Ռիվանին կողմե հրապարակված 14 ապրիլին որում մեջ կըսվի թե՛ «Ամենայն Հայոց Հայրապետը որևէ տեղեկություն չունի Տանն Կիլիկիո գահակալի ճանապարհորդության և այցելության մասին, հառաջիկա ամիսներին, Ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին»:

Այսու գրով պարտք համարեցի՞ք հայտնել Ձերդ Վեհափառության որ Աթոռիս Վեհափառ Հայրապետի ձեռնարկած ուղևորությունը Եվրոպա երբեք «այցելություն» մը չէ «11. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին»:

Ա. Աթոռիս 18 ապրիլ 1967 թվակիր հաղորդագրությունը, որ 19 ապրիլին ուղարկված է արդեն Մայր Աթոռ և Էջմիածին, հստակորեն ցույց կուտա ուղևորության հաջորդական հանգրվանները և նպատակները: Իր այս ճանապարհորդության ընթացքին, Աթոռիս Վեհափառ Հայրապետը և Էջմիածնի ենթակա ոչ մեկ թեմի, եկեղեցվո կամ համայնքի պաշտոնական այցելություն կուտա:

Ուստի պիտի խնդրենք Ձերդ Վեհափառությունեն, որ նկատի առնեն այս մշտունը և ոչ մեկ ձևի թյուրիմացության առիթ տրվեր այս առիթով:

Մատչելով ի հասկացր Ձերդ և Աջույն և ցանկալով տեսության հայրության Ձերո, մնամ խոնարհ ծառա՝

ԿԱՐԵՔԻՆ ԵՊՍ, ՈՒՆԻԿԻՍՏՆՆ

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպ. Աթաբախյանը պատասխանում էր տ. Գարեգին եպիսկոպոսի նամակին մայիս 6 թվակիր հետևյալ գրությամբ.

Էջմիածին, մայիս 6

Գերաշնորհ տ. Գարեգին եպս. Սարգիսյանին.

Անթիլիաս

Վեհափառ Հայրապետը այսօր՝ մայիսի 6-ին, ստացավ Ձեր 26 ապրիլ թվակիր նամակը և հանձնարարեց ինձ, որ փոխանցեմ Ձեզի Իր սիրո ողջույնը և բարի մաղթանքները:

Անդրադառնալով Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսի հանձնարարությամբ Ձեր կատարած ճշտումներուն, մենք Ձեր ուշադրության կկամենալինք հանձնել հետևյալները:

Իրոք, ապրիլի առաջին օրերեն սկսել, մեր եկեղեցական մեկ քանի կեդրոններն մեր Վեհափառ ստացավ նամակներ և հեռախոսներ, որոնք հարցեր կուտային և լուսաբանություն կակնկալեին Տանն Կիլիկիո գահակալի զանազան երկիրներ այցելության մասին, նաև ստույգ տեղեկություններ ստացվեցան այստեղ, որ Խորեն կաթողիկոս և Ձերդ Սրբազնությունը անձամբ, գրություններ եք հղած Էջմիածնի իշխանության ներքև գտնվող եկեղեցական համայնքներու հոգևորականներուն և ազգայիններուն՝ Ձեր ծրագրած այցելությանը կապակցությամբ:

Որով շատ թնական էր, որ մեր Հայրապետը Իրեն ուղղված հարցումներուն պատասխաններ Մայր Աթոռիս 14 ապրիլ թվակիր հայտարարության իմաստով:

Ձեր ուղևորությանը շրջաբերական հաղորդագրությունը, 18 ապրիլ թվակիր, Մայր Աթոռ ստացանք մայիսի 4-ին՝ առանց որևէ կից պաշտոնական գրության:

Կխորհինք, թե բարվոք և պատշաճ էր, որ նման ուղևորության մասին, Կիլիկյան Աթոռի կողմն նախօրոք հայտնվեր Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի գիտություն: Լավագույն առիթ մըն էր ցույց տալու օրհնականության և եղբայրական միասնության ոգի. Մայր Աթոռ և Էջմիածնի հանդեպ և լավագույն կերպը՝ կանխելու ամեն թյուրիմացություն:

Եվ այս ոչ միայն Եվրոպայի մեր եկեղեցական համայնքներուն, այլ նաև քույր եկեղեցիներու պետերու Ձեր այցելությանը կապակցությամբ: Ահա թե ինչու Հայոց Հայրապետը թուրքովին անտեղյակ Ձեր ծրագիրներուն և Ձեր հետապնդած նպատակներուն, մամուլի գործակալությանը կողմն մայիսի 2-ին Իրեն նշած հարցումներուն պատասխանեց ծանոթ հայտարարությամբ, որուն տեքստը կգտնեք ներփակ:

Այս առթիվ չենք թաքցներ Վեհափառ Հայրապետի և մեր ամենուս մտավախությունը, թե միգուցե Ձեր այս ուղևորությունը նպատակ ունենա այն տպավորությունը տարածելու, թե Անթիլիասի Կիլիկյան Աթոռը կեդրոնը կհանդիսանա սիշուքի հայ եկեղեցական կյանքին և հայ հավատացյալ ժողովուրդին այնպես, ինչպես վերջին տարիներուն, մանավանդ 1963-ի Երուսաղեմի ուղագործումեն հետո քանիցս ցավով հաստատած ենք: Ձեր Աթոռի՝ նման միտումի վերջին մեկ արտահայտությունը հանդիսացավ Եթովպիո Վե-

հավատ կայսեր այցելության ատթիվ ձեր պաշտոնաթերթ «Հասկ»-ի մեջ լույս տեսած հաղորդագրության եզրակացությունը, թե «Անգամ մը ևս շեշտվեցաւ այն բացառիկ դիրքը, որ Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վերապահված է՝ իբրև կեդրոնը սփյուռքահայության» («Հասկ», 1986, թիվ 10, էջ 418):

Այս բոլորը կկարծենք բախարար հիմունքներ են: որ Մայր Աթոռիս մտահոգությունները արդարացի ըլլան:

Ազգիս Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը միշտ պիտի մնան սաբառով, որ հայրգվին հայ եկեղեցվո նվիրապետական ավանդական կարգն ու իրավասությանն իսկականները և հայ եկեղեցվո միության և մեկության պատմական սկզբունքը՝ սուրբ Էջմիածնի գլխավորությամբ, սկզբունք, որ ամբողջապես կհամապատասխանե նաև հայ ժողովուրդի ազգային հիմնական ու տեվական շահերուն:

Մնամք աղոթակից եղբայր ի Քրիստոս՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ Գերագույն հոգևոր խորհրդի

Սեր կարծիքով Մայր Աթոռ սկզբունքով առարկություն չէր ունենա Տանն Կիլիկիո գահակալի այցելությանն Էջմիածնի իշխանության ներքև գտնվող եկեղեցիներին և համայնքներին, սակայն Ամենայն Հայոց Հայրապետի գիտությանն և օրհնությամբ, և ո՛չ այն ոգով ու գործելակերպով, որ ի հայտ եկավ նաև այս առթիվ՝ մի անգամ ևս ապացուցելով մեզ բոլորիս, թե Անթիլիասը ծուռ ճանապարհներով է ընթանում՝ միշտ կասկածելի նպատակներ հետապնդելով:



Հունիս ամսվա սկզբներին Մայր Աթոռում ստացվեց Վատիկանի պաշտոնաթերթ «Լ'Օսսերատորե Ռոմանո»-ի մայիսի 19-ի համարը, որտեղ լույս է տեսել պաշտոնական հաղորդում Ս. Տ. Խորեն Ա Կիլիկիո կաթողիկոսի՝ Վատիկան, Ն. Արքայություն Պողոս Զ սրբազան Պապին տված այցելության մասին:

Այս առթիվ Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոս, թարգմանը հանդիսանալով Վեհափառ Հայրապետի մտահոգությանն, հետևյալ գրությունը հղեց Վատիկան.

Ս. Էջմիածին, 20 հունիս 1987

Նորին Գերազանցություն կարդինալ Բեային՝ նախագահ Քրիստոնեական Միության Բարտողարության

Վատիկան

Զերդ գերազանցություն,

Հոգեկան խոր գոհունակություն է մեզ համար Ձեզ ուղղել մեր եղբայրական ողջույնը Մայր Աթոռ ս. Էջմիածնից և հղել Ձեզ մեր սույն գիրը:

Գրում ենք. Ձեզ հայտնելու համար մեր մտահոգությունը՝ կապված հայ եկեղեցու ծոցում տալը տարիներից ի վեր ծագած ներքին տագնապի, որ իր վերջին արտահայտությունը գտավ Ն. Ս. Խորեն Ա Կիլիկիո կաթողիկոսի այցելության առթիվ Վատիկան, անցյալ մայիսի 10-ին՝ իբրև հյուրը Նորին Արքայություն Պողոս Զ Պապին:

Մեզ բոլորիս համար հույժ ուրախալի է, որ հայ եկեղեցու բարձրաստիճան գերկայացուցիչներ հյուրասիրվեն և պատիվների արժանանան ձեր եկեղեցու և Ձեր կողմից, ինչպես եղավ Տանն Կիլիկիո Խորեն Ա կաթողիկոսի այցելության պարագան, սակայն մենք խորհում ենք, թե նման ցանկալի առիթներով պետք է ուղիղ կերպով հարգվեն պատմականորեն նվիրագործված տիտղոսները, հանգամանքները և իշխանության սահմանները:

Մենք կարդացինք «Լ'Օսսերատորե Ռոմանո»-ի 19 մայիս 1987 թվակիր ձեր պաշտոնաթերթի մեջ՝ «Երեքշաբթի մայիս 10-ին Սուրբ Հայրը հանդիսավոր ունկնդրության ընդունեց պատրիարքը ուղղափառ հայ եկեղեցու, Ն. Արքայություն կաթողիկոս Խորեն Ա Կիլիկիո»:

Իսկ Նորին Արքայություն Պապին խոսքին մեջ՝ «Ձեր անձին մեջ մենք ողջունում ենք ամբողջ հայ եկեղեցին, որ մեծ Հայաստանի Էջմիածնի հարգամեծար կաթողիկոսի հետ, դուք լեկավարում եք քրիստոնեական կյանքի աշխատանքի դաշտում»:

Կարծում ենք, թե ձեր մեծ եկեղեցուն և Ձերդ Գերազանցության բավարար չափով ծանոթ պետք է լինեն հայ եկեղեցու պատմությունը, նվիրատվետական կարգը և եկեղեցական կեդրոնների իրավասությանց սահմանները:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին մեկ ու անբաժան մի եկեղեցի է, որ ունի մեկ գերագույն պետ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձի մեջ ի ս. Էջմիածին: Հայ եկեղեցու կիլիկյան Աթոռը, ինչպես Երուսաղեմի և Կ. Պոլսի Աթոռները, տեղական իրավասություններ ունեցող Աթոռներ են, որոնք առանձինն երբեք չեն ներկայացրել հայ եկեղեցին մեր պատմության տասնվեց դարերի ընթացքում: Ուրեմն Անթիլիաս տեղափոխված կիլիկյան Աթոռը հանգամանք չունի հայ եկեղեցուն ներկայացնելու և ոչ էլ «Էջմիածնի կաթողիկոսին» հետ բաժանելու ղեկավարությունը մեր եկեղեցու և մեր ժողովուրդին: Անթիլիասի կիլիկյան Աթոռը գտնվում է ս. Էջմիածնի հոգևոր լիերին հեղինակության ներքև, իբրև հայ եկեղեցու նվիրատվետության ծոցին մեջ մեկ տեղական հոգեվոր կեդրոն: Իսկ եթե Անթիլիաս ձգտեր ինքն իրեն ներկայացնել իբրև հայ եկեղեցու գլուխ կամ հավասարազոր Մայր Աթոռ ս. Էջմիածնին, այդ պարագային նա կդիմեր դեպի բաժանում: Եվ շատ ցավալի պիտի լիներ նոր բաժանումներ առաջ քերել եկեղեցիների ծոցում մեր օրերին, երբ քոլորս սիրում ենք խոսել միության մասին:

Անհասկանալի թվաց մեզ նաև Արտավազդ եպիսկոպոս Թրթրյանի իբրև «Եպիսկոպոս Հայոց Ֆրանսիայի» հիշատակությունը նույն ձեր պաշտոնաթերթին մեջ, որ բնավ չի համապատասխանում ո՛չ իրավական և ո՛չ էլ իրական կացության:

Կարդալով ձեր վերոհիշյալ պաշտոնաթերթը, խորհեցինք եղբարաբար գրել Ձեզ այս տողերը՝ հայտնելու համար մեր եկեղեցու և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի լուրջ մտահոգությունը՝ հուսալով, թե այն իր արդար արձագանքը կգտնի Վատիկանի ղեկավար բարձր շրջանների մեջ:

Հաճեցեք. Ձերդ Գերազանցություն, ընդունել իմ ջերմագին ողջույնը և իմ բարի մաղթանքը Ձեր մեծ առաքելության հաջողության համար:

Սիրով ի Քրիստոս՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՌԶԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ Գերագույն հոգևոր խորհրդի





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 19-ին՝ ուրբաթ օրը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հաշիվհում տեղի ունեցավ կոմիտեի վարչության երրորդ պլենումը:

Ներկա էին կոմիտեի վարչության անդամները, մամուլի և մտավորականության ներկայացուցիչներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ:

Պլենումին ներկա էր նաև ու ելույթ ունեցավ Ամենայն Հայոց Հայրապետ Վաղգեն Առաջինը, որն իր ելույթում ասաց.

«Իմ անկեղծ խոսքն ու զնահատանքն եմ հայտնում զեպի այն մեծ գործը, որ սկսեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն երեք տարի առաջ և քաջ առ քաջ առաջ ընթացավ: Կայն հորիզոն է բացվում հայրենիքի և սփյուռքի մեր եղբայրների, քույրերի կապերի ամրապնդման ճանապարհին: Պետք է շնորհակալություն հայտնենք Հայաստանի կառավարությանը, որ հնարավորություն ստեղծեց նման կազմակերպության ծնունդ առնելուն: Շատ ուրախ եմ տեսնելով կոմիտեի արձանագրած հաջողությունները: Վստահ եմ, որ նա է՛լ ավելի կծավալի իր ազդաշեն գործունեությունը: Թուրքի մեկ հիմնական նպատակն է՝ հնարավորին չափ հայ պահել արտասահմանի հայությունը և շատերին փրկել ուժացման ճանապարհից: Ընդունեցեք յավտգույն մաղթանքներս»:



Մայիսի 21-ին՝ կիրակի.— «Սկիզբն Ցարութեան Կերակէից, Յիշատակ եզիայի մարգարէին»:

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Մայիսի 22-ին՝ երկուշաբթի.— «Տօն Սըրոյ Կուսանացն Հոփսիմեանց»:

Օրվա տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ մատուցեց

վեց ս. Հոփսիմեի տաճարում: Պատարագեց և քարոզեց վանահայր տ. Պողոս վրդ. Նշանյանը՝ «Անձինք նուիրեալը սիրոյն Քրիստոսի» ընթացումով:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգհանգստյան հատուկ արարողություն՝ տ. Հոփսիմեի տաճարի վերանորոգության բարերարները Երվանդ Հյուսիսյանի և Օննիկ Մանուկյանի ձեռնդրած և հանդուցյալ հարուգատեների հիշատակին:



Մայիսի 23-ին՝ երեքշաբթի.— «Տօն Սըրոյ Կուսանացն Գայանեանց»:

Օրվա տոնին ս. Հոփսիմեի տաճարում պատարագ մատուցեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Մայիսի 25-ին՝ հինգշաբթի.— «Տօն սըրոյն Յովհաննու Կարապետին և Աթանաղիսեայ Եպիսկոպոսին»:

Ս. Շողակաթի տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգհանգստյան հատուկ արարողություն՝ տաճարի նորոգության բարերար, տեր և տիկին Սուրեն և Շարե Գալենտերյանների ձեռնդրած հիշատակին:



Մայիսի 25-ին՝ հինգշաբթի.— Այսօր երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգեոր խորհրդի լիակատար նիստ, որին մասնակցում էին նաև գեր. տ. Սերսիլե արքեպ. Մանուկյանը և Գերագույն հոգեոր խորհրդի ամբողջ կազմը՝ նորընտիր անդամներով և Ս. Օծությունը Գերագույն հոգեոր խորհրդի կազմը համալրեց նոր անդամներով՝ հրավիրելով Հյուսիսային Կովկասի հայոց թեմի տաջնորդ տ. Պարզ և եպս. Դեմոքյանին, Երեանի գրականության թանգարանի տնօրեն Սուրգիս Լևիխանբեկին և գրակու-

հաղեմ Հովհաննես Թովությանին՝ անդամակցելու Գերագույն հոգևոր խորհրդին:

Նիստը բացելով, Վեհափառ Հայրապետը ողջունեց նորընտիր անդամների ներկայությունը՝ մաղթելով նրանց հաջողություն:

Վերջում գեր. տ. Պարզե եպիսկոպոսը, նախագահ Ս. Մելիքսեթյանը և Հովհաննես Թովությանը շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ իրենց հանդեպ յույց արված բարձր վստահության համար, և խոստացան յուրովսանն աշխատել Մայր Աթոռ ս. էջմիածնի և հայ եկեղեցու պայծառության համար:



Մայիսի 27-ին՝ շաբաթ.—«Տօն Սրբոյն Գրիգորի Նուսուրչին մերոյ ելն ի վիրապէն»։ Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց ս. Գրիգոր Նուսուրչի կյանքի և գործունեության մասին:

Այսօր երեկոյան Մայր Աթոռ վերադարձավ հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որը հին տոմարով Զատիկի տոնի առթիվ ուխտի էր գնացել ս. Երուսաղեմ:



Հունիսի 3-ին՝ շաբաթ.—Հոգևոր ճեմարանում սկսվեցին 1966—1967 ուսումնական տարվա ամալերջի քննությունները, որոնք տեւելու են մինչև հունիսի 14-ը:

Հունիսի 10-ին՝ շաբաթ.—«Գիտ նշխարաց սրբոյն Գրիգորի Նուսուրչին մերոյ»։ Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը:



Հունիսի 11-ին՝ կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը և քարոզեց «Էկե-րինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լե-րինն» քնարանով:

Ս. պատարագին ներկա էր մեծ թվով ուխտավորություն ԱՄՆ-ից և Սուդանից:

Ս. պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և. պատարագի կատարվեց հոգեհաղաւթյան արարողություն՝ Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ, բանաստեղծ Նզվարդ Գուլանճյանի մահվան 10-րդ տարեդարձի առթիվ, ինչպես նաև Նրա բարեպաշտ կնոջ՝ Աղբիսնի Է վաղամեռիկ որդու Մանուելի հիշատակին:



Հունիսի 12-ին՝ երկուշաբթի.—Այսօր տոնվողական ժամը 11.40-ին Մոսկվա մեկնեց քուլդարահայ թեմական խորհրդի ատենապետ Օննիկ Ասլանյանը, որն ուխտավորաբար Մայր Աթոռում էր գտնվում հունիսի 2-ից:





ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
ԵՎ ԽՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԱԲԵ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 19-ին՝ ուրբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ ս. էջմիածին է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երեւանի օդանավակայանում տ. Սերովբե սրբազանին դիմավորում են լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Ներսես Ժ. վարդապետը և Հովհաննես սարկավազը:

Մայր տաճարում Իջման ս. սեղանի առաջ իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Սերովբե սրբազանը վեհարանում ընթերցում է Վեհափառ Հայրապետի կողմից՝ որպես Մայր Աթոռի հարազատ դավանակ և Ն. Ս. Օձուխյան բարձրաստիճան, թանկագին հյուր:

Գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը Մայր Աթոռում մնաց մայիսի 19-ից մինչև հունիսի 12-ը՝ երկուշաբթի օրը:

Սրբազանը ներկա եղավ Մայր տաճարում եկեղեցական արարողությանց, մասնակցեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստերին, բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի Մայր Աթոռ այցելության հանդիսությանց՝ հունիսի 2-ից

մինչև հունիսի 6-ը, ծանոթացավ մայր Աթոռի կյանքին, եղբայրական շփումներ, դրույցներ ունեցավ միաբանության անդամների հետ, ուրեք նրանց անկեղծորեն՝ իրենց նվիրման ու ծառայության համար, այցելեց հոգևոր ճեմարան, ներկա եղավ դաստիարակությանց և ամսվերջի քննությանց, այցելեց խմբագրատուն, Մայր Աթոռի գրասենյակներ, տպարան՝ ամեն առիթով արտահայտելով իր գոհունակությունն ու ուրախությունը՝ Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարված և կատարվող հոգևոր, մշակութային, վանական-վարչական, շինարարական գործերի բարվոք ընթացքի և արդյունքների համար:

Սրբազանը ուխտի զնաց Շիրակի վանքերն ու պատմական հուշարձանները, այցելեց Հառիճա և Մարմաշեն վանքերը, բարձրացավ Արագած, այցելեց Լենինական քաղաք, ս. Աստվածածին եկեղեցի, Երեւանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, մայրաքաղաքի տեսարժան վայրեր ու պատմական հուշարձաններ, եղավ հարազատների, բարեկամների հյուրընկալ օջախներում, շփումներ, տեսակցություններ ունեցավ մտավորականության, արվեստագետների հետ:

Հունիսի 11-ին՝ կիրակի օրը, ժամը 3-ին, վեհարանում, ի պատիվ տ. Սերովրե սրբազանի, ողջերթի մտերմիկ ճաշկերույթ էր տրված՝ միաբանական սեղմ շրջանակում, որին ներկա էին նաև ուխտաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրայր Եպիսկոպոսը, բուլղարահայ թեմական խորհրդի ատենուպետ Օննիկ Ասլանյանը և տեր և տիկին Ճեհրճյանները Սուգանից:

Վեհափառ Հայրապետը ողջերթի ջերմ խոսք ասաց հայրապետական պատվիրակի տ. Սերովրե արքեպիսկոպոսին՝ շնչունով իր ուրախությունը՝ Մայր Աթոռում նրա անցկացրած օրերի համար, և վկայեց իր անձնական սիրո և համակրանքի մասին դեպի սրբազանի անձը:

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը տ. Սերովրե սրբազանին նվիրեց արծաթյա մեծ ափսե ս. էջմիածնի նկարով՝ ի նշան հայրապետական բարձր զնահատության:

Այնուհետև սրբազանին ողջերթ մազթևդին տ. Հայկազուն և տ. Տիրայր սրբազանները:

Ջերմ, անկեղծ ու խորն էին տ. Սերովրե սրբազանի շնորհակալության և երախտագիտության խոսքերը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը:

Հունիսի 12-ին՝ երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11.40-ին տ. Սերովրե արքեպ. Մանուկյանը, Իշման ս. սեղանի առաջ իր աղոթքը կատարելուց հետո, լավազույն տալով որոշյալներով, անմոռաց հուշերով հրովհեղա առավ Վեհափառ Հայրապետից, միաբանությունից և մեկնեց Մոսկվա:

Հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Սերովրե սրբազանին ճանապարհեցին լուսարարուպետ տ. Հայկազուն և տ. Տիրայր սրբազանները և դիվանապետ Հ. Առաքելյանը:

Բարի ճանապարհ մեր սիրելի և թանկացին տ. Սերովրե սրբազանին:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ա Հ Ա Յ Կ Յ Ա Ն Ք

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ 53-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

1966 թվականի դեկտեմբերի 10-ին Նյու-Յորքում, Մտնալըր-Հիլտըն պանդոկում, հումարվել է Հ. Բ. Ը. Միության 53-րդ համադումարը, որին մասնակցել են 69 իրավասու անդամներ.

Համագումարը բացվել է առավոտյան ժամը 10.45-ին՝ ամերիկահայոց առաջնորդ տ. Թորոնտ հայս. Մանուկյանի աղոթքով:

Այնուհետև Հ. Բ. Ը. Միության հարգարժան իսխազահ և ժողովի ատենապետ պր. Ալեքս Մանուկյանը, ողջունելով համագումարի բոլոր անդամներին, հանդես է եկել կազմակերպության անցնող տարվա ընդհանուր պործունեության պատկերը ներկայացնող բովանդակալից, ընդարձակ ճառով:

Հարգելի իսխազահը իր ճառի մեջ անդրադառնալով սփյուռքում սղգապահպանման գործում Հ. Բ. Ը. Միության վիճակված շինարար և պատասխանատու գործին, մեր մշակութային, եկեղեցական-ազգային ներկա կյանքի հրամայական պահանջների և մտահոգությունների կապակցությամբ, ասել է.

«Մեր բաղմալարյան և տառապակոծ ազգը, կես դար առաջ իր գլխուն պայթած բնաշնչումի աղետեն վերջ, այսօր իր գոյությունը կպահն շնորհիվ իր հոգեկան ուժերուն, իր գորավոր ինքնագիտակցության և իր զարգացած մշակույթին, թիվով կաճի և նյութապես ալ կշանա բարօր պայմաններ ստեղծել իրեն համար, ո՛ւր, որ ալ գտնվի: Ներկայիս մոտ հինգ միլիոն հաշվովոդ հայության երկու միլիոնեն քիչ մը ավելին միայն իր հայրենիքին

մեջ կրնակի և իր ստեղծագործ հանճարով հսկայի քայլեր կնետն մոտավորապես, արևտեսական ու շինարարական տմեն մարդի մեջ, և մեր երեքհազարամյա պատմությունը պայան կշարունակի իր այլևս ապահով գրնացքը: Ազգին մնացյալ մասին մեծագույն տոկոսը արտասահմանի մեջ կգտնվի և անոր սպասող ճակատագրին է որ ամեն մտածող հայու սիրտը կճմխ: Շատ ընդարձակ նյութ մըն է ասիկա, և ժամերով ալ եթե ճառենք, զարձալ չենք կրնար դաչն ներկայացնել իր հիմնական մասերուն մեջ: Հարցը, ամենապարզ բանաձևումով մը, կկայանա մեր հետեղճետն հասնող սերունդները ազգին կապված պահելու անհրաժեշտության մեջ, և ստեղծելու այն բոլոր պայմանները որ դանոք անտարբերութենե, ուժացումն և ի վերջո օտարացումն զերծ պիտի կացուցանեն: Կարելի՞ է այս հրաշքը գործել աշխարհի չորս ծագերուն ցրված մեր քեկոդներուն մեջ. Գանատային մինչև Ավստրալիա: Կարելի՞ է, նույնիսկ Ամերիկայի նման հին գաղութի մը մեջ, ուր ազգային կյանքը ամուր խաղիսխներու վրա կհանգչի և որուն տմենապերճախոս մեկ արտահայտությունը պետք է նկատել այս վերջին տարիներուն եկեղեցաշինության ստացած աննախընթաց թափը, կարելի՞ է, կըսեմ, նո՛ւյնիսկ հոս, որպես ճշմարիտ ամերիկացի ապրելով և գործելով մեկտեղ, պահել մեր հայու ոգին, մեր ավանդությունները, ինքզինքնիս կապված զգալ մեր ազգակիցներուն օվկիանոսներեն անդին, և հոգեկան սընունդ, ներշնչում ստանալ տոհմային կյանքի

հավերժական սիրություններն, սյսինքն մեր հայրենիքն, մեր պատմությունն ու մեր մշակույթն:

Պարագան նույնն է եվրոպական երկիրներում մեջ հասակ նետող մեր մատաղ սերունդին համար ալ: Սա որոշ է թե, ինչպես Ամերիկայի մեջ, հոն ևս հետզհետե նվաղ պիտի խոսվի ու գործածվի հայերեն լեզուն, և այս կորուստը, որոշ չափով, զգացողության երաշտի համադր պետք է նկատել, երբ մայրենի լեզվին ձայներեն ազդվիլու և սարսուռու մեր ընդունակությունը կիսամրի ու կըցամբի:

Որովհետև մայրենի լեզուն հաղորդակցության միջոց մը չէ միայն, ինչպես են, մարդկային բոլոր ընկերակցությանը համար, օտար լեզուները, այլ մեծագույնն է հոգեկան այն տարրերուն որոնք անհատի մը ազգային անձնավորությունը կկերտեն:

Այս բոլոր նկատումներով ալ, քանի որ Բարեգործական կոչումն է հայությանը ծառայել և հոգածու ըլլալ սփյուռքի մեջ անոր ինքնության պահպանումին, մեր մասհողությանը մեջ առաջին տեղը կգրավեն նորահաս սերունդը ազգին ծոցին մեջ պահելու ամենակենսական հարցը: Ժամանակ և լուրջ ուշխառանք կպահանջեն անշուշտ նման շատ դժվարին նյութի մը հիմնովին ուսումնասիրությունն ու անոր համար ձեռք առնվելիք միջոցներուն ծրագրումը: Բայց հիմա կուզեմ պարզապես շեշտել թե այս խնդիրները չենք կրնար մոռացության տալ:

Մեր ժողովուրդը այս կարգի գործեր կրսպասէ Հ. Բ. Ը. Միութենէն, երբ դայն իր գուրգուրանքին աուարկան ըրած է և հզօրապես կատարեն անոր ուղեւորումին:

Այնուհետև Հ. Բ. Ը. Միության ընդհանուր քարտուղար պր. Գ. Կիրակոսյան համադրու-

մարին է ներկայացնում 1965 տարեշրջանի գործունեության ընդարձակ տեղեկագիրը, ըստ որի, կազմակերպությունը սփյուռքում իր միջոցներով պահում է 16 սեփական վարժարաններ, որոնցից չորսը՝ երկրորդական ուսման մակարդակով, և ուր սովորում են 206 աշակերտ, և զասավանդում՝ 284 ուսուցիչներ:

Հ. Բ. Ը. Միությունը սփյուռքում նյութական կարևոր նպատակներ է հատկացնում, իր սեփական դպրոցներից բացի, 73 ազգային, հարանվանական և մասնավոր դպրոցների, և հայերենի դասընթացների: Կազմակերպությունը 180 համալսարանական, 32 արհեստական և 55 օտար վարժարաններ հաճախող հայ ուսանողներին ապահովել է կրթական թոշակով:

Այնուհետև մասնագետ-հաշվապետ պր. Ս. Արտուրյան համադրումարին է ներկայացրել 1965 տարեշրջանի հաշվական տեղեկագիրը, Կենտրոնական վարչության զանապահ պր. Զարեղ Գարագյուլյան համադրումարին է ներկայացնում միության 1965 տարեշրջանի էլիմտական գործաւորության պատկերը:

Համադրումարում այնուհետև ողջունի խոսքով հանդես է դալիս թիմակալ առաջնորդ ա. Թորգոմ Կսյա: Մանուկյանը՝ ջերմորեն հիանալով Հ. Բ. Ը. Միության վաթսուն տարիների ազգաշեն գործունեությունը, օգինց ազգասիրության և մանավանդ հայ բրիտանական ոգին հարազատ մարմնացումը նկատեց քարեգործական և Վեհափառ Հույրապետի անունով օրհնեց կազմակերպության բոլոր վարիչները, հաջողություն մաղթեց անոնց նորանոր ծրագիրներուն:

Հ. Բ. Ը. Միության 53-րդ ընդհանուր ժողովը ղեկավարների 10-ին ժամը 5-ին ավարտում է իր աշխատանքները՝ վիր. Ս. Պետիկյանի ուղերձով և աղոթքով:

«ԳԵՂԱՐԴ» ԿՐՈՆԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ

Խմբագրության սնդանի վրա է Մարտինի հայոց ս. Անտուան եկեղեցու ծխական պարբերագրի՝ «Գեղարդ»-ի առաջին համարը՝ զեղեցիկ շտպիկի մեջ, խմբագրիս, որը լույս են ընծայել Մայր Աթոռի երկու երիտասարդ միաբաններ՝ ս. Անտուան եկեղեցու հոգևոր հովիվ տ. Վաղգեն վրդ. Քեշիշյանը և Գամր. Ֆրեդի հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Զերեմեյանը:

Իրենց հոգևոր Հոր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղղած մարտ 10 թվակիր նամակում «Գեղարդ»-ի հրատարակիչ վարդապետները գրում են. «Ահավասիկ Ձեր վականերուն երախայրիքը Ձերդ Վեհափառու-

թյան: Մեր դժվարին պայմաններուն մեջ լույս ընծայեցինք դայն միշտ զոտճով վիր բոնելու համար այն սրբությունը, որուն ծառայելու կոչված ենք»:

Պարբերաթերթը բացվում է առօրե ընդ ժողովրդեանս խմբագրական կոչով, ուր ասվում է, թե «Գեղարդ»-ի հրատարակման նպատակն է ֆրանսահայ եկեղեցական կյանքի մեջ լրացնել կրոնական թերթ օրեննալու պակտան ու անհրաժեշտությունը:

Նման պարբերաթերթի հրատարակումը արդարև փկարներ է, անհրաժեշտ և հրամայական ֆրանսիական հյուրընկալ հոգի վրա հասակ առնող հայ նոր սերունդին բերլու:



Համար ձայնը մեր եկեղեցու, քաղցրությունը՝ մեր աղգային-եկեղեցական սրբությունների, պատգամը՝ հայոց պատմության և հայ մնալու ու հայ ապրելու աղգային արժանապատվությունն ու հպարտությունը:

Այս հավատքով ու վստահությամբ ճանապարհ են ընկել վարդապետները:

Համարում տալագրվել է Վեհափառ Հայրապետի էջմիածինն և վերջինից գեղեցկահյուս քարոզներից մեկը, ուր նշվում է, թե՝

«Հաղար Վեց հարյուր վաթսու և չորս տարիներ անցած են այն սուրբ օրերին, երբ հայ ժողովուրդը վերածնալ Միածնի իշման լուսի փայլատակումով, Քրիստոսի սիրով արդասավորվեցավ Հայ հոգին, և բացվեցավ ճշմարիտ դիրքը հայոց պատմության: Ս. էջմիածինը դարձավ ամրակուռ բերդ մը հավատքի. ան կազմակերպեց Հայաստանյայց ս. եկեղեցին, միավորեց հայուն հոգին, ներքին ուժ և իմաստ տվավ անոր: Ս. էջմիածինը մեր Սինա լեռն է, մեր Ակրոպոլիս, մեր ս.

Պետրոսը: էջմիածինը սակայն անցյալ չէ միայն. ան է նաև ներկա և մեր ապագան: Կենդանի է ան ու մշտանորոգ: Ս. էջմիածինը միշտ կրաշխվի ու չի նվազիր. ինչքան րաշխվի, այնքան կշատանա. ինչքան լույս սփռե՛լ այնքան կշողա:

Ո՛վ հոգևոր Մայր մեր՝ ս. էջմիածին, այսօր, երբ Քեզ կփառավորենք սիրով անարատ, մենք՝ զավակներդ ու ծառաներդ, հավաքով լեցուն, անգամ մրն ալ կուխտենք Քեզ պայծառացնել, Քեզ ուրախացնել, որպեսզի Քեզ մով Աստված ընդ մեզ մնա և մենք՝ ընդ Աստուծո՞ւ (էջ 4):

Այնուհետև տալագրված է ջերմ շնչով ու թափով գրված մի ակնարկ՝ «Գեղարդի վանքը» թեմայի շուրջը՝ Վ. Տ. Վ. ստորագրությամբ:

Շահեկան է նաև «Մեծ պահքի կիրակիները» կրոնական նյութը՝ իր խոհերով և խորհրդածություններով:


«Գեղարդ»-ը հաղորդում է, որ 1966 թվականի գեղեցիկների 19-ին, Մարտիում, ս. Անտուանի «Ռից» կինոթատրոնում հանդիսավորությամբ նշվել է Աստվածաշնչի տալագրության 300-ամյակը՝ նախադասությամբ Ֆրանսիայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանի, որը հանդիսությունը բացել է սղջունչի գեղեցիկ ուղերձով: Հանդիսության մասնաձև տ. Տարոն վարդապետը ընթերցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1966 մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակը՝ Աստվածաշնչի տալագրության 300-ամյակի առթիվ գրված:

Բժիշկ Կարպիս Գաղիսաճյանը ֆրանսերեն գեղեցիկ ճառով վեր է հանել Աստվածաշնչի դերն ու նշանակությունը հայ մշակույթի դարգացման բնագավառում:

Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը իր րանախոսության ընթացքում տվել է օրվա հանդիսության պատգամն ու արժեքը:

«Գեղարդ»-ը ունի նաև ֆրանսերեն մի րածին՝ ֆրանսիախոս հայ նոր սերնդի համար, որը հետաքրքրվում է իր եկեղեցիով և իր ժողովրդի կյանքով ու ապրում հայ ժողովրդի մտահոգություններով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է «Գեղարդ»-ի հրատարակությունը՝ մաղթելով հրատարակիչ-վարդապետներին հաջողություն և հարատևություն՝ իրենց աղօթողու, եկեղեցանվեր ծառայության ճանապարհի վրա:





ԵՅՒԱՐԴ ԳՈՒԱՆՑՅԱՆ

ԲԱՐԱԲԱՅԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ*

Երբ Բարաբրան արձակվեցավ Պիղատոսին Աստվածորդւոյն տեղ անցարքաւ ու անճնուրաց, Ուրախությամբ մը դիվայից անցավ, սուրաց, Դաշտերն դաշտ, իրբն միտել վանված փոսէն, 2ը Քավտալով իր ստեղծից խող, անցմաց:

Ին՝ձ Բաղկաճար՝ ճանշցած բոլոր քառուղիներ, Քաղաքնն դուրս՝ փայլակնարագ կը վազեր ան, Ձեռքերն օղիւն մեջ պրկված, ու իր քերական իրբն ճաճին մը փրկված կ'արտաճաներ Թույնով, անով գալարվող ճիշ մ'անկերպարան:

Չսխիլալնն Դեկապոլիս, Կապիտոնում, Իր՝ արձակված մաճսւլարսի տարակոյտով, Կը շոշափեր մութ մարմինն ու ճակատը գով, Ի. տեսիլքին մեջ կ'լանված, շփոթ տրտում, Իր վազքին մեջ ինկալ խոշոր քարի մը քով:

Մրավն ամեղ կղավ՝ իրբն լալւ էտուն: — Խաչերու մոռն անտառի մը ծոց անվախանն Կորսված էր մեծ հեղուզակը՝ Բարաբրան, Ամեն խորշն կ'որոտար իր մոռլ անուն, Միճշ սողուններ կը վակնին կ'ըն ճամբան:

* Առևտուրայ հայտնի բանաստեղծ եղվարդ Գոլանճյանի մանվան տասնամյակի առթիվ հրատարակում ենք սույն բանաստեղծությունը՝ ի հարգանս հեղինակի ճիշատակի:

Եղվարդ Գոլանճյանը ծնվել է 1880 թվականին Սկյուտաբում (Կ. Պոլիս)՝ գրասեռ Խանստա-վուրի ընտանիքում: Փոքրուց նա շրջապատված է եղել հայ անվանի մտավորականների ընտանի-քներով: Մոտ կողմից ազդեցական էր Պետրոս Գուրյանին, Լյուիա Յեմիլիյանային և Սիպիլին:

Ավուրել է Կ. Պոլսի Պետպետական կոլեջում, ուր և կատարել է իր առաջին բանաստեղծական փորձերը: Երիտասարդ, խոստովանալից բանաստեղծը վաղ հասակից իր աշխատակցությունն է բերում պրեսային մամուլին իր բանաստեղծություններով՝ 1899-ից մինչև 1922 թվականը:

1900 թվականին Կ. Պոլսում հրատարակվում է նրա բանաստեղծությունների առաջին մոդո-վաճումը՝ «Արևելի բոցեր» հատկանշական խորագրով: Այնուհետև «Մարմարե մենություն», «Երկնային մեղեդիներ», «Կառավարի երգեր», «Սերմեր տառ հողի վրա», «Նախկին Բաղաններու ձայներ», «Ապագայի տեսիլներ» և այլ խորագրերով լույս են տեսնում նրա մեծ յվով բանաստեղ-ծությունները, որոնք ցրված են պրեսայի, ինչպես նաև սփյուռմանայի մամուլի էջերում:

Մինչև 1922 թվականը նա, Գոլանճյանը ապրում է իր ընտանիքով Կ. Պոլսում, ապա փոխա-դրվում Սուխարևստ, ուր շարունակում է գրական իր գործունեությունը մինչև իր մահը՝ 1957 թվականը: Նրա մեծ յվով բանաստեղծական-հայրենասիրական, խոհական-փիլիսոփայական բանաստեղ-ծությունները մեծ մասամբ ցրված են մեծում հայ մամուլի էջերում:

Նա, Գոլանճյանի անտիպ և հայ մամուլում ցրված ստեղծագործությունների հավաքումն ու հրատարակումը լավագույնը հուշաձևերը կլինի մեր ճանաչակ գրողների՝ Վարդանի, Ղեկերայի, Սյամանյանի և մյուսների, սերնդակից և գրչակից ազնիվ քննադատների հիշատակին:

Ուրբերուն տակ կը խռոտչվեք մոռն կարմիր,
Ու այլունով կպչած ծառեր, ա՛յ անտեսասի...
Կը փչեհից կուրծքից վրա, համակ սալոսալի...
Նազթաղիներն, մեծ խաչի մը ոտը ծնրադիր,
Ողբուկոծով կը ստրսեր իր սիրտը պարսուզ:

«Ո՛վ Բարաբբա, ի՛նչու իմ սերս սպաննեցիր,
Լիրա՛ծ էի: Երբեք կյանքիդ մեջ, ապիրատ,
Կյանքն ի՛նչ արժեք ունի որտի մը համար վատ.
Լալ՛ չէ՛ր որ դուն քավեիր քու ունիդ անձիդ,
Եվ թողեիր իմ սերս ինձի, սերս անարատ:

«Բա՛յց քանի որ կյանքի պարզւն, ո՛վ անարժան,
Թերաճապատ մութ խւճանեն տրվեցա՛վ քեզ,
Սրբե՛ մեղքերդ, եղի՛ր քարի ու եղի՛ր հեղ,
Կապե՛ Կտիդ, վառե՛ քուրվառդ ու պաշտե՛ Ան
Որ քու ունիդ տեղ խաչեց Սիրտը լուսակեղ:»

Ընդուստ թոթվեց այսահարի իրանն անգոր.
Չէ՛, սիրած չէ՛ր. ծաղիկ մը չէր հոտոտած բնավ.
Ապանցած էր ու գողցած էր. մի՛շտ անիրավ՝
Իրավունք էր կորցած իր տառ մատնեղով կոր.
Աշխարհն ու մարդ արժեք մ'ունեն լո՛վ իբրեւ դավ...

Սակայն ի՛նչու զինովցած էր ու կը վազեր,
Ու կը ստրադ Երոնց իբրեւ հալածական...
Զինքը չէ՛ին թողեր ազատ. ի՛նչ ուժ էր ան

Որ ուներուն վրա զանված՝ զինք կը սալոսեր...
Անդունդի մեզր մակող ամուլ ծառի մման...

Անտիկ Լը ու չէր կրնար ուտել բնավ:
Զիթնիներ, սարավանջին վրա կանգուն.
Իջրն պտտո՛ղ՝ կը թափեին կուար իր գլխուն.
Ու հարիմջներն Երիքովի, ծարավին րավ,
Այլու՛ն է, որ կը մոտենին, միա՛յն արյուն...


Ու մեծ աղբյուրը Սյուքային ուր, օր մ'ուրախ,
Աստվածորդվույն հետ խոսեցա՛վ Սամարումին,
Կ'արձագանքեր խորունկ՝ ճման անապատին...
Ու աղջիկներ, մեյ մեկ թակույկ թներնեց կախ,
Կաթիլ մը ջուր չը խորհեցան տալ այն վատին:

Ամեն մեկը վախե կու տար՝ զինքը տեսնելուն:
Թախտախան հոգնարքն էր, խիղճն վանված,
Ոտքերուն տակ կոխտեղով ծաղիկներ թաց...
Չը կրնալով մեկնել ինք իր ուրախություն,
Դեպի Երոնց մահաբեմն էր կարծես հանված:

Աշխարհի մոռն իր մահաբեմն էր ընդարձակ,
Զի, մոլեգնած խորությունն ուրախությամբ,
Ո՛չ մեկ քանի մեջ չէր կրցած պարփակել զայն,
Ու միջն այսօր, մոզնարք ու Երոյթ անհագ,
Առանց մեռնիլ գիտնալու բնավ, կը վազե ան...

Պուրբ. 1923





Հ. Ա. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

IV.—Հայ խաղերն ու իրենց գաղտնիքը

Առեղծվածներն մեկը որուն համար ուղիղ չարչրված են հայ բանասիրությունը և երաժրչությունը՝ հայկական խաղերու հարցն է եղած:

Այդ առեղծվածը լուծելու համար ինքզինք չարչարեց Կոմիտասն ալ, ու տասնյակ տարիներ անոր հառած մնացին մարդոց հույսերը:

Կոմիտաս չուզեց խաղերու մասին իր հետազոտությունք արդյունքը հրապարակել վերջնական եզրակացություններու հանդիս առաջ: Զույգ տասնյակ տարիներու իր պրոպոտումները որոշ հետևություններու բերած էին անշուշտ պայն, բայց կուգեր լրիվ պարզաբանել խաղերու գաղտնիքը ու հետո միայն գիտական աշխարհին առջև հանդես գալ:

Շատ էին անշուշտ անհամբերները ժամ առաջ այդ գաղտնիքը պարզված տեսնելու. հայ երաժշտության, և առհասարակ հայ արվեստների ու պատմության համար զգայացունց հայտնություն մը պիտի ըլլար եթե գտնվեր խաղերու բանալին. հասկանալի էր ուրեմն մարդոց անձկությունն ու հետաքրքրությունը այդ բանալին գտնված տեսնելու:

Բայց մարդոց գլուխ մըն ալ կար որ սկեպտիկ էր. տրամադիր չէր հավատալու թե այդ խորհրդավոր եղանակը կրնան կարդացվիլ օր մը. ու քանի անոնց վերծանումը կուշտնաբ ալնքան կաճեր իրենց թերահավատությունը:

Խոսքը լենք ըներ դեռ անոնց, որ Կոմիտասի վերապահումը կվերագրեին ձախողանքի, և հեղեանքի առիթ կղարձենին դայն:

Մեկը այն ռաբականագեալներն որոնք քմիծաղով կհետեան Կոմիտասի փորձերուն հայ եկեղեցական երաժշտությունը բերելու հին օրերու պարզության և հայ հին շարականները կարդալու խաղերու օգնությամբ, Արիստակես քհն. Հիսարյանն էր, որ հաղիվ քանի մը տող կրարհաճի նվիրել Կոմիտասին՝ հայ ժայնագրության պատմության նըվիրված և Իդմիրյան մրցանակով ալ պսակված իր գրքույկին մեջ, պատրվակելով որ պիտի չխոսի ապրող դեմքերու մասին, և որ սպան կվերջացնեն իր այդ քանի մը տողը՝ հեղեությունը խառնելով մաղթանքին.

«Մենք ևս շատերու հետ անհամբերությամբ կսպասենք ժամ առաջ տեսնել Նորին Գերապատվության հրատարակելիք տեսություններն Շարականաց հին խաղերուն մասին, այն հույսով որ թերևս մեր մասքին վրա տիրապետող խավարը փարատի, այդ գործին մեջ յուր ցույց տալիք լուսարանություններով»¹³:

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվականի N 11-ից, և—Ժ-ից, 1966 թվականի N 1-ի—2-ից, և—Ժ-ից և 1967 թվականի N 1-ի—2-ից:

¹³ Արիստակես քհն. Հիսարյան, Պատմության հայ Առաքելության, Կ. Պոլիս, 1914, էջ 158—159:

նվ վախճալով որ իր ընթերցողներուն համար բավական թափանցիկ չլլար Վեհի տողերուն մեջ իր սպրդեցուցած հեղնությունը, ողորմելի տեր պապան իր հատորին վերջը, «մոռցված պարբերություններ»-ու կարգին, իր ընթերցողներուն կատաղարկն հետևյալ հավելումը ես ընել. «...եթե երբեք չափազանցություն չեն՝ այդ մասին իր ըրած հայտարարությունները»¹¹, Ավելացնենք, որ հեղինական եռակետերը տեղ պապայինն են:

Հիսարլյան քահանան մինակը չէր Կոմիտասին տքնության վրա ըմբիծաղով նայողներն. տիրացուներու ամբողջ դաս մը կար որ հեղնությամբ կդիտեր Կոմիտասի փորձերը խաղերու գաղտնիքը լուծելու համար, ու կարծես հրճված կզգար երբ հակառակ տարիներու իր որոնումներուն Կոմիտասս դնո ի վիճակի չէր մարդոց ծանուցանելու խաղերու բանալին: Դեռ խոսքը չենք զուհիկ բառախաղերուն զորս կստինք հաճախ.

— Ի՛նչ եղան Կոմիտասին խաղերը...

Իր շուրջինները գիտեին սակայն, որ իզուր սեցած չէին տարիներու իր պրպտումները և որ Կոմիտաս երաժշտական աշխարհը պիտի դնե շուտով զգայացունց հայտնությանց առջև: Դիտեր որ սույն վերջին ամիսներուն ան արդեն կհամագրեր իր եզրակացությունները, և կպատրաստվեր հանդես դալ աշխարհի առջև:

Ու բոլորս կսկսեինք անձկությամբ համաժողովի մեջ իր ելույթին հայկական խաղերու մասին:

Այն տեղագրին ամիսներուն մասին, որոնց ընթացքին Կոմիտաս իր հոգին կշարըրկեր խաղերու գաղտնիքը լուծելու համար վերջնապես՝ թանկագին վկայություն մը ես ունինք: Այդ ամիսներուն՝ 1914 հունվարին թե փետրվարին՝ իրեն այցելած է ուսուցիչ Կոմիտայի Մ. Գնեսինը, որ հանձնարարություն ուներ. հրեական հին «neginot» ձայնանիշներու համաբավոր հետադուտի Դ. Գ. Մագդիտի կողմն, հանդիպել Կոմիտասին, ու լուսաբանություններ խնդրել հրեական և հայկական եղանակներու համեմատական փոխանցությունը միասին: Մ. Գնեսին կպատմե իր այցելությունը Կոմիտասին և անոր տված բացատրությունները հրեա և հայ ժողովուրդներու հին եղանակներուն հանգիստությանց մասին, ու կըսե թե «ինչպես երեսց, Կոմիտասը թեև զբաղվում էր հիմնականում հայկական խաղերով, բայց լավ ծանոթ էր նաև հրեական neginot-ներին ու ավետարանական կանտեղագիայի ողջ բնագավառին»: Գնեսին կհիշե նաև Կոմիտասի տված տեղեկությունները իր իսկ քսանամյա հետադու-

տությանց մասին, ինչպես և այն դժվարություններուն, որոնց բախտ էր այդ հետազոտությանց ընթացքին¹²:



Ու արգարև Կոմիտաս փարիզի երաժշտական համաժողովին մեջ խոսեցավ խաղերու մասին ալ: Ան, ինչպես կգրե Հրանուշ Շահպազ, հայ խաղագիտությունը երեք խոշոր շրջաններու բաժնած է իր ղեկույցին մեջ. հին շրջան նախ (Թ-են ԺԱ դար) որ կհամապատասխանե հայ խաղագիտության ծագումին, միջին շրջան (ԺԲ-են ԺԶ դար) անոր գարգացման, վերջին շրջան (ԺԶ-են ԺԸ դար) անոր խորտակման և անհայտացման:

Երեք հոսանքներ նկատած է Կոմիտաս հայ խաղագիտության մեջ, — հունական քաղաքակրթության ճամբով Հայաստան մտած հոսանքը, փոքր բայց արժեքավոր հայկական հետքեր, կրիկյան շրջանին կաթոլիկ երաժշտության ազդեցության տակ հառաչ եկած այասներումը:

Կոմիտաս վարդապետ պարզած է հետո թե Հայերը թեև ուրիշ ազգերն առած են իրենց խաղերը, բայց զանոնք ազգայնացուցած են, այսինքն անոնց տված հայկական հնչում և հայկական ձայնավորում ու արտաբերություն: Այնպես որ, եթե այդ խաղերը կարգաս իրենց սկզբնական ոճով, պիտի չկարենաս հասկնալ, եթե նկատի չունենաս որ անոնք զործածվելով հայ երաժշտության մեջ՝ ստացած են նոր հոգեբանություն: Ասկե դաս, Հայերը աշխատած են նմանեցնել խաղերը իրենց այրուբներին, գրության ձևը դյուրացնելու համար. մյուս կողմն ճոխացուցել են այդ խաղերը՝ ազգային երաժշտական պահանջները նկատի ունենալով: Դժբախտաբար անուշադիր զրդակներ շփոթած ու նույնացուցած են նման խաղերը, այնպես որ մարդ ստիպված է խաղերու բնագրերը գնելու: Բայց լուրջ բովե անցընել զանազան զրգրերու համեմատական վերլուծությամբ:

Կոմիտաս լուրջ հետազոտությանց և հին ձեռագիր բառարաններու ուսումնասիրության մեջ է որ ի վերջո հաջողած է կազմել «Նաղերու բառարան» մը, որ հակառակ անվան հիշատակված են 219 խաղեր, իսկ առանց անունի խաղեր բազմաթիվ են: Այս բոլորը եղանակագիտոր կամ եղանակաճիշտ են, որոնք երաժշտական բառ մը մեկ նշանով ցույց կու տան: Կան նաև պարզ խաղերը, որոնք 14 եղած են թիվով սկիզբները ու հետագային բարձրացած են 19-ի:

¹¹ Անդ, էջ 179:

¹² «Էյմիթիս», 1946, Դ-Ե, էջ 43—45:

Այս խաղերը Կոմիտաս կրածանն երևք դասակարգելու. ա) Առողջամտության խաղեր (եղանակով Ավետարան կամ դիրք կարգալու համար), բ) տեղունի խաղեր (Քրիստոսի ըսած խոսքերը առանձին շեշտելու համար) և գ) Եղանակի խաղեր (որոնք բուն Էղանակները ցույց կու տան)։ Տեղունի խաղերը առողջամտության խաղեր ալ կդարձանակեն, իսկ Էղանակի խաղերը կպարունակեն թե առողջանության և թե տեղունի խաղեր, ներկայացնելով այս կերպով խաղագիտության ամբողջ դարդացումը։

«Ըստ Կոմիտասի՝ հայ երաժշտության մեջ կան նաև խաղեր, որոնք կծառայեն արտահայտելու ներքին զգացումները։ Ատոնք են Էղանակի դիրքով գծիկներ և տառեր (ա, բ, գ, և այլն), այս վերջիններով հասկցնելու համար այլատեսակ զգացումներ, ինչպես էլ՝ լար, Բ=բարձր, և այլն։ Այս դժիկները և տառերը կգրվեն խաղերու տակ և անոնց բացատրություններն են։

«Նազերու լուծումը կդառնա ութը ձայններուն մեջ (բանալի), որոնք ունեն յուրաքանչյուրը տարբեր հիմնական աստիճաններ և յուրաքանչյուր խաղ՝ նախելով թե ո՛ր ձայնին մեջն է, ըստ այնմ այդ ձայնի եղանակին գույնը կու տա»¹⁶։

Հրահույժ Շահապի այս ընդհանուր ակնարկը Կոմիտասի գեկույցին մասին, — ակնարկ՝ որ, ինչպես գիտենք, դրի առնված է վարդապետին իսկ թեյադրության տակ, ուշինչ չէին ըսեր անշուշտ խաղերու բուն զադունիքին մասին, ինչպես որ պիտի չըսեն այն քանի մը ընդհանուր բացատրությունները, զորս Կոմիտաս ինքն իսկ մեզ ըրավ իր Պոլիս դարձին, և զորս ղեռ պիտի հիշենք։ Դժբախտաբար, սակայն, հայերեն ընագիրը իր բուն գեկույցին՝ լույս աշխարհ չտեսավ ցարդ։ Փոխարեն՝ հայտնվեցավ ֆրանսերեն լեզվով գրություն մը, որ ժՀայ եկեղեցվո առողջանության նշաններուն սխառնմը (Le système des signes de prosodie de l'Eglise arménienne) խորագիրը կկրն, և զոր իր Անանիտին մեջ թարգմանաբար հրատարակելու առթիվ Զոսյանյան կըսն թե Փարիզի Կոմիտասյան հանձնաժողովը դայն ստացած է Պոլսեն¹⁷։ Իրականին մեջ զույգ են Պոլսեն ստացված ֆրանսերեն գրությունները՝ երկուքն ալ հայերեն ընագրին հետևողությամբ պատրաստված, մեկը ամբողջական թարգմանություն է հայերեն ընագրին, սակայն ազճատ ֆրանսերենով մը, և երկրորդը ավելի շուտ ամփոփումն է ընագրին, որ,

կատարված ավելի վարժ թարգմանիչ մը՝ Կոմիտասի կողմն կարդացված է համաժողովին մեջ։

Դժբախտաբար սակայն դեռ չհայտնվեցավ Կոմիտասի ամբողջական ուսումնասիրությունը հայկական խաղերու մասին, ուսումնասիրություն, զոր մեր աչքով տեսած ենք և որմն, ինչպես հիշեցինք, ինքն իսկ ամփոփեց Նավասարդի երկրորդ դիրքին համար իր պատրաստած հոդվածը, ինչպես և Փարիզի համաժողովի իր գեկույցին հայարեն ընագիրը։

Այնպես որ խաղերուն զադունիքը Կոմիտաս տարավ իր հետը, ու հայ երաժշտությանը պատմությունը կշարունակե չգիտնալ թե ինչպես կերգվեն հայկական խաղերով գրված մեր շարականները։

Երախտապարտ ըլլանք երաժշտագետ ու Աթայանին, նախ այն սրտառուլ զուգորանքին համար, զոր կտածն դեպի մեծ վարպետն ու իր գործը և որով կհավաքն, տարիներն ի վեր, ամեն ինչ որ կապված է եղբորախաղ Կոմիտասի կյանքին և ստեղծագործությանը, և նաև գիտնականի շահագրգռությունը համար դեպի խաղերու ուսումնասիրությունը, զայն վերսկսելու համար Կոմիտասի թողած սեղենը։ «Նազերի պորթնմը Կոմիտասի երաժշտական-տեսական աշխատություններում» իր անտիպ ուսումնասիրությունը, և ժՀայկական լազույցին Նուսագրությունը հաստորը զսրան լույս ընծայեց 1959-ին, զրավական մըն են արդեն թե կես պիտի չըման Կոմիտասի սկսած գործը։ Այսին նուխանձախնդրությունը չի կրնար հրճվանով լլեցնել հայ երաժշտության բարեկամները, որովհետեւ եթե Կոմիտաս սերունդ մը թողուց ետին, որ իր բացած շավղեն կընթանա հայ երաժշտության տարբեր մարդերուն վրա, անհրաժեշտ էր, որ իրենց բախտին լլեվեն հայ խաղերն ալ։

«Ինչպես հայտնի է, Կոմիտաս զգտել էր խաղերի բանալին», կըսն Աթայան, այսինքն լուծել էր բարդ պորթնմի հիմնական մասը, բացահայտել հայկական խաղագրության հիմնական սկզբունքը։ Կոմիտասի՝ որպես հայկական երաժշտության տեսաբանի խոշոր հեղինակությունը և այն կարևոր տեղը, որ բռնել է խաղերի ուսումնասիրությունը նրա երաժշտական-տեսական ողջ գործունեության մեջ, անհրաժեշտ են դարձնում նրա կատարած աշխատանքը քննել ամենայն մանրամասնությամբ։ Դժբախտաբար, այսօր մենք կարող ենք խոսել Կոմիտասի հետադուտական մեթոդի առանձնահատկությունների և նրա կողմից առաջադրված հարցերի մասին միայն, հնարավորություն չունենալով պարզել, թե ինչ որոշակի հետևությունների

¹⁶ «Ազատամարտ», 20 հունիս 1914.

¹⁷ «Անահիտ», 1937, թիվ 5—6, էջ 1—7.

հասավ նա իր ուսումնասիրությունների վերջում»¹⁸։

Կոմիտաս, այո՛, գտեր էր խաղերու բանալին, Բայց այդ բանալին մենք չգտանք իր դուրսերուն մեջ, Ոչ մենք, որ, երեք երաժշտագետներու՝ Սյունիի և Մեհրաբյանի, նկարիչ Փանոս Թերլեմեզյանի, Մեսրոպ եպս. Կարոյանի և ուրիշներու հետ մեկտեղ պլուրալիստիկ սնտուկները 1922-ին Պոլսո մեջ, ոչ ալ մեղմ հետո պրպտուր կատարողները, չկրցանք երևան հանել այն թանկագին տետրակը՝ որուն հայտնություն կապասինք այնքան անձկությամբ, ինչ որ երևան ելավ իր ուսումնասիրության պատառիկներն էին լուկա Կոմիտասի հետազոտիչի ուսումնասիրությունը ցույց է տալիս,—կգրե Աթաբեյան,—որ վերը հիշված պատառիկները խավաբանությունը նվիրված նրա բազմահատոր ավարտված աշխատության մասերը չեն (այն աշխատության, որի գույությունը մասին նշել են ժամանակակիցները և ինքը՝ Կոմիտասը)։ Այդ պատառիկները չեն տալիս Կոմիտասի հետազոտության մոտավոր պատկերն անգամ, Այնուամենայնիվ, խաղերու ուսումնասիրությունը մեղ բերում է այն համոզման, որ Կոմիտասի այդ գրություններում շոշափված հարցերը մեծ մասամբ նշանակալից և կարևոր են, նրա կապիտալ հետազոտության հիմքում, մեծ հավանականությամբ, հենց այդ հարցերն են տրված եղել և դրանց ուսումնասիրությամբ է, որ Կոմիտաս ժամանակին հասել է խաղային նոտագրության պարզաբանմանը»¹⁹։

Ի՛նչ փուլթ, թե այժմ կորսված է Կոմիտասի գտած ոսկյա բանալին։ Ան գտնված էր տրևություն և համբերությամբ,—մարդոց թերահավատությունն ու քմիծաղը հեղենիով, Պիտի չգա՛ն նոր մարդիկ, որ անոր թողած հուռուքեն ժառանգեն կայծ մը, և անոր պես գիտնան տքնել և արհամարհել բրթմունքունները։

Մենք կհավատանք որ կու գան։

Ոսկյա բանալին օր մը կգտնվի նորեն։

V.—Գորտերու կրկնոցը

Մինչդեռ Կոմիտաս Եվրոպայի մեջ հայ երաժշտության համար դափնի կիլեր՝ ասոցին, Պոլսո տիրացուները անգամ մը ևս իրար անցած էին, նոր խաչակրություն մը սարքելով մեծ արվեստագետին դեմ, ինչպես չորս տարի առաջ բրեր էին անոր առաջին համերգի օրերուն։ Երկար պարագաներուն ալ հայ եկե-

ղեցվո նվիրատվությանց անունով է որ ասպարեղ կու գալին խաղարամություն նոր ասպետները, երկու անգամուն ալ առաքելության մը պահուն։

Ի՛նչ էր պատահած այս անգամ։ «Որֆեոս, իբրորտ» կրամոֆոնի ընկերությունը, իս Թուրքիո ընդհանուր ներկայացուցիչներուն՝ Հ. և Ժ. Բլումենթալ եղբայրք միջոցով, դիմում ըրած էր հայտնի երգիչ Արմենակ Շահմուրադյանին, որ այդ պահուն Պոլիս կգտնվի, որպեսզի եկեղեցական և ժողովրդական բանի մը երգեր երգե Ղալաթիա Եխսեք Քալգըրմի վրա գտնվող իրենց ստուգիոյին մեջ՝ ձայնապնակներու վրա առնվելու համար, և զաշնակով իրեն ընկերակցի Կոմիտաս վարդապետ։ Գեղեցիկ առիթ մըն էր փրկելու և տարածելու հայ տերաշտական զոհարներն մեկ բանին, և հետևաբար Շահմուրադյան և թե Կոմիտաս վարդապետ սիրով ընդունեցին իրենց եղած գիմումը, և երգատնակի վրա առնվեցին էին այս կերպով զույգ տասնյակ երգեր, որոնք հետևանքներն էին.—Հայաստան, Բամ վառստան, Կոտեկ, Ուստի կուգաս, Տեղ կեցո, Ներս րացվեմ տոնեմ հուսո, Մայր Արաֆսի, Կանչե կուսեկ, Հովաբեմ, Գառուն ևս, Անու տառակ, Անտունի, Հայրիկ Հայրիկ, Ես լսեցի մի անույ ծայն, Սիրուհիս քեզ համար, Խորհուրդ խոսիմ, Հայսմեռ, Ամեն հայր սուրբ, Քրիստոս պատարալալ, Սուրբ սուրբ և Ուրախ չե։

Ձայնապնակները Պոլիս հասան 1914 մայիսին, և «Որֆեոս Ռեքորտ» տան Պոլսո հերկայացուցիչները պանոնը վաճառման հանելեմ առաջ՝ ունկնդրելու հրավիրեցին Պոլսո հայ մամուլի ներկայացուցիչները, և Կոմիտասի սաներն անանք։ Շահմուրադյան և Կոմիտաս Պոլսեն բացակա էին այդ միջոցին։ Գեղարվեստական ճշմարիտ վայելք մը եղավ ներկաներու համար ձայնապնակի վրա առաջին անգամ լսել հայ երգը երկու մեծ արվեստագետներու կատարմամբ, վայելք, որ ահա կհաս գար է կհամակե հայ հոգիները ուր ալ ըլլան անոնք։

Բլումենթալ եղբայրները հունիս 9-ի (մայիս 27) հայ թերթերուն մեջ ծանուցին հաարակության թե վաճառքի դրած են ձայնապնակները։

Ատիկա բավ էր արդեն որ խաչակրությունը ծայր տա ու իրենց որչերեն դուրս նետվեն բոլոր տիրացուները հավար կանչելով։

Խաչակրության այս անգամ ևս զուլս կանգնեցավ պատրիարքարանը։

Եվ ահա, կրոնական ժողովը, իր 1914 հունիս 5/18-ի նիստին մեջ հետևյալ որոշումը կու տար.

«Նկատելով որ տ. Կոմիտաս վարդապետը հայաստանայաց ս. եկեղեցվո ռեվուկան է

¹⁸ Բ. Արաբյան, Հայկական խաղային հետազոտություն, Երևան, 1959, էջ 143։

¹⁹ Բ. Արաբյան, անդ. էջ 149։

Անսուծո տաճարին հասկացյալ սրբազան երգերն իր երգեցողության մեջ վաճառ հանած է, որոնք կրամոֆոնի միջոցով կերգվին ամենուրեք, մասնավոր կրոնական դպրոցումները վիրավորող անպատշաճ վայրերում մեջ, որոշեց ս. պատրիարք հոր հանձնել պարտ ու պատշաճ անօրինելու և խնդրել ս. կաթողիկոսին նկատողություն ընել տ. Կոմիտաս վարդապետին հայ եկեղեցականի բուրոգովին անվանել ընթացքը»:

Այսքանը հագուող չլլալով իր ծիծաղելի նախանձահուզության՝ կրոնական ժողովը հետևյալ որոշումը ևս կկցեք.

«Կրոնական ժողովը որոշեց, որ սրբազան պատրիարքը զրե ոստիկանության դրոսավայրերու և հանրային վայրերու մեջ եկեղեցական արարողություններ պարունակող կրամոֆոնի փլաքներու գործածությունը արգելելու համար»:

Ամենեն տխուրն այն էր, որ կրոնական ժողովի այդ դժբախտ որոշումին մեղսակցած էր նաև հայ դրականության պատկանելի այն զեմքը որ Պոլսո նախկին պատրիարք Նիկիթիուրյանն էր և որ կատենապետներ նիստին: Հոգեկան ընդարձակ հորիզոնով և մտքի քաջասով լայնմտությամբ օժտված այս եկեղեցականը, երկրորդ անգամ ըլլալով, ավագ, զոհ կերթար նվիրականությանց կեղծ պաշտպաններուն: Անոր պատրիարքության օրով էր եղեր Կոմիտասի Փրթի-Շանի համերգը խանդարելու փորձը 1910-ին, և հիմա իր ատենապետության տակ էր որ կրոնական ժողովին մեջ խավարամտությունը պատմուճան կհագներ կրկին:

Ու ինչ որ ամենեն ծիծաղելին էր Կոմիտասին դեմ մղված այս խաչակրության մեջ՝ այն թերությունն էր որով ևս կրոնական պատկանելի ժողովը, — ինչպես այն կսիրի որ անվանելն զինքը, — թույլ տված էր իրեն Կոմիտասին վերագրելու երգեր՝ զորս Շահմուրադյան էր երգած իրականին մեջ, իսկ Կոմիտաս պարզապես ընկերակցած էր դաշնակցի, և գրելու իր որոշման մեջ. «նկատելով որ ս. Կոմիտաս վարդապետը Հայաստանյայց ս. եկեղեցվո սեփական և Անսուծո տաճարին հատկացյալ սրբազան երգերն իր երգեցողությամբ վաճառ հանած է...»:

Այս պարագան առիթ տվավ Նրվանդ Օտյանին «Ժամանակ»-ի մեջ զօրվան սույն մը» ստորագրելու, ուր, «Անհարկի իրարանցման մը արդյունքը» խորագրին տակ կլսեք.

«Սեր պատկանելի կրոնական ժողովին հաղձնալ և անխորհուրդ սրուշումը հանկարծ պատկանելիութենեն ծիծաղելիության վերածվեցավ... Կրոնական ժողովը պարպտայն զոհ դաշնի մեկ քանի ողորմելի պարպտանելներու, որոնց նրաժշտագիտության աստիճանը

նր կերեա, որ թույլ չի տար Կոմիտաս վարդապետի ձայնը Շահմուրադյանի ձայնեն զանաղանելու»:

Հայ մտավորականությունը անգամ մը ևս ծառացավ ախրացունելու և իրենց հովանավորներու անգրկեռական ելույթներուն դեմ, ինչպես ըրեր էր 1910-ին՝ նոր նույն այդ տիրացունները կփորձեն ամուսնանալ Կոմիտասի առաջին քայլերը Պոլսո մեջ, և երբ նույն պատրիարքարանը կաշխատեր խանդարել անոր առաջին ելույթը Փրթի-Շանի բեմին վրա:

Ջարմանալի համերաշխությամբ մը Կոմիտասի կողքին կեցան այս անգամ ևս, Պոլսո հայ մամուլին երկու կարեւոր օրգանները, Ազատամարտը ու Բյուզանդիոնը, ինչպես ըրեր էին 1910-ին ալ, երկու թերթեր որ, հակոտնյա դիրքերու վրա, հաղվաղեպորեն համաձայն կրլային իրարու: Հորովայնն ընտրյալ այն պահանջականը, որ Բյուզանդիոնյանն էր իր թերթին էջերը այս անգամ ալ լայն քացավ, մինչ Ժամանակ, որ Տաճարին հետ մեկտեղ, խաչակրության բեմն էր հանդիսացած առաջին օրն՝ ալգպես ալ մնաց Կոմիտասի գործունեության բովանդակ շրջանին:

Փանսս Թերլեմեզյան և Տիգրան Զեռկյուրյան առաջիններեն եղան որ իրենց ցատու մը արտահայտեցին իրոնական ժողովին դավանական քարեպաշտությանը դեմ, իրենց հրապարակային բողոքով²⁰: Անոնց արձագանք տվավ Աշոտ (Քիչյան) միշտ Բյուզանդիոնի մեջ²¹, և անկ օր մը հետո ելույթ ունեցավ Սադրուշան: Այս վերջինը կզրեր.

«Ո՞վ մեզի իրավունք պիտի տա զրկելու հայ ազգին մեծամասնությունը այն վեհ հանուրեն՝ զավաններու կամ արասահմանի մեջ ապրելուն պատճառով: Կոմիտասի նման տաղանդ մը բոլոր ազգին կպատկանի, ընդհանուր մարդկության ձիրքներն և իրավունքներն է. ի՞նչ տրամաբանությամբ պետք է վճռեք, որ միայն մեկը, քաղաքներու մեջ բնակող հայերս, պետք է լսենք անոր ձայնը և հեռու բնակողները կամ ապագա սերունդները պիտի զրկվին այս իրավունքեն»²²:

Անդին Մելքոն Կյուրճյան կզրեր.

«Թող մտնեն երգերը ո՛ւր որ կուզեն, ո՛չ պիտեռնեն կարքապղծե զանոնք, ոչ զինովի կորսված հոգին: Ու, ընդհակառակը, եթե քախտավոր են անոնք մանեկ զինովի աշխարհներն ենք, անշուշտ կրենք քարերար ազդեցություն մը:

²⁰ «Ժամանակ», 1914 հունիս 9, 22.

²¹ «Բյուզանդիոն», 1913, թիվ 5370.

²² «Բյուզանդիոն», թիվ 5372.

²³ «Բյուզանդիոն», թիվ 5373.

Երեսանց մի՝ գատեք:

Ու ինչպե՞ս կժպրհի տիրացու մը, տեր-
պապա մը իր խումբովը խոսիլ Պանուն սըր-
բության, հանուն արվեստիս:

Զուլացա՞վ նաև Արշակ Զուպանյանի խոսքը
Փարիզին: Զուպանյան, որ առաջին իսկ պա-
նն թե-թիկունք հանդիսացեր էր Կոմիտա-
սին՝ վարդապետին կողքին մնալով անոր
առաքելության բոլոր հանգրվաններուն վրա,
գործակցեց էր անոր՝ ինչպես 1901-ին Նույն-
պես 1906-ին՝ երաժշտական աշխարհին առ-
ջև անոր ունեցած ելույթներուն առնել, ինչպես
և հիմա, իրավունք ունի որեւէ մեկին ավելի
հայթակղելու Պոլսո կրոնական ժողովին կա-
տարած տխուր սխրագործութենէն, մանա-
վանդ ականատեսս ըլլալէ հետո այն փառա-
վոր ընդունելության՝ որուն քանի մը օր ա-
ռաջ արժանացեր էր Կոմիտաս Փարիզի երա-
ժշտական համաժողովին մէջ: Զուլդ մը
հողվածները, զորս ան ղեկողեց Ռյուզան-
դինս-ի մէջ՝ «Անկրոն որոշում մը» խորա-
զրին ներքէ²¹, ամենեւ ջախջախիչ պատաս-
խան եղան կրոնական ժողովին մէջ բազմող
Պիղատոսներուն, և դուրսի գորտերու կըր-
կըռցին:

Ստորև կղեկողին այդ պատմական հոգ-
վածք.

ԱՆԿՐՈՆ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Ա

Կոմիտաս վարդապետի մասին կրոնական
ժողովին որոշումը ամենեւ անկրոնն է որո-
շումներուն:

«Կրոնք»-ը, եթե զայն ըմբռնենք ոչ թե
տերտերական, տիրացուական, խանութպա-
նական իմաստով, այլ իր իմաստասիրական
բարձր ու բուն առումով, ուրիշ բան չէ բայց
եթե հավատք գերազույն Արդարության և գե-
րագույն գեղեցկության, կրոնական ժողովին
որոշումը հայհոյանք մըն է գեղեցկության
դեմ, և զուրկ է Արդարության հետին նշույ-
լէն:

Ենթադրենք ըստի մը թե կրամոֆոնով հա-
յոց եկեղեցական երգերը ամբողջ աշխարհի
գեղարվեստասերներուն ծանոթացնելը ան-
վայելուչ բան մը ըլլա—նույնիսկ մեկ ըստի
ասանկ ենթադրութիւնն մըրն էր դժվար է,
բայց այդ քաջութիւնն ունենանք և ենթա-
դրենք,— միթէ Կոմիտաս վարդապետ այդ ու-
րարքին զատ ուրիշ բան չէ՞ ըրած իր կյան-
քին մէջ: Որն է այն հայ եկեղեցականը, որ
Կոմիտաս վարդապետին ավելի թանկագին
ծառայութիւններ մատուցած ըլլա հայ գե-
ղարվեստին, և ատով իսկ հայ ազգին և հայն

ինքն հայ եկեղեցին: Անիկա արեւելյան լուծեն
աղատեց մեր տոհմային երգը, անիկա մեր
Պոլսո երաժշտապես օտարացած հայութիւն-
ներ հայացուց, անիկա եկրոպացիներուն հար-
կանքն ու հիացումը գրավեց գնդի մեր գե-
ղարվեստն ու մեր ցեղը, ու անիկա սորվեցուց
մեզի եկեղեցական երգը երգել ու լին այս ա-
մենուն մէջ: Ի՞նչ կապ ունի այս ատելութիւն
վրա հիմնված արարքը՝ կրոնքի հետ:

Բայց քննենք բուն խնդիրը: Ի՞նչ է Կոմի-
տաս վարդապետին գրածը: Մի՞թէ իրոք ան-
վայել, կրոնքի վեհության վնասող, հայ ե-
կեղեցիւ արժանապատւության արատ բե-
րող բան մը կա՞ այդ արարքին մէջ: Կրամո-
ֆոնի միջոցով հայ եկեղեցական՝ ինչպես և
ժողովրդական երգերը տարածելը՝ ոչ միայն
ոեւէ անպատեհութիւն չունի, այլ մեծապես
պատմաբար է մեր ազգին և մեր եկեղեցիւն,
և օգտակար է ամբողջ մարդկության, ապր-
վացնող, մաքուր, վեհ երաժշտութիւնն մը
ծանոթացնելու ամենուն, անծանոթ մնացած
մեծ գեղեցկութիւնն մը, ծառայութիւն մատուցունել
է բովանդակ մարդկության: Արտակարգ
անձկամտութիւնն պատք է կարծելու համար
թե եկեղեցիւ երգերը եկեղեցիին սեփակա-
նութիւնն են և թե անկից դուրս պետք չէ
ելլեն, այդ ըմբռնումով էր, որ տխուր իսկ
Փարիզ, երբ առաջին անգամ Կոմիտաս վար-
դապետ եկեղեցական ու ժողովրդական ե-
րաժշտության նվագահանդես մը ավա՞ր հայ-
կական միութիւնն նախաձեռնութեամբ, ու-
մանք սկսան քրթմնել, «Մեր նվիրական եր-
գերը լենայի վրա հանել անվայել է», այդ-
պիսիներուն մէջք պատասխանեցին թե
նվագահանդեսի մը բնմը գինետան մը կամ
ցոփ թատրոնի մը հետ պետք չէ շփոթել: Թե
ան ալ նվիրական է ու մաքուր ինչպես եկե-
ղեցիւ մը բնմը, քանի որ անոր ալ նպատակն
է հոգիներն ազնւացնել, և օրինակ բերելով
նույն ինքն աններող հոռմեական եկեղեցիւն
մեծագույն սրբավայրին՝ Վատիկանի՝ գլորա-
պետ Աբբա Փիրոզիի Պապին իսկ թույլտու-
թեամբ Փարիզի մէջ կրոնական երաժշտու-
թյան նվագահանդես մը տված ըլլալը, հաս-
կեցուցինք մեր քրթմնադոներուն թե տղատա-
սեր Հայաստանայց եկեղեցին հոռմեական
եկեղեցիին ավելի բծախնդիր ու խափանա-
րար չէր կրնար ըլլալ: Միևնույն բանը կարելի
է ըսել կրամոֆոնով մեր եկեղեցական երգերը
տարածելու մասին: Կաթոլիկ և բողոքական
եկեղեցիներու կրոնական երաժշտութիւնն ու-
մենեւ գեղեցիկ կտորները կրամոֆոնի վրա
անցածին և երաժշտասերներու տրամադրու-
թյանը տակ դրված, ինչո՞ւ հայոց եկեղեցի-
ական երգերը մնան մեր եկեղեցիւն մէջ
փակված, թող ամբողջ աշխարհ իմանա պա-

²¹ «Քրոնական», 1924 հունիս 24 (հուլիս 7),
№ 5384, և հունիս 25 (հուլիս 8), № 5385:

նոնք և զմայլի տյն սաղգին վրա որ ալդպիսի Կոզեշունը ու վսեմ երգեր կրցեր և ստեղծել:

Հիսուս, որ կրոնական ժողովի անդամներին շատ ավելի լավ կըմբռներ կրոնի էությունը, երբեք չէ ըսած որ իր խոսքը, իր քառաբանությունը եկեղեցիներու մեջ միայն պետք է լսվի, ինքն իսկ կնախընտրեր ժողովրդին մեջ մտնել, ամենն խոնարհ հարկերը երվալ, լեռան մը վրա՝ քաղ սղին՝ քաղմությունի մը համարձեղ, և իր խոսքը շնորհելու Եկեղեցական երգը՝ Հիսուսի խոսքին երաժշտական արտահայտությունն է: Լեռնիկա իրավունք ունի, մեծ վարդապետին իսկ տված օրինակովը, ամեն տեղ մտնելու, և ամեն տեղ տնիկա կմնա մարտը, ու մաքրագործող:

Տարիներ առաջ՝ ես ինքս Շահմուրադյանին թելագրած եմ մեր եկեղեցական ու ժողովրդական երգերին մեկ քանին երգել կրամոֆոնի համար: Մեր լեռնիկա քառաբանությունը համար մեծապես նպաստավոր կնկատեի ատիկա: Ես շնորհակալություն արժանի կգտնեմ Շահմուրադյանը որ այդ գաղափարն իրագործելու նախաձեռնությունն ունեցեր է, և շնորհակալության արժանի՝ Կոմիտաս վարդապետը, որ, գործին սիրուն համար՝ նույնիսկ երկրորդական գերը, ընկերացողի դերը կատարել չէ մերժել: Լավագույն էր՝ ըստ իս՝ զեղարվեստական տեսակետով, որ եկեղեցական երգերն առանց ընկերացման ըլլալին՝ ինչպես են մեր եկեղեցիություն մեջ, և Կոմիտաս վարդապետ, փոխանակ ընկերացողի դեր կատարելու՝ ինքն իսկ երգեր այդ երգերին մեկ քանին, ո՛ր է մեղադրելի բան ըրած պիտի լըլար ատով, ընդհակառակն: Ինքը վարված է՝ անգամ մը ես մեծ վեհանձնության մը և անձնագործության մը, ուլած է աջակցիլ Շահմուրադյանի գեղեցիկ և բազմօգուտ ձեռնարկին, և ինչպես իրմե իսկ կիմանամ՝ ինքը դարձացած է որ իր անունը դրած ըլլան սղգերուն մեջ. ատիկա եղած է առանց իր հավանության, և իր աջակցությունը բերեր է գեղեցկագույն հայ երգիչին՝ որպեսզի հայ երգը աշխարհիս ամեն կողմը ներկայանա լավ երգված ու լավ բնկիրացված:

Ըսել թե Կոմիտաս վարդապետ ատիկա րրած է՝ սղրամ վաստրկելու համար», ինչպես կհայտարարեն կրոնական ժողովրդ, անօրինակ անարդարություն մըն է՝ գործված այնպիսի գործիչի մը հանդեպ, որուն ամբողջ կյանքը անձնավիրության, անձնազոհության, իղբալի մը բոլորանվեր անձնատվությունն է:

Ըսել թե կրամոֆոնի միջոցով այդ սրբազան երգերը անմաքուր և անվայել տեղովանք պիտի երգվին ու սրբապղծվին, ամենն տղայական առարկությունն է: Այդ պարա-

դային, կրոնական ժողովները տարիս ի վեր ինչպե՞ս թույլ տված են որ մեր սրբազան մատյաններն ու կրոնական բանաստեղծությունները տպագրվելով մատչելի դառնան սովորուն, չէ՞ որ քահանաներ, վարդապետներ տպագրած են հազարավոր օրինակներով կրոնական գրքեր (և ատով իրոք դրամ ալ վաստկած են): այդ գիրքերը միթե անվայել տեղովանք չեն մտած: Զի՞ կրնար պատահած ըլլալ որ հանրատան մը զեկավարուհին պարապ ժամերուն՝ մեղքերը քիչ մը թեթեւեղելու համար՝ Աղթնագիրք մը թղթատելու զսղափարն ունեցած ըլլալ Ուրեմն պետք էր արգելել կրոնական գիրքերու տպագրությունը...

Կրոնական ժողովին որոշումը ըղխած է այն սխալ գաղափարին, որուն համեմատ ումներ կվարձեն թե եկեղեցիի երգերը, ինչպես սպասները, միմիայն պաշտամունքի առարկաներ են, ո՛չ, անոնք նույն ատեն զեղարվեստի առարկաներ են, անոնք աշխարհիս մեջ եղած ամենն թանկագին ու մաքուր բանը, և իրոք այդ պետք է որ անոնք ծանոթ դառնան բոլոր մարդոց ու իրենց աղնվացնող գերը կատարեն ամեն տեղ: Ասիկա հասկացած ըլլալուն ու այդքան բազմօգուտ ձեռնարկ մը դատապարտության արժանի նկատելուն համար է որ ես կրոնական ժողովին անդամներուն տված որոշումը կհամարեմ հայհույան մը գեղեցկության գեմ:

Այսպիսի որոշում մը մեզ ետ-ետ կտանի մինչև միջին դար: Բայց ի՞նչ կրսեմ նույնիսկ միջին դարը, գեթ մեր հայկական միջին դարը, կրոնամուր բայց և գեղեցկամուր, պիտի չուղեր այդպիսի որոշում մը քվեարկելու: Ասիկա կրնա «պարապղծ» մը թվիլ, բայց ես պիտի աղացուցանեմ:

Բ

Միջին դարը մեր մեջ, ինչպես ամեն տեղ, եղած է կրոնի և կղերի միահեծան տիրապետության շրջան մը, ու մեր մեջ ավելի քան այլուր: Բայց ԺԳ դարեն հետո, — մեր միջին դարը իրապես մինչև ԺԷ, նույնիսկ մինչև ԺԸ դար կերկարածգվի, նույնիսկ ԺԹ-ի սկիզբը, — կտեսնենք որ ժողովրդական քնարը կակսի մրցել վանական ընտրին հետ, ու քիչ ատենեն՝ ինքն իսկ կըլլա գերիշխան, այն աստիճան որ եկեղեցական բանաստեղծներն շատեր կսկսին աշուղներու լեզվով, ոճով գրել և նույնիսկ անոնց սիրական նյութերը՝ դինի, գարուն, սեր, վարդ ու սոխակ և այլն, իրենց ներշնչարան առնել: Սքողելու համար իրենց երգին զուտ աշխարհիկ բնույթը, անոնք մորթ միաստիկական իմաստ մը կուտան վարդի ու սոխակի սիրերգին (Առա-

քէլ Բաղիշեցիի համար վարդը Աստվածածին է և սոխակը Գարրիկի հրեշտակը, Զարարիտ Գնունյաց եպիսկոպոսին համար վարդը Հոգին կամ Աստված կխորհրդապատկերն ու սոխակը՝ սիրող սիրտը), բայց իսկապես սիրտ երգեր են անոնք, սիրո՞ւ իր թե՛ միասնական և թե՛ աշխարհիկ երևույթով զգացված ու արտահայտված. ոմանք (ինչպես Գրիգոր կաթողիկոս Աղթամարցի) այդ սիրային երգերն են և քանիսն Աստվածածնին կուղղեն, ո՞վ սակայն չի զգար Աստվածածնի այդ լուսեղեն գիմակին տա՛ի՜ վանեցի ազվոր աղջրկան մը վարդ գեմքը որ ներշնչեր է Աղթամարի զմայլելի երգիչը:

Ուրիշներ, նույն ինքն Աղթամարցին, իրմե առաջ հոյակապ Կոստանդին նրզնկոցին, Սսո կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցին, իրմե հետո Մեքաստացի Ղազար երեցը, Բերդակեցի սարկավազը և ուրիշներ բացե՛ ի բաց կերպն զայտնին ու գինիին տարփահրավոր ջերմութունը, և զեղեցիկ վրդովիչ հրապույրը, անշուշտ ամենքն ալ իրենց երգը կվերջացնեն աշխարհային իրերու ունայնությունը հռչակելով, իրենց այգպիսի երգ մը երգած ըլլալու մեղքին համար ինքզինքնին կշտամբելով և երկնավոր սիրուն միայն նվիրվելու հրավիրելով ինքզինքնին, բայց այդ վերջաբանը՝ վարպետութուն մըն է, ճարպիկ քնշի մը, պատշաճութունները պահելու ջանք մը, երգը կմնա՞ հակառակ անոր՝ աշխարհիկ երգ, նվ անոնցն ոմանք այնքան զեղեցիկ են, որ բուն իսկ աշխարհիկ աշուղներուն, մինչև անդամ Քուլակին նախանձը պիտի կրնային շարժել: Տեսե՛ք՝ օրինակի համար՝ Մեքաստացի Հովսեփ սարկավազին սուքնուչ սիրերգը, որ դեռ անտիպ է, և որուն լուսանկարչական վերարտադրությունը կատարված քանաստեղծին մեկ ձեռագրին վրայն որ կգտնվի Բնուլինի արքայական մատենադարանը, իմ բազմահմուտ ու սիրելի քարեկամս՝ էջմիածնա միաբան Գարեգին վարդապետ Հովսեփյանը իմ խնդրանքովս ինծի հաճեցավ գրկել այս օրերս, կարդացե՛ք և զմայլեցե՛ք (ու թող այս միջնադարյան լեղվի, քնարերգության ու տաղաչափության գողտորիկ գոհարը քիչ մը լույս ու զեղեցկություն բերն ցորցնեն կրոնական ժողովին սգեղ որոշման մեր միտքերուն մեջ ստեղծած ձանձրութիւն և սրտնեղութիւն զժգույն մոռոխութիւն մեջ):

Հիս նայե շիտակ, իմ քա՛ղցրը խոսուն,
Թե որպէս ելնեմ, հո՛գի, հետ քեզ ևս ի հուն.

Պայծառ ևս կերպիկ, գո՛հար, նրման ա-
րեւուն.

Քաղցրիկ խոսք ունես, անո՛ւշ, նրման
պլպլոյին:

Որպէս համասփյուռ գեղով ծաղիկ աննը-
ման.

Տուն իմաստութեան ևս դու և բըժըշկաբան,
Շատր հորդվոց մարդկան, հո՛գի, տեսող
կու ցանկան.

Ի սիրուդ մաշեն հաշխարհս և կարոտ մը-
նուն.

Վարդենյաց նրման բոլոր ևս կներ ճոճուն,
Բաղեղին նրման ոլոր ևս բեղ փալթութան,
Բայց խառ կա ի մեջ, հո՛գի, մեր թշնամա-
կան.

Ոչ իշխն մտնել պլպլուն, մտնել ի վրտուն

Ռ՛մ, է՛ր կու նայես, գո՛հար, գու ի հիւ-
խտոր.

Քան ըզլուսերկա լուստ սուրաթդ է բոլոր.
Վարսդ է մանուշակ հոտով, վրդիդ դա ոլոր,
Սրտիկս է խոցեր սիրով, միտս եղև մուրոր

Սիրուն սիրամարդ անդին ևս պայծառած,
Սրտիկս է մաշել վաղուց՝ ուրտխանա քե.
Կերպով գեղեցիկ պայծառ՝ հումա հովտն
ձե.

Որ քեզ վատ ասե այստմ՝ հինքն հապար-
դե.

Այսօր կա՛ց ուրախ, հո՛գիկ, և ըզսիրտըդ
բաղ.

Տեսող կարոտած սիրով էաք և պասքած.
Իրսեցի զբարբառդ անուշ, ելա խնդացած,
Քո անուշ լեղվովդ քաղցր ելա դարգու-
րած:

• Փափաքիս բանի տնմիտ, բայց շատ մի՛
խոսիր,
Հովսասա՛փ, մեղաց ի հետ գերի մի՛ լինիր.
Գրեա՛ միամիտ սիրով առ Աստված կացիր.
Չսեր աշխարհիս թող սրտիվ և զշահդ ի-
մացիր:

Կոմիտաս վարդապետը այսպիսի սիրերգ-
ներ չէ գրած: Արդ, ենթադրելով իսկ որ ե-
կեղեցական երգերը կրամոֆոնի համար եր-
գելը հանցանք ըլլա, ատկեց շատ ավելի մեծ
հանցանք է կրոնականի մը համար՝ աղվոր
աղջկան մը վրա քանաստեղծություն գրելը:
Ու ևս չեմ ձածկեր որ եթե կրամոֆոնի հա-
մար եկեղեցական երգեր երգելը քնավ մե-
ղադրելի չեմ գտներ ոնէ կրոնականի (կրավն
որ լավ երգե), սկզբամը՝ իրոք անվայելուչ
կգտնեմ եկեղեցականի մը սիրային ել-գոր
գրելը: Եղմարիտ կրոնական քանաստեղծը՝
Նարեկացին, Շնորհալին, Առաքել Սյունեցին,
Ֆրիկն են, Աղթամարցին, Թլկուրանցին, Եր-
զնկացին աշխարհի կյանքն ապրելու հա-

մութ ծնած էին, անոնք իրապես աշուղներ էին տմեն Բանին տուալ, որ կրոնական ղեկավարում աշուղներին, ինչպիսի ունին արդեն միջնադարյան բոլոր աշուղները Բայց այս նկատողությունն ունեցողակի ընկել հետո, ո՞վ կրնա այնքան կոպիտ և տպիրախտ ըլլալ որ քարկոծելու ելլե այդ մեծատաղանդ բերթողները որ մեր դրականությունը ճշխացուցեր են այդպիսի լմայելի երգերով: Մանեն Լևոնով, ամենին խորին և ամենին սրտահույզ վեպեր, որ երբեք դրված ըլլա, իբր հեղինակ ունի Ֆրանսացի կրոնական մը, արքա Փրիկտե, ո՞վ մտքն կանցրեն քանադրել զայն այսօր, ոչ իսկ կղերականները: Արդ, շահեկանը ներկա հարցին մեջ՝ դիտարկել է թե մեր միջնադարյան նախնիք, կղերական ու աշխարհիկ ամենքը մեկանց, ի՞նչ վարմունք ունեցած են այդ եկեղեցական սիրերգուններուն նկատմամբ: Մի-այն Սրղիկացին է որ իր մամանակակից (ԺԳ դար) կղերականներուն մեծ մասնն հալածված ըլլալու մասին կգանդատի, և անոնցմէ յհասկցվելուն, շղատհատվելուն ու վրապարտվելուն համար դատուորեն կողորս:

Պրիաթ կանչեմ հագար : ահեղ հատուլ քե-
րամ լալով,
Ի հանդիս մարդկան մեռաց զհոգիս էքեմ
անշնչ հրով...
Ես չունիմ հանգստություն, հերակ խոցիմ
անդետ խոսով...
Զի սուրտթե են պեսիֆոթ, կան կենդանի
և չեն հոգով...
Ոմանք շար են հետ ինձ և նախանձով են
հիմ վերա... են:

Մյուս բոլոր սիրերգու եկեղեցականները ունեցաւ թանք չեն կրած. բնդհակառակն, ամեն-նախորին սքանչացումով և հարգանքով պաշարված են, բոլոր ձեռագիրներուն մեջ (ստույգ մեծ մասամբ զրված են վանքերու մեջ՝ կղերականներու ձեռքով) անոնց այդ երգերը՝ իրենց զուտ կրոնական երգերուն հետ օրինակված են, շատ հաճախ «Տաղ աղնիւ», «Տաղ սիրո անուշ», «Տաղ ուրախության» վերնագիրներով, և բոլոր հետագա հեղինակները այդ՝ երգիչներուն անունը հիշած են պատկառանքով և սքանչացմամբ: Ամենքի ալ անոնց մեջ տեսած և գնահատած են սովորաբար առաջ «տաղանդավոր հայեր», մեր աղգային Բանաստեղծությունը հարստացնող հոյակապ երգիչներ, և իբր այդ անոնց անունը, հիշատակն ու գործը գործուրանքով պահպանած և մինչև մեզի հասուցած են: Եվ արդեն պետք է ըսել թե այդ սիրերգունը

զրոյ եկեղեցականներն շատերը, ինչպես օրինակի համար Սրղիկացին, մարդկանց աղվանականներ եղած են (մինչ ունեցաւ տաղանդ գործի, ոչ սիրերգ գրելու, ոչ կրամոֆոնի համար երգելու կարող միայն կուսակրոն են), անոնք հաճախ, համատարիմ մնալով հանդերձ իրենց ուխտին, երգած են այդ ղեկավարները՝ ժողովրդական սրտին թարգման ըլլալու համար:

Արդ, րադգատեցեր մեր միջնադարյան հայերուն ներդրումիս, լայնամիտ, սիրուն ոգին մեր քաններորդ դարու մեջ ապրող ու կրոնական ժողովի անդամներուն այս արտասովոր որոշումով ցույց տված ոգիին հետ, և երակացուցեք, Իրավունք չունենի՝ ըսելու թե մեր միջին դարու հայությունն իսկ պիտի չբնակարկեր կրոնական ժողովին անիմաստ որոշումը:

Ինչ որ ինձի ամենին ավելի ապշուցուն կպատճառե, այն է, որ այդ որոշումը տված ըլլա կրոնական ժողով մը, որուն անդամներուն անունը չեմ գիտեր, բայց որուն գիտեմ թե ատենապետն է Մաղաքիա արքեպ. Որմանյան և տեղ-ատենապետը Սղիշ արքեպ. Դուրյան: Որմանյան սրբազանը բացակա է, Երուսաղեմի մեր վանքը հիանալի կորովով ու հեղինակությամբ կարգի ղեկելու զբաղած, եթե Պոլիս գտնվեր, անշուշտ այսպիսի որոշման մը պիտի հակառակեր: Դուրյան սրբազանը պետք է որ այդ նիստին ներկա գտնված ըլլա, և կամ եթե ներկա եղած է՝ անշուշտ բնդդիմացած է այդպիսի որոշման մը, բայց իրեն մտիկ չեն րոտ, և ձայներու մեծամասնությամբ քվերակած են որոշումը, որիչ կերպ չեմ կրնար երեակայել: Արդ, այսպիսի փափուկ հարցի մը մեջ ի՞նչպես կրոնական ժողով մը որոշում կուտա առանց իր երկու ատենապետներուն հավանության, սակայն չեմ ըմբռներ:

Ամեն պարագայի մեջ, երբ կրոնական ժողովը Թուրքիո հայոց պատրիարքին և Ամենայն Հայոց կաթողիկոսին ուշադրությունը կհրավիրե Կոմիտաս վարդապետին երեակայական հանցանքին վրա և մինչև իսկ կարդադրություններ կխնդրե, մենք՝ հայ գեղարվեստի սպասավորներս ալ, համոզված, որ մեր պատրիարքն ու կաթողիկոսը անհետևանք պիտի թողուն այդպիսի դիմում մը, մեր կարգին՝ պատրիարքին և կաթողիկոսին ուշադրությունը կհրավիրենք կրոնական ժողովին այս որոշման վրա, և կխնդրենք որ այդ ժողովին հաճեն հասկնել, որ մեր ազգին ուշիմության, գեղարվեստասիրության և վեհանձնության համբավին արատ բերող այսպիսի որոշումներ սալով ինքզինքն ու մեզ ամենքս լանպատվե ուրիշ անգամ:

ՓԱՐԻԶ

* Եթե այսօր ապրելիս Բյուրանցին կամ Հովսեփը, ապահովապես մեր կրոնական ժողովը զանոնք կամուրջին գլուխը կախելու պիտի դատապարտեր...



Տիրացուները մասամբ իրավունք ունենին վրդովվելու Այն պահուն երբ իրենք Պոլսո մեջ կթափեին իրենց վիրջին լորձուները՝ Կոմիտաս, անդին, երաժշտական միջազգային ընկերության Փարիզի համաժողովին՝ զիտական աշխարհին առջև կպարզեր մահացու ազդեցությունը զոր հայ եկեղեցական երաժշտությունը կրած էր թուրքերեն և պարսիկ հերձն, և զերբ զոր հայ տիրացուները ունեցած էին այդ առթիվ:

«Թույլ տվեք ինձ, կրսեր Կոմիտաս հայ զեղչուն երաժշտության նվիրված իր քանախոսության մեջ, ավարտելու քանախոսությունս, քանի մը խոսք ըսել ձեզի այն ազդեցության մասին, զոր օտար երաժշտությունները գործած են մեր եկեղեցական և ժողովրդական երաժշտության վրա, առաջինը՝ Արևմտյան Հայաստանի մեջ, որ քավական երկար ատենն ի վեր թուրքերու տիրապետության տակ կզանվի, երկրորդը՝ Արևելյան Հայաստանի մեջ, որ Ռուսիո կցվելն առաջ, անկախության կորուստեն ի վեր կըզանվեր Պարսկաստանի տիրապետության տակ: Թրքական երաժշտությունը հայ երաժշտության վրա սկսած է ազդել հետևյալ կերպով. հայոց մեջ հին ժամանակներն ի վեր սովորություն է եկեղեցական երգեր երգելը ընտանեկան հանդեսներու միջոցին. Թուրքիո մեջ, տիրացուները, այսինքն եկեղեցվո երգիչները, հայ երգերը սկսան դարդարել թրքական զուսմալուրումներով հաճելի ըլլալու համար այդ մեծատուններուն, որովհետև հայ եկեղեցական երգը, իր ազնիվ և մաքուր նկարագրով, կոշնականները զվարթացնելու բնույթը չունի, և այդ մեծատունները, Հայաստանն հեռու, Կ. Պոլիս կամ ուրիշ մեծ քաղաքներու մեջ, քիչ մը թրքաց ճաշակն ու բարբերը ընդգրկած էին: Ահա ինչպես հայ եկեղեցական երաժշտությունը տակավ առ տակավ, մեծ քաղաքներու մեջ, իր մաքրութենեն և ազգային նկարագրեն քան մը կորսնցուց և թրքական մեղկություն ստացավ: Մեծատուններու հացկերույթներեն, այդ շարափոխումը փոխադրվեցավ եկեղեցիներու մեջ: Այդ մեծատունները, որ այն ժամանակաշրջանին՝ մեր եկեղեցվո վարչության գրչուխը կզանվեին, պարտագրեցին երգիչներուն եկեղեցվո մեջ երգել իրենց նախընտրած թրքական ոճով: Առաջին զոհը այդ խաթարման եղավ Տեր ողորմյաւ: ...Տեր ողորմյային հետո սկսան թրքական ձևով երգել ամբողջ հայ երաժշտությունը: Եկեղեցական երգեցողության մյուս մասերը այդ խաթարումը աչքան խորապես չեն կրած որքան պատարասգոր: Շատացած են հիմնական եղանակները

թրքական զարդարանքներով (ornature) ծանրացնելով: Եկավ ժամանակ մը ուր այդ երգիչները կորսնցուցին մինչև իսկ ազգային ձայնատվությունը (intonation) և ընդգրկեցին թրքաց սիրելի ռեգային, կոկորդային ձայնատվությունները հեղկ, խուլ ձևով²⁵:

Վարդապետ, համաժողովին իսկ առջև, երգած է հայ եկեղեցական երաժշտութենեն նմուշներ (Տեր ողորմյաւ, Տիրամայր և այլն), նախ իրենց ավանդական եղանակին մեջ, և հետո իրենց խաթարված ձևով: Այս պիկայությունները բերած է մեր հին մատենագիրներեն (Անանիա Շիրակացի, Հովամ Արևելցի) ապացուցանելու համար թե հայ շարականները ներկա արեւելյան զուսմալումանց և կոկորդային թրթռացումներու հորդառատություն ենթարկվելն առաջ պարզ, մաքուր, քնական եղած էին, որովհետև, ինչպես կրսե Շիրակացին, «հայ եկեղեցվո շարականներուն մեջ, խոսքերը ավելի պետք է դրավեն ունկնդիրներու ուշադրությունը, քան երաժշտությունը», կամ, ըստ Հովամ Արևելցիի, «եկեղեցական երգերը պետք է երգել, ոչ թե ճոճոված ձևով մը, այլ տշխույժ կերպով: Պետք է ձայնը հանկարծ շատ բարձր հանել կամ շատ իջեցնել, որովհետև ատիկա կրնա տղթրին վեհությունը խանդարել»:



Շահմուրադյանի ձայնապնակները պիտի պատեն հետո աշխարհ-աշխարհ, պիտի անքտանելով բոլոր հայ պանդուխտներուն: Անկե հետո ալ հայ երգերը ձայնապնակներու վրա անցան շատ հաճախ, ու մտան հայ տուններն ներս: Բայց ոչ մեկը անոնցմե կարծես չունեցավ այն քաղցրությունը զոր Օրֆեոս Ռեթորտի այդ առաջին ձայնագրությունները տարածեցին այն ատեն:

Իսկ այն երգերը, զորս Կոմիտաս ինքը երգեց ձայնապնակի համար՝ ավելի թանկագին պիտի դառնային սակայն հետո: Անոնք մեյմեկ նվիրական մասունքներ եղան՝ մեծ սովեստագետին մահեն հետո մանավանդ:

Երաժշտագետ և երաժշտասեր Ալեքսանդր Շահվերդյան հետեւելով որ Կոմիտասի գրամոֆոնի ձայնապնակներուն շնորհիվ «Կոմիտասի ձայնը և կատարման ոճը պահպանվել են զալիք սերունդներին համար, կապիցեն»:

«Հանգամանքների բարեբաւտիկ դասավորությամբ մեզ հասած գրառումների մեջ կա ժանրերի, բովանդակության ու էմոցիոնալ

²⁵ «Անահիտ», 1937 հունվար—մարտ, էջ 29—30: Կոմիտասի քնադրեն Զուպանյանի կատարած ֆրանսերեն թարգմանության վրային կրկին հայերենի վերածված Զուպանյանի կողմից:

հրանգի տեսակետից խիստ բաղմազան նյութ, գլխավորապես զեղջկական երգեր (իրենց արնական միաձայն ձևով ու Կոմիտասի մշակմամբ)։ Բացի դրանցից, պահպանվել են հոգևոր և ազգային-հայրենասիրական երգեր։

Ունենալով ձայնական լավ տվյալներ (բարձր և դիափազոնով խիստ լայն քարիտոն՝ փափուկ տեմբրի), Կոմիտասը մշակել էր անցումների ու ռեգիստրների մեջ հավասարակերպ, անկաշկանդ ու զուգահեռ երգեցողության ճկուն տեխնիկա։ Նրա կատարման եղանակի մեջ օրգանային միավորված են պրոֆեսիոնալ դերազանց շկուլան ու իսկական ժողովրդական, զեղջկական երգեցողության ոճը, որն ունի քաղմազան տրադիցիաներ և պրիոմներ, որոնք ըստ երգի ժանրի ու բովանդակության փոփոխվում են։ Ժողովրդական երգիչը զույնների մեկ զամմայով է երգում էպիկական երգը, և բուրբուլին այլ կերպ է հնչում նրա ձայնը քնարերգական-սիրային և կամ անտուն պանդուխտի երգում։ Երգի երաժշտական կերպարը, նրա խոսքերի արտասանական խնդիրները որոշիչ սկզբունք են դառնում։ Կոմիտասին առավելագույն չափով հատուկ է ժողովրդական երգի ոճի և

նրա կերպարային-հուղական բովանդակության ճշգրիտ զգացողությունը։ Մենք կասեինք, որ Կոմիտաս-երգիչը ժողովրդական երգիչ է՝ զեղջկական զանգվածի կենցաղից սերված, քաղաքային պրոֆեսիոնալ բարձր կուլտուրային տիրապետած, սակայն զեղջկական արվեստի իսկական տրադիցիաներից ու հարստությանից ոչինչ չկորցրած երգիչ²⁰։ Կոմիտաս Փարիզ էր գեռ Պոլսո տիրացուներու հավարին ատեն։ Այնտեղ կամ թերևս ալ ճամբան, Վիեննայի կամ Ֆիլիպեի մեջ պետք է ստացած ըլլա Պոլսո թերթերը և տեղեկացած։ Որովհետև ան արգեն զիտեր այդ մասին մեր առաջին հանդիպումին՝ Պոլիս հասած օրը։

Ոչ մեկ վրդովում ցույց չտվալ ան մարդոց փոքրոգության դեմ։ անհոգոգ մնաց ինչպես դափնի խլած պահերուն՝ նույնպես լուտանքներու ատեն։

Կոմիտաս հողիով շատ էր ամուր որպեսզի սպղիներ ճամբուն վրա ցանված փուշերեն։

Այս անգամ ալ թոթվեց ու սերը և իր ճամբան քալեց։

²⁰ էջ 369,

(Պատմական)

ՄԵՐ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ *

«Հետաքննութենեն պարզվեցավ որ Սե-
րաստիո Ս. Նշան վանքի և Մայր եկեղեցիի
թաքստոցներուն մեջ պահված հայկական
ձեռագրերու պահեստը երևան հանված է
դիկվորականներու կողմից, երբ այդ երկու
սրբատեղիները վերածվել են դիկվորական
ոսղմապահեստի:

Հայտնաբերված ձեռագրերը և գրքերը
ծախված են թուրք նպարավաճառներուն որ-
պես փաթեթ գործածելու համար:

Մի այլ ականատեսի պատմածից, տեղե-
կանում ենք այն մասին, որ Սերաստիայում
հայերեն ձեռագրեր են գտնվել նաև առանձին
ընտանիքների մոտ, որոնք իրենց ամեն ինչ-
քը թողած, իրեն իրենց պապերի սրբադան
ժառանգություն մինչև նփրատի ափերն էին
իրենց հետ տարել սերկաթագիր գրքերը մերս:
Իրեն ականատեսի սրտահույզ հուշ, մեջ ենք
ընթում ստորև, բնիկ Սերաստացի, այժմ
երևանաբնակ Սեպուհ Լուսարարյանի «Նաև»
ոտնակոխ սրբություններ...» խորագրով ան-
տիպ ակնարկից հետևյալ տողերը. «Են պա-
տանի էի, երբ 1915 թ. հունիսի 22-ին տեղի
ունեցավ Սերաստիայի հայության տեղա-
հանումը:

Մինչդեռ ամենքս մտահոգված էինք,
աճապարանքով մեր հետ վերցնելու ինչ որ
ճանապարհի ընթացքում խիստ անհրաժեշտ
էինք համարում, տատիկս զլխակորույս ու
մտամոլոր, մերթ անհետանում էր, մերթ
մեղ մոտ էր դալիս, առանց որևէ բանի
ձեռք տալու, հաճախ ծնկները ծեծելով, Վեր-
ջում ես նշմարեցի, որ նա մտավ այն մթնշաղ
փոքր սենյակը, ուր պապս ժամանակին պա-
հում էր իր հավաքած ձեռագիր մատյաններ.
և պարապում կազմադարձությամբ: Պապիկի-
բացակայության ես մերթ մտնում էի գաղտա-
գողի այդ արգելված սենյակը, ուր փայտյա
քանդակազարդ մի արկղում պահում էր գրք-
չագիր մատյաններ, որոնց գունագեղ ման-
րանկարները դիտել իմ մեծագույն հաճույքն
էր: Սենյակի խորհրդավորությունը շեշտում
էին խունկի և հնարույր մագաղաթի միա-
խառնված հոտերը: Պապիս մահից հետո այդ
սենյակը այլևս փակ էր, անմատչելի մի սրբ-
ություն նման, Ահա այդտեղ էր մտնում
տատիկս ու զոդոշ ձեռքերով տնտղում էր
մատյանները, քայլ ամենքը վերցնելու ուն-
կարելիությունից հուսահատ, նորից դալիս էր
մեր մոտ, անխոս ու տազնապահար...

Տնից մեր հեռանալու պահին, տատիկս
վերջինը դուրս եկավ, կրծքի վրա ինչ-որ մի
վերջինը դուրս եկավ, կրծքի վրա ինչ, որ մի
բան թաքցրած ու լացակամած մի աղոթք
մրմնջելով: Մենք ժամանակ լուսնեցանք

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1985 թվա-
կանի № 6 — է-ից, 1986 թվականի № 7 — Ժ-ից և
1987 թվականի № 8-ից:

նույնիսկ միմյանց հետ խոսք փոխանակելու, քանի որ դարթիկներին մտրակները շաշում էին զիս ու զեն և պետք է հասնեինք մեր քաղցի քշվող քարավանին:

...Մի առավոտ, երբ սովորականի պես սկսեցին շաշել դարթիկների մտրակները և խուճապն սկսվեց տարագրվողների քաղմության մեջ, մայրս ու քույրս արդեն հավաքել էին շալակվելիք ծրարները. սակայն սատիկըս պատկած մնում էր: Հագիլ մի նվվոց լավում էր նրա կապտած շրթներին: Մենք փութացինք նրա մոտ: Նա կրծքին դրել էր ծոցում սպհած մատյանը, որը շնչալով հանձնեց մորս, որպես ընտանեկան մեր սրբությունը: Մենք լացակումած հագիլ հասցրինք համբուրել նրա ոսկրացած ձեռքերը ու հեռացանք խուճապահար, ժամանակ շունենալով նույնիսկ փակելու մեր հոգնարբի աչքերը, քանի որ նոր արհավիրքներ է, որ մեզ էին սպասում, քույրս շուտով առևանգեցին...

Մի քանի և զրին... հագիլ հասած լայնատարած գետի եզրերին, տեսաք դինված թալանյի մի խուճան՝ պատրաստ մեզ է սպասում: Զարթիկների արտոնությամբ նրանք մեր վրա խուճեցին և սկսեցին կողոպտել մեր հետին ծրարը, հանեցին մեր զգեստները, շատերը թողնելով մորից մերկ վիճակում... Ես տեսնում էի, թե ինչպես ոմանց ծոցից Աղոթագիրք կամ Ավետարան էին հայտնաբերում, ու եթե դառնում էին արծաթադարձ կողքեր, պոկում էին արծաթեղեն մասը ու մնացյալը նետում ավաղուտքի վրա: Բազմաթիվ այդպիսի դրքերի մեջ քիչ չէին նաև մանրանկարներով զարդարած մադաղաթյա գրչադիր մատյանները: Տատիկից վերջրած մեր գրչադիր Ավետարանն էլ խլելով մորս կրծքից, նույնպես զեն շարտեցին:

Գետի գիմացի եզրերը փոխադրող քիչ լաստեր կային, որով ստիպված էինք հերթի սպասել, իսկ լաստերի վրա կուտակված, մերկացված, կմախսացած քաղմությունից քիչ չէին հուսահատությունից իրանց դնող զցողները, որոնց վրա դարթիկները կրակում էին:

Այդ սպասման պահին, ես այլևս անբանացած այդ բոլոր խժոժություններից, պաղած աչքերով դիտում էի գետեզերքի երկայնքով ցրիվ տրված մեր գարավոր մշակույթի, այդ գանձերի ողբերգական պատկերներ, և հիշում մեր հայրենի տան այն մթնշաղ փոքր սենյակը, ուր, ավա՜ղ, լքել էինք մադաղաթյա այնքան թանկագին հատորներ, ուսից կոխան լինելու համար քարքարոս թու-

լանչիների...²²⁷

Եվ այսպես, Սեբաստիայից հայ ձեռագրական բեկորները հասնում էին մինչև միարտի ավերք, այնտեղ էին նրանք մեր ժողովրդի լինել թե չլինելու դժոխային պահերին և իրեր մեր ապրելու և տոկալու վսեմ խորհրդանիշ մեր մեարտապատագրերը, ինչպես մեր պատմության երկար ու փշոտ քառուղիներում, այստեղ ևս անմահության ու հավիրթության ներշնչման աղբյուր դառնում զնայի մահ զնացող հայորդիների համար...

Ինչպես շատ տեղերում, Սեբաստիայում ևս տեղահանության նախորդական ժողովուրդի մեջ համաճարակի նման տարածվել էր գրքեր, թղթեր ալրելը և փաղցները: Պրոֆ. Ռուբեն Բաղդասյանը, որի շնորհիվ քաղաքի ամերիկյան վարժարանում և կոլեջում հայ լեզվի ու գրականության և հայոց պատմության դասերը մեծ դարկ էին ստացել, այդ շրջանում իրեն նվիրել էր գրքերի հրգեհներին՝ դրականության ազատման գործին և հնարավորության դեպքում փրկում և բերում ու զետեղում էր ասիրական մատենադարանը²²⁸, մեզ հայտնի չէ, սակայն, թե արդյոք հնարավոր է: Եղավ աղատել հրգեհումից փրկված այդ գրքերի ղոնն մի մասը, թե ամբողջությամբ նրանք ևս ոչնչացվեցին:

Ռուբենահայ գրող և Ռուսարեստի ԾԵՆ-փոքր առաջին հայերեն հանդեսի խմբագիր հանդուցյալ Լ. Լանիսը իր կյանքին նվիրած գրական մի գործում ես մանրամասնություններ է հաղորդում Սեբաստիայի հայերեն ձեռագրերի ճակատագրի մասին²²⁹:

²²⁷ Առիթից ողավելով խորին շնորհակալություն ենք հայտնում Սեբաստահայեր մեծարգո Ս. Լուսարայանին և տաղանդավոր նկարիչ և գրող մեծարգո Առաքել Վատրիկին, առաջինին՝ իր գրած վերահիշյալ արձեղանից հուշերի համար, իսկ երկրորդին՝ սույն գրվածք սերահոծար կերպով մեզ տրամադրելուն համար:

²²⁸ Կ. Գալիկյան. Նշված աշխատությունը, էջ 103:

²²⁹ Լեոն Լանիս, Կյանքի վերջը գրվածքներով, 1962, Վենետիկ (էջեր 165—167, 181, 184), ուր ի միջի այլոց պատմվում է հետևյալը. «Վ(արդան) Մ(եղտունյան) դալով Գալյան Լ. Լանիսի (գրքերի Ահարոն) մոտ ապում է.— Լեն, Ահարոն, Պոլսեն նամակ մը առի, որով օղկ նման հին քարեկամ մը կը հայտնե թե թուրք ուրազործ մը, գահճապետ մը, քարդերու ընթացքին թալանած ոսկիներով և կարդ մը հաղվադյուտ մազադաթներով հայ վանքեն վերցված, հաստատված է Փոնոթանցա և կը ծախե գրավի վերածելու համար:

— Նամակին մեջ կը հայտնե, թե թուրք Սեբաստիս կողմերեն է և հավանաբար Ս. Նշանի վանքեն, անոր պահեստներեն:

— Այո՞, և կապեցնե թե շատ մեծ արժեք կը ներկայացնեն, անաղուտ կտորներ են, պետք է փրկել:

վել էին Սեբաստիա: Նկարագրված հիշյալ ձեռագրերից առաջինը, դրվել էր Եվդոկիայում 1823 թ. և մի Բժշկարան էր, գրված բժիշկ Նիկողոս Ամթեցու կողմից և, որը սակայն չենք գտնում Սեբաստիայի հայտնի ձեռագրացուցակում: Երկրորդ գրչագիրը՝ «Գիրք հարցման»-ն է և ընդօրինակվել է 1607 թ. Հալեպում Տեր Ղազար Բ-ի: Զեյթունցիի կողմից: Այս ձեռագիրը ևս Սեբաստիայի հայտնի գրչագիրներից չէր, բանի որ ինչպես զբոսում է Արտ. արք. Սյուրմեյանը, նրա վրա Սեբաստիայի վանքերից ոչ մեկի կնիքը կամ արձանագրությունը չկար և ռորմե կը հաստատվի որ անոր Սեբաստիա փոխադրությունը նոր ժամանակի խնդիր է, հավանաբար ընդհանուր տեղահանությունից օրերուն:

Նկատի ունենալով մեզ հասած վերահիշյալ տեղեկությունների երկբայելի լինելը և ցարդ հայ ձեռագրագիտության մեջ այս մասին տիրող միանգամայն շատ ազոտ պատկերացումը, այն ճշգրտելու նպատակով, դիմեցինք Երուսաղեմ քաղաքացու ձեռագրագետ Գեր. Տ. Նորայր եպիսկ. Պողարյանին, որը և ամենայն ազնվությամբ ճշտեց ոչ միայն Սեբաստիայից փրկված գրչագրերի թիվը, այլ և մանրամասն կերպով դրանք համեմատելով Քորգում Պատրիարքի հայտնի ձեռագրացուցակի հետ մեր արձանագրության տակ դրեց վերջինիս համապատասխան համարները, որոնք և հրատարակում ենք սուրբ: Նրանք թվով 113 են և մուտք են դործել Երուսաղեմի Մատենադարանում 1927 թ. մայիսի 15-ին և նախապես Գուշակյան ձեռագրացուցակում հետևյալ համարներն են կրել.

1, 4, 6, 7, 12, 13, 19—20, 25, 27—28, 34, 38—40, 42—43, 49, 53, 56, 58, 60, 62—63, 65, 67, 70, 73, 81—83, 85, 88—89, 92—93, 96—98, 100, 104, 108—110, 113, 125—126, 128—129, 132, 135, 137—138, 141—142, 156, 159, 161, 163—164, 167, 169—171, 179—181, 184—189, 191, 193—194, 198—199, 201, 203—204, 206—207, 211, 213, 215, 218—219, 223—225, 227—228, 231, 236, 242—243, 245—246, 251, 253—254, 257, 260, 264—267, 272—273, 276—277, 283:

Ինչպես մեզ է հայտնում Գեր. Սրբազանը, «Սեբաստիա վերաբերյալ վերոգրյալ ձեռագիրներուն հետ միասին տարբեր վայրերն ձեռք բերված ձեռագիրներն ալ ստացված են

Երուսաղեմ և ամենքը մեկ հաշվված են»²³¹, Ահա այս պատճառով էլ նկատի ունենալով մեր հնազույն վերահիշյալ տվյալները նախագես մեզ թվացել էր, որ Սեբաստիայից փրկված և Երուսաղեմի հայոց մատենադարանը փոխադրված ձեռագրերի թիվը եղել էր տվելի մեծ: Ուրախությամբ պատշաճ է ասել նաև, որ փրկվել ու այժմ Երուսաղեմի մատենադարանում է գտնվում Սեբաստիայի մատակա Գանկալ կամ Ղանդալ դուղի երկաթագիր մեծարժեք Ավետարանը, գրված 1041 թվականին և որի անորոշ ճակատագրի մասին ժամանակին տյեբան մեծ վշտով արձանագրել էր րանսսեր Կ. Գարիկյանը:

Սեբաստիայի ձեռագրացուցակի համար 15 գրչագիրը այժմ գտնվում է ԱՄՆ-ի Բալթիմորի Wallers Art Gallery-ի 539 համարի տակ: Վերջինս հայերեն ձեռագրերի զոհարներից մեկն է. նրա դրիչն ու նկարիչը եղել է Կիլիկյան հայ մանրանկարչության հանճարեղ ներկայացուցիչ՝ Քորոս Ռուսինը, իսկ կազմողը՝ նշանավոր կալմարար Առաքել Հեսդանդենցը (1262 թ.): Այն գրված է մագաղաթի վրա մեսրոպյան երկաթագրով և շատ հարուստ և բնութի նկարազարդումներ ունի: Ավետարանում կան 67 մանրանկարներ և 12 խորաններ: Այն Կոստանդին կաթողիկոսի հովանավորությամբ գրված իններորդ ձեռագիրն է և որի ստացողն է եղել վերջինիս հղորդողի՝ Քորոս քահանայ: Գրչագրում հիշվում են Հեթում Ա-ը և Զապել թագուհին: Սույն մեծարժեք ձեռագիրը իբրև մայր սրինակ է ծառայել հնուց ի վեր Սեբաստիայի և շրջակայի համար: Սեբաստիայի Գուշակյան ցուցակի համար 2 ձեռագիր Աստվածաշունչի նոր կտակարանի մասը, ինչպես նաև համար 3 Ավետարանը և ուրիշներ, ինչպես նաև Ենի-տանի ձեռագիր մագաղաթյա Ավետարանը ամենայն հավանականությամբ ընդօրինակվել են վերահիշյալ ձեռագրից, ինչպես որ այդ ցույց են տալիս նկարների, խորանների և լուսանցազարդերի նմանությունները:

Վերջինիս արտանկարված լինելու մասին, վկայում է նաև հայ մանրանկարչության մեծ վարպետը՝ Գարեգին Ա կաթողիկոսը, և որը Սեբաստիայից ոչ հեռու հիշյալ դուղում 1974 թ. տեսել էր այն: Ենի-տանի ձեռագիրը այժմ պահվում է Վաշինգտոնի Freer Gallery of Art-ում²³², Հստ քանսսեր 2. Քյուրտյանի,

²³¹ Արտավազդ արքեպ. Սյուրմեյան, Մայր ցուցակ Հայերեն ձեռագրացու Հայեպի և Անթիոխի ու մասնավորապես, 1936 թ., Հալեպ, էջ 43, 55:

²³² Ամենախորին մեր շնորհակալությունն ենք հայտնում Գեր. Ն. եպիսկ. Պողարյանին մեզ արձանագրած վերահիշյալ լույս կարևոր տվյալների համար:

²³³ Կ. Բարիկյան, Նշված աշխատությունը, էջ 133:

²³⁴ Խաչեղին արքեպ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Նյու-Յորք, 1943 թ., էջ 33:

Սեբաստիայում պահված Ռոսլինի այդ նշանավոր Ավետարանը փրկվելով և անմեկնելի կերպով Կ. Պոլսի Պատրիարքարանին վերադարձվելուց հետո, սրանից շուրջ երեսուն տարի առաջ վաճառվել է նախ հուլյն և նրանից էլ հայ մի հնավաճառի (իմա՝ Տ. Քելեկյան), որն էլ այն վաճառել է ամերիկյան հիշյալ հաստատությունը²²⁷։

Նրանք այլ ձեռագրեր փրկված Սեբաստիայից, այժմ գտնվում են Ամերիկահայ բանասեր Հարություն Քյուրտյանի ձեռագրական հավաքածուում։ Առաջինը Գուշակյան ցուցակի համար 22 դրագիր մագաղաթյա երկաթագիր Ավետարանն է և որի գրիչն է եղել Կողմասը։ Հիշյալ ձեռագրացուցակում թեև սույն ձեռագրի ժամանակը անհայտ է թողնված, սակայն Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցը այն համարում է ժԲ դարի վերջում գրված ձեռագիր²²⁸։ Երկրորդը՝ նույն ցուցակի 61 համարի տակ գրանցված դարձյալ մագաղաթյա երկաթագիր մի Ավետարանն է և որի 97—98 էջերը կրկնագիր են և բոլորագրով գրված։ Նրա ստեղծման ժամանակը անհայտ է, սակայն ապահովարար գրված պետք է լինի ոչ ուշ քան ժԲ—ԺԳ դարերում։ Եվ վերջապես երրորդը՝ նույն ցուցակի, համար 134 դրագիր Գանձարանն է ընդօրինակված 1492 թ. Հովհաննես գրչի կողմից Սեբաստիայի Ս. Նշան վանքում²²⁹։

Այսպիսով Սեբաստիայի ցուցակագրված դրագրերից այժմ փրկվել են ու մեկ են հայտնի ընդամենը 117 ձեռագիր։ Նույնպես, ինչպես նշեցինք, Սեբաստիայի շրջանից փրկվել են նաև Ղանդալի և Ենի-հանի Ավետարանները։ Հնարավոր է, որ հետագայում այլ վայրերում գտնվեն նաև Սեբաստիայի հավաքածուին երբեմն պատկանող զրյուգրեր, որոնք զրանցված լինեն մեղ հայտնի ձեռագրացուցակում և կամ նրանից զուրկ մնացած լինեն, սակայն մինչ այդ, եթե մենք նկատի ունենանք ցուցակում գրանցված և այժմ մեղ չհասած ձեռագրերի թիվը, ապա պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ միայն Գուշակյան ձեռագրացուցակից այժմ պահպանվում է 167 դրագիր։

Անհետացած այդ ձեռագրերի մեծ մասը վերաբերում է Սեբաստիայի հուշակավոր Ս. Նշանի վանքին, կան ձեռագրեր նաև Աղտուցի Ս. Հրեշտակապետի վանքից, Ս. Աստվածածին Մայր եկեղեցուց, Ս. Սարգիս և Ս. Կարապետ եկեղեցիներից, Սենեքերիմյան ընթերցարանից և այլն։ Կորած դրագրերը ըստ հնության կարգի հետևյալ կերպ կարելի է

դասավորել։ ԺԲ դարից՝ 1 ձեռագիր, ԺԳ դարից՝ 2, ԺԴ դարից՝ 11, ԺԵ դարից՝ 17, ԺԶ դարից՝ 8, ԺԷ դարից՝ 33, ԺԸ դարից՝ 26, ԺԹ դարից՝ 10, իսկ մնացածի ժամանակը ըստ ցուցակի՝ անորոշ է։ Սեբաստիայի Ս. Նշանի վանքի գույքն է ամենահին ձեռագիրն է եղել ժԲ դարում գրված և այժմ կորած «Մեկնութիւն ընթերցութեան»-ը, որի գրիչն էր Մխիթար վարդապետը։ Ավելի ուշ այն դարձել է Հայոց Թառ վանքի սեփականությունը։ Ձեռագիրը գրված է եղել անցման զրով (հավանաբար երկաթագրախառն բոլորագրով) և հայ հնագրության համար ուշագրավ էր նրանով, որ զեռ այդ ժամանակվանից բոլորագիրը հիշվում էր գրչի կողմից իբրև գրի տեսակ։ «ՁՄխիթար գեղոգ բոլորագրոյս»²³⁰, գրել է ընդօրինակողը։

Անհետ կորած դրագրերի մեկ կա մի Աստվածաշունչ ընդօրինակված 1313 թ. Ստեփանոս գրչի կողմից Սեբաստիայում։ Կան նաև բազմաթիվ Ավետարաններ, Սաղմոսներ, Մատթեոսներ, Ճաշոցներ, Ժամագիրքեր, Պատարագամատուց, Շարակնոցներ, Հայսմաւուրքներ, Ճառքնություն, Քարոզագրեր, Տոնացույցներ, Կանոնագրեր, և այլն և այլն։ Հնագույն դրագրերից են Սեբաստիայի 16 և 17 համարների տակ գրանցված Ավետարանները, տոտչինը գրված է 1272 թ. Գրիգոր գրչի կողմից Երիզայում, իսկ երկրորդը՝ 1295 թ. Կարապետ գրչի կողմից Մալաթիայի Համոս պոլոսում։ Ինչպես փրկված, այնպես էլ ցարդ կորած համարված դրագրերի կարևոր մասը գրվել է Սեբաստիայում և կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի հնագույն այդ ոստանի ցարդ չգրված գրություն և մանրանկարչական արվեստի պատմությունը ուսումնասիրելու համար։ Սեբաստահայության մոտավոր անցյալի ուսումնասիրման տեսակետից կարևոր արժեք էին ներկայացնում նաև նույն քաղաքում գրված և նրա գործիչների գրչին պատկանող այն երկասիրությունները, որոնք այժմ կորել են։ Այդ շարքից անհրաժեշտ ենք գտնում հիշելու. «Վարք և պատմութիւն Առաքել վ. ի առաջնորդին Սեբաստիոյ» (1722—1747 թթ., № 233), «Օրագրութիւն Գրիգոր արքեպ. ի Գաղատացոյ, առաջնորդին հայոց Սեբաստիոյ» (1782—1783 թթ., № 234), «Պատմութիւն Ս. Նշանի և առաջնորդաց Սեբաստիոյ» (1821 թ., № 235), «Յանկ-տետրակ Կարապետ եպ. ի օրով քահանայից, ժողովրդոց, դպրաց և այլն (№ 240), և այլն։

Սեբաստիայի այժմ կորած ձեռագրերից պետք է հիշատակել հայ միջնադարյան հեղինակներից շատերի դործերը, ինչպես. Գա-

²²⁷ «Քաղաքական», 1966 թ., էջ 69։

²²⁸ Կաթողիկոս Ա կաթողիկոս. Հիշատակարանը ձեռագրաց... էջ 663։

²²⁹ «Քաղաքական», նույն տեղում։

²⁴⁰ Թ. արք. Գուշակյան, Նշված ուղիստությունը, էջ 101։

վիթ Անհագթի, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու, Հակոբ Թոխաթեցու, Ստեփանոս Լեհացու, Հակոբոս Նալլաւնի, Պետրոս Աղամալլանի և ուրիշների հեղինակությունները։ Նույնպես թարգմանական գրականությունը ևս բազմապիսիս հարուստ էր հիշյալ գրչագրերում, նրանց մեջ էին երբեմն գտնվում նվագորի, Պրոկզի, Թովմա Ազուխնացու, Ջերոնիմոսի, Սկոթի, Կուռնելիոս Լատինացու և այլոց գործերը։ Անհրաժեշտ ենք գտնում նաև նշելու, որ բացակա գրչագրերում գտնվում էին նաև մանրանկարներով դարդարված մի շարք ձեռագրեր, հայկական երաժշտության և խաղագիտության տեսակետից արժեքավոր գրչագրեր և այլն։ Դարձյալ մի շարք ձեռագրեր սկզբից և վերջից ունեին մանրոպյան երկաթագրով գրված մագաղաթյա պահպանակներ, որոնց ոչ բոլորն էին վերծանված ցուցակի կապժող Թորգոմ արքեպ. Գուշակյանի կողմից։ Ավելացնենք նաև, որ Գուշակյանի ձեռագրացուցակից պարս է մնացել նաև նրա կողմից գեղես մեր դարի սկզբներին Սերաստիայի Ս. Մինաս եկեղեցու ղեկավարներում մի ճաշոց գրքում գտնված Նդիշեի վարդանանց պատմության հասակոտորները³⁴¹։

Այժմ, երբ գեղես ոչ մի տեղեկություն չունենք վերահիշյալ ձեռագրերի մասին, շատ ցանկալի է, որ որքան կարելի է շուտ նրուսադեմի Սրբոց Հակոբյանց Միաբանության կողմից հրատարակության տրվեր երջանկալիշատակ Թորգոմ Պատրիարքի այնքան խնամքով կապմած Սերաստիայի ձեռագրացուցակի 128 ձեռագրերի ընդարձակ նկարագրությունը, որոնց կարևոր մասը, ինչպես տեսանք այժմ, կորած է։ Այդ ոչ միայն հարգանքի մի տուրք կլինի մատուցված մեծանուն հոգևորականի հիշատակին, այլև կնպաստի մեր կորցրած ձեռագրի ժառանգությունը ավելի լավ ճանաչելու գործին։

Թեև մեր բազմաթիվ գրչության կենտրոններից շատ ավելի բախտավոր եղավ Սերաստիայի հայերեն ձեռագրերի ժողովածուն, սակայն այնտեղ ևս իր շրջականերով հանդերձ պետք է ենթադրել, որ մեր կորցրած գրչագրերի թիվը ամենայն հավանականությամբ պետք է, որ նվազագույնը շուրջ 200 եղած լինի։

(Շարունակելի)

³⁴¹ ՏՃՍ «Միտն», 1931, էջ 210—218։



ՍԵՂՐԱԿ ԲԱՐՈՒՌԻԳԱՐՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՂԲԱՏԱՎԱՆՔՈՒՄ

Վատմա-մշակութային իր կարևոր գործունեության շնորհիվ, Հաղթատավանքը շատ վաղ իր վրա է հրավիրել ուսումնասիրողների ուշադրությունը, իսկ նրա հուշարձանների պատերին և շրջակայքում եղած արձանագրությունները հավաքվել և հրատարակվել են սկսել դեռևս 19-րդ դարի առաջին տասնամյակից, ի վերջո դրանց լիակատար հավաքումը և օրինակելի հրատարակությունը իրագործեց Կ. Ղաֆադարյանը՝ 1963 թվականին:

Բայց, այնուամենայնիվ, վերջին տարիներում Հաղթատավանքում կատարվող նորագումների աշխատանքների ընթացքում գրեթե չեն մի նոր, մինչ այժմ անծանոթ, արձանագրություն, որն իր բովանդակությամբ անսովոր է և հետաքրքիր՝ պատմական տեսակետից:

Այդ արձանագրությունը մի խաչքարի վրա է. Բայց թե նախապես որտեղ է կանգնած եղել խաչքարը՝ հայտնի չէ. այժմ այն ընկած է վանքի պարսպի արևելյան կողմի մուտքի մոտի պահակատուն հանդիսացող շենքի կտուրին: Այն հավանաբար օգտագործվել է այդ պահակատան կտուրի նորոգումների ժամանակ, որպես հասարակ շինանյութ:

Ահա խաչքարի արձանագրված երեք կողմերի լուսանկարը (էջ 57):

Արձանագրությունը փորագրված է խաչքարի երեսին՝ խաչի թևերի շուրջը, թիկունքին և հյուսիսային նեղ կողմին: Երեսին գրված մասը վնասվածքներ չունի, նրկրորդ հատվածը գրված է թիկունքին, 11 տողով: Այստեղ տողերի սկզբի և վերջին մասերում տեղ-տեղ մեկ-երկու տառերի ջարդվածքներ կան, բայց որովհետև ամբողջ արձանագրությունը բաղկացած է անձնանունների ցանկից, ապա և մնացորդ մասերի օգնությամբ անսխալ վերականգնվում են: Միայն վերջին

տողի մեծ մասը խիստ ջարդոտված է և տառերի առանձին մասեր են երևում:

Բոլոր անձնանուններն իրարից անջատվում են երկարավուն ձևի վերջակետերով:

Երրորդ հատվածը գրված է հյուսիսային նեղ կողմին և ավելի մանր տառերով: Վերին մասում 3—4 տողերի տեղ ջարդոտված է և անընթեռնելի: Տողերի սկզբի և վերջին մասերում ևս տեղ-տեղ, մեկ-երկու գրեր, ջարդված են, բայց վերականգնել հնարավոր է, նախորդի օրինակով: Վերջին տողում երևում է մի անվան մնացորդ տառերը: Այս մասում, որը նույնպես անձնանունների ցանկ է, անուններն իրարից կետերով չեն բաժանված, հավանաբար տեղի նեղվածքության պատճառով:

Արձանագրության երկրորդ և երրորդ հատվածներն իրար հետ կապվում են, որովհետև միայն անուններ են երկու մասումն էլ: Բայց առաջին և երկրորդ մասերը չեն կապվում: Այսպես, առաջին մասում հիշատակված է թվականը և գործող անձի անունը, որին բնականաբար պիտի հաջորդեր հուշարձանը կանգնեցնելու նպատակը՝ ինչպես հարյուրավոր նման դեպքերի օրինակներում: Այնուհետև, երկրորդ հատվածի սկզբում կա աշխատի բառը, որին հետևում է անձնանունների շարանը: Աշխատի բառը այս շարքին քերականապես չի կապվում, հետևաբար իրենից առաջ եղած մի նախադասության վերջին բառն է նա: Նկատի ունենալով այս հանդամանքները և այն, որ խաչքարի վրա ուրիշ տեղ չկա գրելու համար, համարում ենք, որ այդ պակասող մասը պիտի գրված լիներ խաչքարի պատվանդանի արևմտահայաց երեսին և անմիջական շարունակությունը կադմեր արձանագրության առաջին հատվածին և վերջում ունենար մի այնպիսի նախադասություն, որը վերջանար երկրորդ, թիկունքին

Իր այս տեսքով արձանագրությունը պար-
զում է, որ 1246 թ. Հազարամյան Խաչ-
նուրդ Համագաղթի օրոք, կանգնեցվել է այս
խաչքարը ի հիշատակ այն մարդկանց, որոնց
անունները մեկ առ մեկ հիշատակված են
արձանագրության մեջ, իրիվ պահպանված և
վերականգնված անունները 33 հատ են: Թի-
կունքի արձանագրության վերջին, ջարդված
տողում կարող էր տեղավորվել 3, նեղ կողի
վերևի վնասված շորս տողերում՝ 4, և ներքե-
վում՝ 1, որով բոլոր անունների թիվը կլիներ
40—41 հատ: Այս բոլոր անձնանունները տա-
ռագարծությամբ և ու վերջավորությամբ
դուռ հունական տեսք ունեն: Դեռ ավելին,
դրանց մեջ կան տասնյակից ավելի անուն-
ներ, որոնք ավելի արխայիկ են և, ասենք,
10-րդ դարում նույնիսկ բյուզանդացիների
մոտ գործածական չէին այլևս:

Բայց և այն ընդհանուր քրիստոնեական
անունները, որոնք վաղուց ի վեր հայացի ձե-
վով գրելու սովորություն կար մեզանում,
գրված են հունական՝ Օրինակ՝ Ավետիս = Ա-
վետիս, Ղևոնդ = Ղևոնդիս:

Հայ վիմակա արձանագրությունների մեջ
չկա այսպիսի՝ միայն անունների ցանկ պա-
րունակող մեկ ուրիշը: Միաժամանակ գոյու-
թյուն չունի հունարեն կամ հունաձև տառա-
գարծությամբ անունների այսպիսի մի մեծ
փունջ:

Այս անսովոր երևույթի հավանական բա-
ցատրության համար հարկ է դիմել մեր
պատմագիրներին և հայագիտությանը, ույ
իրոք որ կան երևույթը բացատրող փաստեր:

Հայ քանասիրության մեջ ընդունված է, որ
10-րդ դարի սկզբում Հայաստանում հիմնա-
դրված մի քանի նշանավոր վանական միա-
բանություններ ու վանքեր առաջացել են
Բյուզանդիայի կայսեր՝ Ռոմանոսի (919—
944) հալածանքներից փախած և Քաղա-
տունի թագավորների տիրության ներքո ապա-
վինած միաբնակ հոգևորականների ձեռքով:

Հնագույն մատենագիրը, որը հաղորդում է
այս փաստը, Ասողիկն է, որը թվարկելով
10-րդ դարի սկզբում ծավալված վանական
շինարարությունը, գրում է.

«Նախ առաջին՝ մեծահռչակ ռաբուն Կամբր-
յաձորայ ի զաւաթիւ Աշտուրեանց, որոյ ա-
ռաջնորդ հայր Յոհաննէս, որ հալածեալ յա-
րևմտեայ աշխարհէն, յեզերացոց գաւառէն,
ի քաղկեդմոնական մարդագաւան աղանդիցն,
բերեալ ընդ իւր զԳրաշաղէն Նշանն տէրունա-
կանս»:

¹ Այս դիտողությունը և վնասված անունների ստույգ
տառագարծությունը կատարելու գործում մեկ օգնել է
բյուզանդագետ Հր. Բարսիկյանը:

² Ստեփանոսի Տարսնեցւոյ Ասողիկան—Պատմութիւն
տիեզերական, 1885 թ., էջ 128, Պետերբուրգ:

Այս դեպքին անդրադարձել են մեր 13-րդ
դարի պատմագրեր Կ. Գանձակեցին՝ և Վար-
դանը՝ ավելի հանգամանորեն: Ժամանա-
կակիցների համար այս դեպքը նշանավոր ե-
րևույթ է եղել, և այդ առթիվ, ըստ երևույթին,
ստեղծվել են նաև հատուկ գրություններ՝
ավելի մանրամասն ու հանգամանալից նկու-
րագրություններով: Դրանցից մեկը Ղ. Այի-
շանի ձեռքն է հասել իր նշանավոր «Այրա-
րատ»-ը ավարտվելու պահին և տեղավոր-
վել է այդ աշխատության վերջում՝ հավելվա-
ծի ձևով:

Վենետիկի ձեռագրաց ցուցակից այժմ
պարզվում է, որ այդ գրությունը գտնվում է
Ռակեփորիկ կոչվող մի ժողովածուի մեջ, որն
ըստ ցուցակի կազմողի՝ 10—11-րդ դարերի
գրություն է. վերնագիրն է՝ «Պատմութիւն
ս. Կենարարին և սոսկալի ս. Նշանին թէ որ-
պէս բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կա-
մբրջաձորոյ»:

Բյուզանդական երկրամասերից Հայաստան
եկած հոգևորականների առնչությունը Հազ-
արամյանքի նորահայտ արձանագրության
հետ պարզելու համար՝ անհրաժեշտ է պար-
զաբանել հետևյալ հարցերը: Բյուզանդիայի
ո՞ր պապոսներից են եկել փախստական հո-
գևորականները, ի՞նչ ազգության են պապա-
կանն նրանք, որքա՞ն է եղել եկողների մո-
սավոր թիվը և, վերջապես, ո՞ր վանքերն են
շինացրել կամ հիմնադրել Հայաստանում:
Այս հարցերի պատասխանները պետք է որո-
նենք հալածանքների դեպքը հիշատակող մեր
պատմագիրների մեջ, ուստի և հարկ է մեջ
բերել նաև Կ. Գանձակեցու և Վարդանի հա-
մապատասխան հատվածները.

Կ. Գանձակեցին հաղորդում է՝

«...Աս (Ռոմանոս) հալածեաց զամենայն
կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին
յաշխարհին Հռոմոց, զի ոչ հաւսնեցան դա-
ւանութեանն քաղկեդոնի: Եւ եկեալ յաշխա-
րս Հայոց յաւուրս Արասայ, որդոյ Արմ-
րատայ ճաստաւեցին վանորայս՝ զԿամբր-
յաձոր, և զԿապուտաբն ի զաւառին Աշտու-
րեանց, և զճոշակաւանին Հռոմասին կոչե-
ցեալ վանք, և զԳրաշաղէսն ի Շիրակ գաւա-
ռին. շինեցին և եկեղեցի մի յանուն ամենա-

³ Կիրակոս Գանձակեցի—Պատմութիւն Հայոց,
էջ 84—85, 1961 թ., Երևան:

⁴ Հաւաքուն պատմութեան Վարդանայ վարդապետի,
էջ 88, 1962 թ., Վենետիկ:

⁵ Ղ. Այիշան, «Այրարատ», էջ 467—468, 1880 թ.,
Վենետիկ:

⁶ Ը. Ռաբելյ Վ. Ուարդեան—Մայր ցուցակ հայերեն
ձեռագրաց Մատենապարանին Մխիթարեանց ի Վենե-
տիկ, հատար երկրորդ, էջ 894:

սուրբ Աստուածածնին ի վաճեն, որ կոչի Սա-
նահին...»⁷:

Վարդանը գրում է.

«Ե՛ս սորա ատուց (Աբաս Ռագրատունու)
յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք ի
հոռոմաց աշխարհէն սակս ուղղափառու-
րեան, եկեալ յաշխարհս մեր շինեցին յայտ
վաճօրայս: Նախ զԿամբարածօր, ապա զՇո-
սոմոսին կոչեցեալ վաճք, որպէս յէ ի Հոռո-
մաց կողմացն եկին, և զԴարավաճքն ի ճոցա-
նէ ասեն շինեալ զՍանահին սուրբ Աստուա-
ծածին»⁸:

Եկվորների նախնական տեղի հարցը

Ինչպես տեսանք, այս դեպքի հնագույն
հիշատակողը Ասողիկն է, բայց պատմագիրը
հիվորներից մի խմբի մասին է միայն հիշա-
տակում՝ Հովհաննես վարդապետի գլխավո-
րությամբ, որի մասին ասում է. «յարեմտեալ
աշխարհէն, յեղեռացոց գաւառէն»:

Ծգերացոց գավառը այժմյան Արթուրիան
է, որ հալածանքար այդ Հովհաննեսի ծննդ-
ղավայրն է եղել միայն, որովհետև Ոսկեփո-
րիկի գրությունը, որը փաստորեն հենց այդ
նույն Հովհաննեսի վարքն է, ունի ավելի
մանրամասն տեղեկություններ նրա մասին:
Ըստ այդ գրության՝

«Զայնժ ժամանակաւ փայլէր տափհնո-
րեալք ճայրն Յովհաննէս յաշխարհին Լի-
կանտոնացոց, Ի մեհաստանին. որ կոչէր
Կամբարածօր... և ընկեալ էին ի տեղոյն
յայնմիկ ընդ ճօրն Յովհաննէսի ոգիք իբրև
բառասուն»:

և քիչ հետո՝

«Եւ եկեալ (Հովհաննէսը) տարաղէմ յաշ-
խարհէն Լիկանտոնացոց...»⁹:

Այիշանք մանրամասն քննությամբ հաս-
տատում է, որ Լիկանտոն գավառը Փոքր
Հայքում էր, Կեսարիայի և Մելիտիների ա-
րանքում:

Հովհաննէսը իր քառասուն վանականնե-
րով ներկայացել է Աբաս թագավորին և Ար-
շարունիքում էլ իր հիմնադրած վանքը կոչել
է՝ Փոքր Հայքում իր ղեկավարած վանքի ա-
նունով՝ Կամբարածօր¹⁰:

4. Գանձակեցիյն այս մասին անորոշ հի-
շատակություն ունի՝ «յաշխարհէն Հոռոմոց»,
նույնը և Վարդանը՝ «ի հոռոմոց աշխարհէն»:

Այս տեղեկություններից հետևում է, որ
հալածական հոգևորականների նախնական

րենկավայրը Փոքր Հայքի գավառներն էն,
որն ունեն բազմազգի բնակչություն, և ուր
հայերը նույնպես ի հնուց անտի բնիկ և զգա-
լի թիվ էին կազմում:

Եկվորների թվի հարցը

Այս մասին Կ. Գանձակեցիյն գրում է՝ «Աս
(Ռոմանոս) հալածեաց զամենայն կրօնաւորս
և զբոհաւայս հայոց...»:

Իսկ Վարդանը՝ «Յայժ բազմութիւնք կրօ-
նաւորաց հալածեալք...»:

Ոսկեփորիկի գրությունը, որն ինչպես նըշ-
վեց, Փոքր Հայքի Կամբարածօր վանքի միա-
բաններին է վերաբերում, հիշատակում է՝
«ընդ ճօրն Յովհաննէսի ոգիք իբրև բառա-
սուն»:

Այս բոլորից կարելի է հետեցնել, որ Հա-
յաստան փախած հոգևորականների թիվը
շատ մեծ է եղել, քանի որ միայն մեկ՝ Կա-
մբարածօրի վանքից 40 հոգին են եկել, ապա
որովհետև հալածանքը բնդհանուր է եղել բո-
լոր միաբանների նկատմամբ, ուրեմն և բազ-
մաթիվ վանականներ փախած կլինեին, մու-
նավանդ, որ Գանձակեցիյն հիշում է, որ ոչ
միայն վանականներն են հալածվել, այլև
քահանաները՝ «զամենայն կրօնաւորս և բա-
նաւայս»:

Հայաստանում՝ եկվոր հոգևորականների շենացրած կամ հիմնարկած վանքերի հարցը

Վերևում մեջ բերված աղբյուրների մեջ
անվանապես հիշատակվում են հետևյալնե-
րը.

1) Կամբարածօրի վանք Արշարունիքում (Ա-
սողիկ, Գանձակեցի, Վարդան, Ոսկեփորիկի
գրություն):

2) Կասպուռքարի վանք Արշարունիքում
(Գանձակեցի):

3) Հոռոմոսի վանք Շիրակում (Գանձակե-
ցի, Վարդան):

4) Դպրեվանք Շիրակում (Գանձակեցի,
Վարդան):

5) Աստվածածին եկեղեցի Սանահնում
(Գանձակեցի, Վարդան, Ստնահնի Քոթուկ):

Պատմական և տեղագրական բազմաթիվ
ուսումնասիրությունների մեջ հավաստվում է
ինչպես փախստական վարդապետների Հա-
յաստան գալը, այնպես և այս ցանկում նըշ-
ված հինգ վանքերի շենացումը կամ հիմնա-
դրումը նրանց միջոցով: Միայն Շ. Շ. Ոս-
կեանն իր տշխատության մեջ այս ցանկին ու-
վելություն է նուե Հաղրատավանքը¹¹:

⁷ Կ. Գանձակեցի, Պատմություն Հայք, էջ 85:

⁸ Վարդան, Հայաքումն Պատմութեան, էջ 85:

⁹ Այիշան, «Այրարատ», էջ 547:

¹⁰ Այիշան, «Այրարատ», էջ 547:

¹¹ Գուգարսի վանքերը. գրքից զկտ. Շ. Շ. Ոսկեան,
էջ 92—93, Վիեննա, 1960:

Ոսկեփորիկի գրությունը հիշատակում է երկու տեղանուններ ևս. Հովհաննեսի զխավորությունը եկած վանականները, երբ որոնում էին հարմար տեղ Արշարունիքում՝ վանք հիմնելու համար, հանդիպում են մի հարմար վայրի, որը կոչվել է Սակրէվանք և մի ուրիշը, որը կոչվել է Մանէվան, և այդ վերջինում շինել են իրենց հիմնական վանքը, որը իր տեղադրությամբ նման էր Լիկանտիսի երկրում եղած իրենց հին վանքին:

Եկվոր հոգևորականների ազդության հարցը

Նշեցինք, որ Փոքր Հայքն ուներ բազմազգի բնակչություն: Իշխանությունների հալածանքները եղել են, ինչպես սովորական էր միջնադարի համար, ոչ թե ազգային, այլ դավանաբանական հողի վրա, հալածանքի են ենթարկվել տիրող քաղկեդոնական երկարակ պետության և եկեղեցու կողմից միաբնակ պետության պատկանողները, իսկ այդպիսիները ոչ միայն հայերն էին, այլև ուրիշ ազգություններ կամ նրանց հատվածներ և նույնիսկ հույներ, Հետևաբար և փախած ու Հայաստան ապավինած հոգևորականները միայն հայեր չեն եղել: Մեր մեջբերած աղբյուրներից Ասորիկը եկվորների ազդեցությունը չի նշում, Վարդանը նույնպես: Միայն՝ սակս ուղղափառութեան, որը իր հասկացողությամբ միայն միաբնակներն են: Միայն Գանձակեցին պարզ հիշատակում է՝ «զամենայն կրօնավորս և քառանայն հայոց», բայց և վերջում նշում է, որ նրանց անվանում էին «նոռումոց երէց», այդ պատճառով էլ Շիրակում նրանց հիմնարկած վանքը կոչվեց «Նոռումոցի վանք»:

Դավանաբանական հողի վրա նման հալածանքներ Բյուզանդիայում եղել են հաճախակի և ավելի ուշ շրջաններում ևս: Այսպիսի մի դեպքի մասին հիշատակում է Վարդանը 1186 թվականի դեպքերի նկարագրության մեջ, ուր մեր այս հարցադրման վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն կա.

«Իսկ ի վերայ Յուևաց քաղաքեանց փսիկն օր և Սանակ, և յարոյց հալաճանս և շարշարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղտեղ նոցա. վասն օրոյ զօէ առ նա աղերսանս պատերազմ Գրիգոր խաղաղանայ բնդ ժողովողեանն Աստուծայ. և ոչ յուս և մա, այլ զյուզվս դարձոյց ի կրօնս իւր, և զայլս հալածականս օրաւ օր կային երեւ հպիսկոպոսի արքոս և հազար և վեց հաւիւր քառանայն»¹²:

Այս հատվածի մեջ հետաքրքիր է, որ հալածականները անվանվել են հայադավան ազգեր, որը աներկմիտ պիտի թարգմանել միաբնակ ազգերու: Այս մտքին ոճանդակում է և հալածականների թվի մասին հայտնածը՝ երեք եպիսկոպոսական Աթոռներ և 1600 քահանաներ: Կրոնական տեսակետից նույնադավան համայնքները կամ անհատները ենթարկվում էին դավանակից հոգևոր իշխանությանը՝ անկախ ազգային սլատկանելությունից, որը միջնադարի պայմաններում առաջնակարգ տեղ չէր զբաղում:

Բանասիրական աշխատությունների մեջ փախստականները սովորաբար հայ հոգևորականներ են համարվել¹³, բայց ավելի ստույգ և ընդունելի ենք համարում Ալիշանի կարծիքը, որը գրում է.

«Ի գալ Յունաց և Հայոց ումանց հալածելոց ի կայսերաց Ռիզանդիոյ՝ յառաջին կես օրարու...»¹⁴:

Եկվորների ազդեցությունը պարզելու համար կարող է որոշ նշանակություն ունենալ նրանց անձնանունները: Բայց հայտնի է, որ հոգևոր դասի մեջ տարածված անձնանունների մեծ մասը կրոնական գրքերում ավանդված անուններն են: Եթե այդպիսիների մեծ մասը դարերի ընթացքում Հայաստանի հողի վրա հայացի և հայահնչյուն ձև են ստացել, ապա բյուզանդական երկրներում ապրող նույնիսկ հայերի մոտ պահպանվել են հունական ձևով, մասնավորապես, անկախ դավանաբանական վեճերից, քաղկեդոնական ուղղության հաստատումից առաջ եղած եկեղեցու հայերը միշտ էլ պահպանել են հայերի մոտ իրենց հեղինակությունն ու հմայքը նաև բուն Հայաստանում:

Այնուամենայնիվ եկվորների անձնանուններին անդրադառնալն անհրաժեշտ է:

Հայաստան ապավինած հոգևորականների կամրջածորի 40 հոգուց բաղկացած խմբի միայն մեկի՝ նրանց առաջնորդ Հովհաննեսի անունն է հիշատակում Ասորիկը, մյուս պատմագիրները ոչ մի անուն չեն հիշատակում:

Ոսկեփորիկի գրությունը Հովհաննեսից բացի հիշատակում է նրա «հարազատի» (իմա՝ եղբոր) Պողիկարպոսի անունը: Եթե Հովհաննեսը փախստական խմբի ղեկավարն ու Արշարունիքում կամրջածորի հիմնադիրն ու ծաղկեցնողն է, որի վանականների թիվը կազմում էր 300 հոգի, ապա Պողիկարպոսը, որը հաջորդեց իր եղբորը, դարձավ հայ եկե-

¹³ Կոստանեանց, Հայոց վանքերը, էջ 43, 1886 թ., Մոսկվա:

¹² 2. Ոսկեան, Գուգարքի վանքերը, էջ 92—93, և ուրիշներ:

¹⁴ Ալիշան, «Այրարատ», էջ 58:

¹² Հայաստան պատմություն, էջ 133—134.

ղեցու հնդինականվոր վարդապետներից մեկը. նա մասնակցեց Անիի եկեղեցական ժողովին՝ զահրենկեց անելու համար վահան կաթողիկոսին՝ 966 թվականին: Մի երրորդ անուն էլ պահպանել է Սանահնի «Քոթուկը», նույնպես Պոդիկարպոս, որը ըստ այդ հիշատակարանի՝ «...սկիզբն առաւ վանիցս շինուրեան»¹⁵:

Այսպիսով, հայածական հոգեորականները միայն երեք անուն է պահպանվել աղբյուրներում՝ Հովհաննես և երկու Պոդիկարպոսներ, բոլորն էլ Կամբջաձորի խմբից:

Արդ, կարող է արդյոք Հաղրատավանքում կանգնեցրած խաչքարը եկվոր վարդապետների այս խմբի հիշատակին լինել: Մերձեցնող հանգամանքը եկվորների և արձանագրության մեջ հիշատակված անունների քանակի մոտիկությունն է՝ մոտավորապես ըստառուն: Բայց այդ խմբի այն երեք անունները, որ հնար եղավ գտնել աղբյուրներում, բացակայում են արձանագրության մեջ: Եթե ենթադրենք, որ դրանք եղել են ջարդոտված տեղերում, ապա զոնե դրանց առաջնորդ Հովհաննեսի անունը պիտի լիներ ցանկի առաջին տեղում, իսկ այնտեղ Դովնետիտս անունն է: Կարելի է ենթադրել, որ պատմահանի վրայի մեր լրացված մասում է եղել Հովհաննեսի անունը՝ հատկապես նշված լինելու համար, բայց դա կմնա չհիմնավորված ենթադրություն միայն:

Նախորդ էջերում պարզեցինք, որ Կամբջաձորի խումբը միակը չէր, որ ապաստանել էր Հայաստանում 10-րդ դարի առաջին կեսում: Ապա տեսանք, որ ըստ վարդանի հաղորդման նման մի մեծ հայածանք էլ միաբնակների նկատմամբ տեղի է ունեցել 1186 թվականին, որի ընթացքում հայածանքի են ենթարկվել 1600 հոգեորականներ, և որ Բյուզանդիայում նման հայածանքներ կրկնվել են պարբերաբար: Այդ իսկ պատճառով էլ, նրկատի ունենալով նորահայտ արձանագրության մեջ հիշատակված անձանունների հունական ձևեր, համարում ենք անկասկած, որ այնտեղ հիշատակված են Հայաստանում ապաստան գտած մի այնպիսի խումբ եկվոր հոգեորականներ, որոնք տեղավորվել են զլխավորապես Հաղրատավանքում և նրա մոտակա վայրերում:

Այս նորահայտ արձանագրությունը հավաստում է մեր պատմագրերի հաղորդածները՝ բյուզանդական պետական հայածանքներից Հայաստան ապավինած հոգեորականների մասին հաղորդած տեղեկությունները: Հաստատում է, որ հայածանքի հիմքում ընկած է եղել ոչ թե ազգային, այլ դավանաբանական խնդիրը: Որ Հայաստան ապավինածները ոչ միայն հայեր են եղել, այլև հույներ: Որ շնայած Բյուզանդիայում քաղկեդոնականության պետական տիրապետող հանգամանքին, նրա զոնե արեելյան մարզերում միաբնակները զգալի թիվ են կազմել, որոնց մեջ և հույներ:

¹⁵ Ս. Ջալալյան, Մանագարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 48, 1842 թ.: Տիֆլիս:





ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հայ արվեստի և մշակույթի շաքաթ Մոսկվայում.— Հունիսի 1-ից մինչև 7-ը Մոսկվայում տեղի ունեցավ հայ արվեստի և մշակույթի շաքաթ՝ Եվրոպա ճյուղի տեղի ունեցող 50-րդ տարեդարձին։ Այդ առիթով Մոսկվայում այդպիսի շաքաթներ և՛ ունենալու Սովետական Միության թուր 15 հանրապետությունները։ Հայաստանի շաքաթը հանդիսացավ առաջինը։

Մեկ շաքաթ շարունակ Հայաստանի գործարանային ակումբներում, համերգային դահլիճներում, ուսումնական հաստատություններում, հասարակական այլ վայրերում հնչում էր Հայաստանի երգն ու երաժշտությունը, ցուցադրվում կրակոտ պարերը, հայ կերպարվեստագետների աշխատանքները, հայկական կինոնկարներ, հանդես էին գալիս գրողները, գիտնականները, մշակույթի գործիչները։

Շաքաթը եզրափակվեց հայ արվեստի վարպետների կողմից տրված ճոխ համերգով, որը տեղի ունեցավ Կրեմլի համագումարների պալատում՝ Մոսկվայի հասարակության և կառավարության անդամների ներկայությամբ։

Երկրաբանների միջազգային համաժողով.—Հունիսի սկզբներին Երևանում տեղի ունեցավ երկրաբանների միջազգային համաժողով, որը տևեց մեկ շաքաթ։ Համաժողովին մասնակցում էին 18 երկրների գիտնականներ, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելգիայի, ՍՍՀՄ-ի Հայաստանի և այլ երկրների ակադեմիկոս երկրաբաններ։

Համաժողովը քննության առավ երկրաբանական գիտության պատմության հետ կապված հարցեր և իբրև աշխարհի՝ առաջին համաժողովն էր՝ հրավիրված Երկրաբանների միջազգային միության կողմից։ Ժողովը կրում էր նաև կազմակերպական բնույթ, որով հիմք էր դրվում երկրաբանության պատմության ուսումնասիրման մշտական հանձնաժողովին։

Համաժողովում կարդացվեցին ափելյ ջան 20 գեկուցումներ՝ երկրաբանական գիտության զարգացման պատմության վերաբերյալ։ Առանձին գեկուցումներով հանդես եկան Հայաստանի երկրաբանները։ Համա-

ժողովի մասնակիցներին ջերմորեն ուղևունցեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համարաձեմյանը։

Համաժողովից հետո երկրաբանները այցելեցին Հայաստանի մի շարք պատմական վայրերը, այդ թվում նաև ս. Էջմիածին, ուր հրաճք ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

Անգլիացի գիտնականը Հայաստանի մասին.—Լրկվաճում տեղի ունեցած երկրաբանության պատմության՝ հարցերից Եվրոպա միջազգային համաժողովին, ի թիվ շատերի, մասնակցում էր նաև անգլիացի հայտնի ճեղքաբան-երկրաբան, պրոֆ. Վ. Այլուր։ Համաժողովից հետո «Երևանում Երևան» թերթի թղթակիցը հարցազրույց է ունեցել պրոֆեսորի հետ՝ տալով նրան, ի միջի այլոց, հետևյալ հարցումը.

— Կերչեոս Անգլիայում լույս է տեսել «Փոքրիկ Երու ինգլիզ էնայնյուպեդիա»-ը։ Այդ համարագիտաբանում «Արմենիա» բառի դիմաց տրված են կցկրտուր և աղավաղված տեղեկություններ Հայաստանի մասին։ Դուք տեղյա՞կ եք, արդյոք, այդ մասին։

Պրոֆեսորը տվել է հետևյալ պատասխանը.

— Ես դեռևս հանգամանորեն չեմ ծանոթացել այդ հանրագիտարանին, քայց գիտեմ, որ Հայաստանին վերաբերող հոդվածը պատկերացում չի տալիս ձեր ժողովրդի աճյալի և ներկայի մասին։ Հոդվածը, ըստ երևույթի, գրված է հայ ժողովրդի պատմությանը և արդի Հայաստանին քողովով անտեղյակ մարդու կողմից։ Լոնդոն վերադառնալուց հետո ես անպայման զրույց կունենամ հրատարակիչների հետ և անհրաժեշտության դեպքում հանդես կգամ մամուլում ընդդեմ այս աղավաղումների։

Հայաստանի ընդերքի ուսումնասիրությունը.—Հայաստանի երկրաբանները անխոնջ կերպով շարունակում են երկրի ընդերքի ուսումնասիրությունները՝ որոնելով հանածոներ ու վառելանյութեր։ Ներկայիս այդ շնորհալի աշխատանքին են նվիրված շուրջ 150 երկրաբանական տարբեր արշավախմբեր Հայաստանի տարբեր վայրերում։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանը հարուստ է պղնձի, մսիդոնի, երկաթի, ոսկու, կապարի և ցինկի պաշարներով: Հափանի և Ալավերդու շրջաններում հայտնաբերվել են պղնձահանքերի նոր երակներ: Երկաթի հանքեր էլ հայտնաբերվել Արտվանի (Կոտայք) և Հրազդանի (Ախտա) շրջաններում: Արդյունաբերական մշակման են հանձնված Ջողի (Բաղարզեխի շրջան) ոսկու հանքերը: Տիտան կոչվող խիստ արժեքավոր մետաղի երակներ են հայտնաբերված Ապարանի շրջանում, իսկ Վեդու և Սևանի ափերին՝ սնդիկի երակներում:

Անգույ ջանքերով շարունակվում են հսկի և գազի որոնումները Արարատյան դաշտավայրում: Արտաշատի և Հուլիսի մերյանի շրջաններում փորված հորերի խորությունը հասնում է մինչև 8500 մետրի: Ընտանով դրանց խորությունը հասցվելու է մինչև 5000 մետրի: Նախնական տվյալները վկայում են, որ այդ խորության վրա պետք է որ մանդիսյեն գազի և հսկի ստացարեն:

«Բաներ Մատենադարանի».—Լույս տեսավ «Բաների Մատենադարանի» տարեգրքի 8-րդ գիրքը: «Բաներն» ունի ճոխ բովանդակություն: Կան Ուսաքրքիր Ռոպաններ և ուսումնասիրություններ, որոնց թվում է Մ. Խորենացու պատմության ժամանակագրական համակարգի, Ա. Երիզանցու «Ժամանակագրության», Լևոն Երրորդ թագավորի Ավետարանի, Ռայ Ռնագույն տպագրությունների ժամանակագրության և այլ պատմական հարցերի վերաբերյալ:

Գրքում գետնված է տ. Նորայր եպ. Պողոտյանի (Երուսաղեմ) ուսումնասիրությունը՝ «Նորագյուտ հատված Հազար Ժարպեցու «Հայոց պատմության», ինչպես նաև Ռայտի բանաստեղծ Ա. Սնայանի հոդվածը «Թուվմա Կիլիկեցու աշխարհագրությունը» և այլ աշխատություններ:

Գրքի վերջում ընդարձակ տեղեկություններ են տրված Մատենադարանի առօրյա կյանքի և նրա աշխատակիցների գործունեության վերաբերյալ:

Հայ թատրոնի պատմության ցուցահանգչես.—Արվեստի և գրականության թանգարանի սրահներում քաղվել է հայ թատրոնի պատմությանը նվիրված ցուցահանգչես: Խնամքով ու ռոգաձությամբ հավաքված քաղմաթիվ նյութերը պայծառ լույս են սփռում հայ թատրոնի անցած փառավոր ուղու վրա՝ սկսած ամենահին ժամանակներից:

Առավել հարուստ է այն բաժինը, որը նվիրված է անցյալ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին քառամյակին: Այստեղ հերկայացված են հարուստ նյութեր Ռայ Բեմի այնպիսի կարևորումներ կայացրած գործունեության վերաբերյալ, ինչպիսիք էին Պ. Աղամյանը, Սիրանուշը, Հով. Արեւյանը, Հով. Զարիֆյանը, Օ. Անուսյանը և ուրիշներ:

Ծուցահանգչեսում մեծ տեղ է տրվում սովետաժայ թատրոնի պատմությանը, երբ մեղ մոտ թատերական արվեստը իր կատարյալ զարգացման հասավ, երբ ստեղծվեց ազգային օպերա, և թատրոնը դարձավ մաղալրդին ծառայող իսկական արվեստի օջախ:

Մեն Բանաստեղծի հիշատակին.—Եղիշև Չարենցի

ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, Ստեղծական հանված թատրոնում տեղի ունեցավ Ռեստրքի գրական մանդես, որը կազմակերպված էր քաջառասպել Երևանի, դարձանահանքերի մասնակցությամբ: Գարնակահանքը արտառանցիկ Չարենցի գործերից և երգերից մեծ բանաստեղծի տեքստերով գրված երգեր:

Լևի-լեցուն դանիլը խանդավառությամբ ընդունեց Չարենցի թոռնիկներին՝ Հասմիկին և Գոմարիկին, որոնցից առաջինը հուլիսին տրուսասանց իր գրած ոտանավորը՝ նվիրված պապիկին:

Արժեքավոր աշխատություն.—«Միտք» Ռատարակչությունը լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի դասախոս Եվգեն Միրզախանյանի արժեքավոր աշխատությունը, որը կոչվում է «Ուրվագներ Հին Հունաստանի պատմագրության»: Հայ պատմագիտության մեջ սա առաջին անգամ գործն է՝ նվիրված Հին Հունաստանին: Ծավալում այս աշխատությունը ոչ միայն կարող է ծառայել որպես ձեռնարկ ուսանողության համար, այլև ընթերցանության հետաքրքիր գիրք՝ լայն ընթերցողների համար:

Հեղինակն իր աշխատության մեջ տվել է հունական պատմագրության ընդհանուր պատկերը՝ սկսած ամենահին ժամանակներից: Հատուկ տեղ է տրված ինքնակա այն պատմիչներին, որոնց աշխատությունները տեղեկություններ են պարունակում Հայաստանի մասին: Հեղինակը ընդարձակ մեջքերումներ է անում այդ պատմիչներից և տալիս նրանց գիտական վերլուծություններ:

Գրքի վերջում տրված են սկզբնաղբյուրների և գրականության երկու ցանկեր, ինչպես նաև անձնանունների ցանկ:

Նվեր Մատենադարանին.—Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը վերջերս Լվովի մարզային սեփական արխիվից ստացավ 4 ձեռագրեր իբրև նվեր: Գրքերի վրա արված է հետևյալ մակագրությունը: «Եվգեն Ռայ և ուրախներեն ժողովուրդների անկեղծ բարեկամության»: Անցյալում ձեռագրերը պատկանել են Լվովի Ռայցի եկեղեցուն: Նրանցից երեքը հայերեն են՝ գրված Լվովում, 18-րդ դարում (երկուսը՝ «Պատարագամատուց» և մեկը՝ «Մաշտոց»), իսկ չորրորդը ձեռագիրը Ռայ եկեղեցու ժամակարգության լատիներեն բարգամությունն է՝ կատարված 1782 թվականին Վիեննայում:

Պատկերասրահ շրջանային կենտրոնում.—Հայաստանի շրջանային կենտրոններից մեկում՝ Ամասիայում, քաղվել է պետական պատկերասրահ: Այն առաջին ունի 40 նկարչական գործեր, որոնց պատկանում են մեր նշանավոր նկարիչներ Միկր Արեղյանին, Հովհ. Զարգուսյանին, Գրիգոր Խանջյանին և մյուսներին: Նկարները նվիր են Հայաստանի նկարիչների և ճարտարապետների միությունների կողմից:

Այս ձևով հիմք է դրվել կերպարվեստի շրջանային թանգարանի: Ամասիայի թանգարանը 6-րդ շրջանային թանգարանն է Հայաստանում: